Ph. Biuzandaçi eu iur patmouthean hardahoøe

Khnnouthiun M. Horenaçou aøbiurneri masin

J. Daøbašean

Daøbasean, Jarouthiun

urn:nbn:de:hbz:5:1-5546

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԻԴ. 24

Փ. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

ԵՒ

ԻՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽԱՐԳԱԽՈՂԸ

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Մ. ԽՈՐԵՆԱՑՒՈՅ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՐԵՑ

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆ



ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1898.

Փ. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

ԵՒ

ԻՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽԱՐԴԱԽՈՂԸ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԻԹ.

Փ. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

ԵՒ

ԻՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽԱՐԴԱԽՈՂԸ



ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1898.

Փ. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

ԵՒ

ԻՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽԱՐԳԱԽՈՂԸ

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՐԵՑ

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆ



ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1899.

ՆԱԽԱԲԱՆ

Մի տարի եւ հինգ ամիս է, որ մեր այս երկասիրութիւնը պարբերաբար հրատարակւում էր “Հանդէս Ամսօրեայ„ թերթում[1]: Այս ժամանակի ընթացքում Խորենացու Հայոց պատմութեան քննադատութիւնը նորանոր քայլեր է արել, որ մենք չենք կարող այստեղ կողմնակի կերպով չյիշել, քանի որ մեր համեստ աշխատանքն եւս շօշափում է Խորենացու պատմութեան արժէքը:

Չնայելով այն մահաբեր հարուածներին, որ օտարազգի անաչառ եւ հմուտ քննադատներ արդէն վաղուց տուել են Խորենացու հեղինակութեանը, այնու ամենայնիւ Հայոց “պատմահօր„ հեղինակութիւնը նոյն իսկ հայ բանասէրների շրջանում մինչեւ վերջին ժամանակներս անսասան պահպանւում էր. էլ չենք խօսում ուսումնարանների մասին, որոնց մէջ այսօր եւս թէ ազգային եւ թէ եկեղեցական պատմութիւնն աւանդւում է ըստ Խորենացու Հայոց պատմութեան: Խորենացի անունը հայ բանասէրների շրջանում եւ հայ ժողովրդի մէջ այնքան նուիրական, այնքան սուրբ էր համարւում, որ ամէն մի յարձակում Հայոց պատմահօր վերայ համարւում էր սրբապղծութիւն, մի յարձակում ճշմարտութեան եւ արդարութեան դէմ: Տարաբախտաբար շատ է այն Հայերի թիւը, որոնք իրանց պատմութեան եւ գրականութեան մասին շատ թերի գաղափար ունին: Բայց այն հայ մարդը, որը նոյն իսկ շատ հարեւանցի կերպով կարդացած կամ լսած է իր ազգային պատմութեան եւ գրականութեան մասին, նա արդէն գիտէ Խորենացու անունը, մեծ հրճուանօք եւ

[1] Տես “Հանդէս Ամսօրեայ„ 1897, Nr. 3–7, 9, 11 եւ 1898, 1, 2, 6, 7:

ազգային անապարծութեամբ յիշում է իւր ազգի "ճշմարտասէր", "հանճարեղ" եւ "բազմակողմանի կըրթուած" Հերոդոտին: Շատ բնական է ուրեմն, որ Խորենացու պատմութեան անաչառ քննադատները մերազգիների կողմից միշտ ապերախտութեան են համդիպել, փոխանակ երախտեաց: Այո, մի բանասէր, ինչպէս արժանապատիւ հայր Մեսրոպ Տէր Մովսիսեան, միաբան Ս. Էջմիածնի, անցեալ տարուայ կէսերին հրատարակելով Սոկրատէս Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւնը, իւր ընդարձակ յառաջաբանում աչքերը խփելով այն բազմաթիւ փաստերի դէմ, որ անաչառ քննադատութիւնը բերել էր Խորենացու պատմութեան անվաւերականութեան դէմ, յայտարարում էր, որ չնայելով քննադատների բոլոր ջանքերին՝ Խորենացին է եւ կը մնայ Ե. դարու մատենագիր, աշակերտ Ս. Սահակի եւ Մեսրոպի: Արժանապատիւ հայր Մեսրոպի այս եզրակացութիւնն աննման ոգեւորութեամբ ողջունեց պ. Ստ. Մալխասեանց, որն իւր քննադատական յօդուածում, որ գրեց հայր Մեսրոպի վերոյիշեալ գործի առթիւ, ասում էր. "Այստեղ նա (հայր Մեսրոպը) անկասկածելի կերպով ապացուցել է ...., որ Խորենացին չէ ճանաչել եւ չէ օգտուել Սոկրատի եկեղեցական պատմութիւնից, այլ Սեղբեստրոսի վարքից, բայց ոչ հայերէն թարգմանութիւններից. որ Խորենացու եւ Սեղբեստրոսի վարքի համառօտ թարգմանութեան մէջ պատահած բառացի նմանութիւնների մէջ ոչ թէ Խորենացին է օգտուել վարքից, այլ վարքի համառօտողը Խորենացուց. որ Խորենացին Մեծ Սոկրատի կրճատուելու ժամանակ այնքան կանոնական նշանակութիւն ստացած հեղինակ է եղել, որ համառօտողը խոնարհուելով նորա հեղինակութեան առաջ փոփոխում է իւր բնագիրը (Մեծ Սոկրատը) համաձայն Խորենացուն: Այս դրութիւնները, ասում ենք, անկասկածելի կերպով ապացուցել է աշխատասիրողը բազմաթիւ դրական փաստերով: Այսքանը բաւական է հերքելու պ. Կարիէրի եւ նորա հետեւողների կարծիքը եւ ոչնչացնելու (sic!) այն փաստերը, որով նա Խորենացու պատմութիւնը համարում էր 8-րդ դարի գործ... Եօթներորդ դարի վերջում Խորենացին հանրածանօթ եւ հեղինակաւոր պատմագիր է համարուած հայ գրագէտների մէջ, ուրեմն նա

չէ կարող ութներորդ եւ իններորդ դարերում գրուած լինել, ինչպէս ճգնում են ցոյց տալ մի քանի բանասէրներ: Պէտք է այսուհետեւ եօթներորդ դարից դէպ ի վեր, դէպ ի վեցերորդ եւ հինգերորդ դարերն ուղղել հեղինակութիւնները'„ (Տես “Մշակ„ 1897, Սեպտ. 27, Nr. 113):

Սակայն պ. Ստ. Մալխասեանցի մխիթարութիւնը շատ կարճատեւ եղաւ: Հազիւ մի ամիս անցած, հրապարակ եկաւ Խորենացու ջերմեռանդ պաշտպաններից մէկը, ջնորհունակ դպիր Գալուստ Տէր-Մկրտչեան, մի շատ ուշագրաւ յօդուածով (“Արարատ„ Սեպտ. Հոկտ. յաւելուած եր. 422–424), որի մէջ ցոյց տալով, որ Խորենացին մի ընդարձակ հատուած բառացի կերպով արտագրել է “Վարք Սեղբեստրոսի„ հայերէն թարգմանութիւնից, որ կատարուել է 678 թուականին, եզրակացնում էր. “Այսպէս ուրեմն, մեր կարծիքով, լուծւում է՝ եւ այն վերջնականապէս՝ Խորենացու Հայոց Պատմութեան ժամանակի, ուրեմն եւ վաւերականութեան խնդիրը: 678 թուից առաջ Խորենացու Հայոց Պատմութիւնը չկայ:„ Չմոռանանք ասել, որ նոյն բանասէրը մի քանի տարի առաջ իր “Արարատում„ հրատարակած յօդուածներում խօսում էր Խորենացու մասին ամենամեծ ոգեւորութեամբ, նորան համարելով այն անձը, որի մէջ մարմնացած է Հայու խելքը, ձիրքերը, տաղանդն ու հանճարը: Այս յօդուածը, ինչպէս երեւում է, ահագին տպաւորութիւն էր գործել հայր Մեսրոպի վերայ, եւ ահա հազիւ 5 ամիս անցած, հայր Մեսրոպը նորից հրապարակ դուրս եկաւ “Արարատում„ (1898 Մարտ—Ապրիլ, Յաւելուած, 165—169) մի ընդարձակ յօդուածով, որով իւր առաջուայ եզրակացութիւնը, որը պ. Ստ. Մալխասեանցը հալած իւղի տեղ էր ընդունել, վճռականապէս սխալ եւ անընդունելի էր հրատարակում: “Դեռ միայն մի քանի ամիս է անցել Սոկրատի պատմութեան հրատարակութիւնից„, գրում է հայր Մեսրոպը, “որի յառաջաբանի մէջ այնպիսի արդիւնքների էի հասել, որ համոզուած էի թէ վերջնական է լինելու. եւ ահա չնկատուած, ու-

---

1 Մենք ենք ընդգծել այս խօսքերը:

շադրութիւնից վրիպած մի փոքրիկ, աննշան հատուած, այսօր յեղաշրջել է իմ համոզմունքը եւ ես ստիպուած եմ բաժանուել իմ երկարժամանակեայ հաստատուն կարծիքից եւ միանալ նոցա հետ, որոնք վաղուց փոխել են իրենց հայեացքը մեր պատմահօր մասին: Այսօր ինձ համար էլ իրողութիւն է, որ Մովսէս Խորենացու անունով մեր ձեռքը հասած Հայոց պատմութիւնը այլեւս չէ կարող Ե-րդ դարու գործ համարուել:»

Իրաւ զարմանալի երեւոյթ: Մի հատուած միայն, որը նոյն իսկ առաջ իրան ծանօթ էր եղել, բայց իւր ուշադրութիւնից վրիպել էր, կարողացել է արժանապատիւ հայր Մեսրոպի մէջ այստեսակ աճագին, արմատական փոփոխութիւն յառաջացնել: Ըստ մեզ մենք Խորենացու պատմութեան վաւերականութեան եւ ժամանակի նկատմամբ մեծ կասկածի մէջ պէտք է մնայինք, եթէ Խորենացու դէմ խօսէր մի միայն վերոյիշեալ հատուածը, որ պ. Գ. Տէր-Մկրտչեանի եւ հայր Մեսրոպի համար Աքիլլեան յենակէտ է դարձել: Մենք կարծում ենք, որ Խորենացու պատմութեան վաւերականութեան խնդիրը վերջնականապէս կը լուծուի այդ պատմութեան բովանդակութեան քննադատութեամբ: Երբ մի առ մի ցոյց կը տրուին այն աղբիւրները, որոնցից Խորենացին օգտուել է, երբ կը բացատրուին այն շարժառիթները, որոնցից գրգռուած Խորենացին ձեռնարկել է իւր Հայոց պատմութեանը, երբ կ՚որոշուի նորա տենդենցիան, նորա անթիւ մոլորութիւնները, կեղծիքները, յեղաշրջումները յերեւան կը հանուեն, այն ժամանակ իւր բոլոր թերութիւններով մեզ պարզ կ՚երեւայ այն մարդու պատկերը, որն այսքան դարեր Հայոց գրականութեան մէջ փայլել է իբրեւ արեգակ: Այն ժամանակ նորա դարի, պատմութեան վաւերականութեան եւ արժէքի մասին այլեւս վիճաբանութիւն չէ կարող լինել:

Կարծում ենք, որ մեր համեստ աշխատանքն եւս, որը զբաղուում է Խորենացու պատմութեան մի մասի աղբիւրների քննադատութեամբ, հետաքրքրաշարժ պիտի լինի Խորենացու պատմութեամբ եւ առ հասարակ Հայոց պատմութեամբ զբաղուող հեղինակների համար: Թէ որքան այն եզրակացութիւնները, որոնց մենք հասել ենք, ճիշտ են, այդ ասելը ի հարկէ

վերապահուած է ընթերցողներին: Արդէն մեզնից առաջ ուրիշ հեղինակներ զբաղուել էին Խորենացու պատմութեան այս մասին ուսումնասիրութեամբ եւ հասել էին շատ ուղիղ եզրակացութեանց: Մենք օգտուելով այդ քննասէրների աշխատանքներից, եւ հանելով նոյնպիսի եզրակացութեանց, երբեք զանց չենք առել յիշելու, որ այդպիսի եզրակացութեանց հանելու պատիւը պատկանում է մեր նախորդներին:

Նախաբանիս վերջում քաղցր պարտաւորութիւն եմ համարում Վիեննայի Մխիթարեաններին, որոնք սիրով իմ յօդուածները հիւրընկալեցին իրենց ամսօրեայ թերթում, իմ շնորհակալութիւնը յայտնելու: Անձամբ չկարողանալով իմ յօդուածների սրբագրութիւնը կատարել, գործիս մէջ սպրդած են մի քանի տպագրական թեթեւ սխալներ, որոնց համար ստիպուած եմ ընթերցողների ներողամտութիւնը խնդրելու:

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆ

ՓԱՒՍՏՈՍ ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

ԵՒ ԻՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽԱՐԴԱԽՈՂԸ

Ինչպէս յայտնի է, սուրբ Տրդատի յաջորդների պատմութիւնը մինչեւ Արշակունեաց թագաւորութեան բաժանումն Արշակ եւ Խոսրով թագաւորների ժամանակ մեզ աւանդել են երկու տոհմային պատմագիրներ. Փաւստոս Բիւզանդացի եւ Մովսէս Խորենացի. (Խոր. Պատմ. Հայոց Մեծաց, Գ, բ—խբ)։ Ի՞նչպէս մարդ ապշում է, երբ այս երկու պատմագիրներին համեմատում է միմեանց հետ. մի կողմից բառացի ակնյայտնի նմանութիւններ, իսկ միւս կողմից հսկայական տարբերութիւններ, անհամաձայնութիւններ եւ հակասութիւններ։ Պէտք է փորձել այս երկու տոհմային պատմագիրներին միմեանց հետ համեմատելով, նոցա մէջ եղած առընչութիւնը հաստատելու, եւ բացատրելու նոցա մէջ գոյութիւն ունեցող

հակառութեանց պատճառները։ Առանց այս աշխատանքի անկարելի է Տրդատի եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչի յաջորդների պատմութիւնը գրել։ Հայ բանասէրները մինչեւ այսօր խուսափել են այս գործից, թերեւս վախենալով այն ծանրակշիռ հետեւանքներից, որոնք այս համեմատութիւնից պէտք է առաջանային[1]։ Մենք այսօր ձեռնարկելով մանաւորապէս այս գործին, կը խօսինք Ա. Խոսրով Կոտակի եւ Տիրանի թագաւորութեան, սուրբ Վրթանիսի եւ սուրբ Յուսկան կաթողիկոսութեան մասին. (Փաւստոս, Գ, գ—իա = Խորենացի, Գ, ը—ժէ), Բ. Արշակի եւ Պապի թագաւորութեան եւ սուրբ Ներսէսի կաթողիկոսութեան մասին. (Փաւստոս, Դ, ա—Ե, լդ = Խորենացի, Գ, ժը—լթ.) եւ Գ. Պապի եւ սուրբ Ներսէսի յաջորդների մասին. (Փաւստոս, Ե, լդ—Զ, ժզ = Խորենացի, Գ, խ—խբ։)

Ա.

Խօսելով Խոսրով Կոտակի եւ Տիրանի թագաւորութեան մասին, մենք չենք կարող անուշադիր թողնել այն ժամանակագրական տարբերութիւնները, որոնք նկատւում են Մովսէս Խորենացու եւ Փաւստոսի մէջ։ Փաւստոսն իսկապէս ժամանակագրութիւն չունի։ Նա չէ ասում, թէ այս թագաւորը կամ այս կաթողիկոսն երբ գահ բարձրացաւ եւ քանի տարի իւր իշխանութիւնը վարեց։ Ընդհակառակն Մովսէս

[1] Բաց ի Հ. Գաթըրճեանից. Տիեզ. Պատմ. Վիեննա 1852, Բ. էջ 488, 497 եւ պատմութեան ընթացքում։

Խորենացին միշտ որոշում է Հայոց թագաւորների եւ կաթողիկոսների ինչպէս գահակալութեան, նոյնպէս էլ իշխանութեան ժամանակը։ Նա միշտ յիշում է, թէ այս Հայոց թագաւորը Հռոմայեցւոց կայսեր իշխանութեան ո՛ր տարին գահ բարձրացաւ եւ քանի տարի գահակալեց։ Նոյնպէս Հայոց կաթողիկոսների մասին միշտ յիշում է, թէ նոքա իրենց ժամանակակից Հայոց թագաւորի ո՛ր տարին գահ բարձրացան, քանի տարի վարեցին իրենց իշխանութիւնն եւ երբ մեռան։ Ժամանակագրական այս տեսակ ճշտապահութիւնը զարմանալի չէ մի պատմագրի կողմից, որն ասում է. “Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան.„ (Խոր. Բ, ձբ)։ Ի հարկէ բոլորովին ուրիշ հարց է, թէ արդեօք Խորենացու այսպիսի մանրամասն եւ խնամքով կազմած ժամանակագրութիւնն ինքն ըստ ինքեան ճշմարի՞տ է թէ ոչ։ Ահա՛ լինել թէ չլինելու հարցը։

Արդ. Խորենացին Բ, ձգ ասում է, որ ինքը “մանրախուզիւ քննեալ„ գտել է Տրդատի թագաւորելն “յերրորդ ամի Դիոկղետիանոսի„. իսկ Բ, ղբ Տրդատի մահը պատմելով, ասում է, որ նա “թագաւորեաց ամս յիսուն եւ վեց„։ Որովհետեւ Դիոկղ՚ետիանոս կայսր էր 284—305 թուականը, ուստի, ըստ Խորենացու՝ Տրդատ պէտք է թագաւորած լինի 287—343 թուականը։ Խոր. Գ, ը Տրդատի որդու եւ յաջորդի՝ Խոսրով Կոտակի համար ասում է, որ նա թագաւորել է (“յերկրորդ ամի Որմզդի

Պարսից արքայի[1] եւ) «յութերորդ ամի ինքնակալութեան Կոստանդեայ» եւ Գ, Ժ Նորան տալիս է 9ամեայ թագաւորութիւն։ Որովհետեւ Կոստանդիոսը, Կոստանդիանոս Մեծի որդին, կայսր էր 337—61 թուականը, ուստի ըստ Խորենացու՝ Խոսրով Կոտակը թագաւորած պէտք է լինի 345—54 թուականը։ Ինչպէս այս հաշուից պարզ երեւում է, Խորենացին Տրդատի մահից մինչեւ Խոսրովի գահ բարձրանալը 2 կամ 3ամեայ դատարկ ժամանակամիջոց (interregnum) է սահմանում (343—45)։ Այս անիշխանութեան ժամանակամիջոցի (տես Խորենացի, Գ, բ—է) մասին յետոյ մանրամասնօրէն պէտք է խօսինք։ Խորեն. Գ, Ժա Խոսրովի որդուն եւ յաջորդին, Տիրանին թագաւորեցնում է «յեւթն եւ ի տասներորդի ամի ինքնակալութեան Կոստանդեայ» եւ Գ, ԺԷ Նորան տալիս է 11ամեայ թագաւորութիւն, ուրեմն 354—65։ Սորանով Մ. Խորենացին վարւում է միանգամայն հետեւողաբար (consequent) եւ գիտակցութեամբ։ Եւ իրաւ նա Գ, ԺԳ—ԺԷ Տիրանին ժամանակակից է ներկայացնում Յուլիանոս Ուրացողին (361—63)։

Այժմ տեսնենք Խորենացու ժամանակագրութիւնը Հայոց կաթողիկոսների համար։ Նա

[1] Որովհետեւ Որմիզդը թագաւորում էր 303–309 թուականը, ուստի ոչ նորա թագաւորութեան 2րդ տարին (= 305) համապատասխան է Կոստանդիոսի 8րդ տարուն (= 345), եւ ոչ էլ Խոսրովը կարող է 305 թուին թագաւորած լինել։ Դորա համար մենք մեր զառամեալ պատմաբանի այս անհնարին խօսքերը փակագծերի մէջ դրինք։

Բ, ղա սուրբ Գրիգոր Լուսաւորչի մասին ասում է. «Վասն որոյ յիսկզբան քահանայանալոյ նորա, յեւթն եւ ի տասներորդ ամին թագաւորութեանն Տրդատայ մինչեւ ցքառասուն եւ վեց ամի նորին... համարեալ թուին ամք երեսուն», որից հետեւում է, որ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը կաթողիկոս էր 304—34 թիւը: Այս գլխում Խորենացին սուրբ Արիստակէսին, սուրբ Գրիգորի որդուն եւ յաջորդին, տալիս է 7ամեայ կաթողիկոսութիւն, «ի քառասուն եւ յեւթներորդ ամին Տրդատայ մինչեւ ցյիսուն եւ երրորդ ամի նորին», այսինքն 334—40 թուականը: Իսկ սուրբ Վրթանէսին կաթողիկոսացնում է «ի յիսուն եւ ի չորրորդ ամին Տրդատայ եւ անդր» եւ Գ, ժա ասում է. «յետ ընդ հնգետասան ամաց եպիսկոպոսութեան մեծին Վրթանայ, փոխի յաշխարհէս յերրորդ ամի Տիրանայ»: Ի՞նչպէս ճիշդ, գիտակցաբար եւ հետեւողաբար է կազմել Մ. Խորենացին իւր հաշիւը, ըստ որում Վրթանէսը կաթողիկոսացած պէտք է լինի 341—56 թուականը: Այս գլխում Խորենացին սուրբ Յուսիկանը կաթողիկոսացնում է «ի չորրորդ ամի Տիրանայ.» եւ Գ, ժգ նորան տալիս է 6ամեայ կաթողիկոսութիւն, ուրեմն 357—63, որով եւ սուրբ Յուսիկը Յուլիանոսին ժամանակակից է դուրս գալիս: Այս վերջին գլխում յիրաւի Մ. Խորենացի պատմում է սուրբ Յուսիկան նահատակութիւնը Յուլիանոսի Ուրացողի դիւանկար պատկերը խորտակելու պատճառաւ: Այս բոլորից անկաս-

կածելի կերպով հետեւում է, որ Խորենացին մեզ Հայոց կաթողիկոսների համար մի ժամանակագրութիւն է ներկայացնում, որ կազմած է կատարեալ գիտակցութեամբ եւ միանգամայն ազատ է ներքին հակասութիւններից։

Այժմ գանք գլխաւոր հարցին եւ տեսնենք, արդեօք ուղի՞ղ է Մ. Խորենացու տուած այս ժամանակագրութիւնը, թէ ոչ։ Բարեբախտաբար սուրբ Տրդատի յաջորդների մասին բացի տոհմային պատմագիրներից (Փաւստոսից եւ Խորենացուց) խօսում են նաեւ արտաքին ճշմարտախօս պատմագիրներ, որոց համեմատութեամբ մեզ միջոց է տրւում, ստուգել տոհմային պատմագիրների պատմածը։

Այս նկատմամբ մեզ համար անգնահատելի են Ամմիանոս Մարցելլինոս հռչակաւոր հռոմէական պատմագրի տուած հետեւեալ տեղեկութիւնները։ Սա պատմում է, որ „երբ 360 թուին Կոստանդիոս կայսրը Արեւելք եկաւ, որպէս զի անձամբ սկսէ Պարսից դէմ պատերազմը եւ Կապպադովկիոյ Կեսարիա քաղաքը հասաւ, իւր մօտ հրաւիրելով Արշակ Հայոց թագաւորին եւ մեծ պատուով ընդունելով, նախազգուշացրեց եւ յորդորեց, որպէս զի շարունակէ մնալ մեզ բարեկամ եւ հաւատարիմ։ Որովհետեւ լսում էր, թէ ինչպէս յաճախ նորան Պարսից թագաւորը փորձում էր խաբելով, սպառնալիքներով եւ նենգութեամբ, որպէս զի նա Հռոմայեցւոց դաշնակցութիւնը թողու եւ իւր դիտաւորութեանց

համակերպուի[1]: Իսկ Նա շատ անգամ երդմամբ հաստատելով, որ աւելի պատրաստ կը լինի կեանքից զրկուելու՝ քան իւր միտքը փոխելու, եւ վարձատրուելով այն իշխանների հետ միասին, որոնց իւր հետ բերել էր, դարձաւ իւր թագաւորութեան երկիրը, չվստահանալով այնուհետեւ իւր խոստմանցը մասամբ իսկ դրժելու.

---

1 Այստեղ Ամմիանոսի խօսքը Պարսից եւ Հռոմայեցւոց մէջ ծագած 25ամեայ (338–63) պատերազմի մասին է, որը վերջին տարիները (358–63) խիստ սուր կերպարանք առաւ: 358ին Շապուհ Կոստանդիոս կայսեր ուղղեց մի թուղթ, որի մէջ ի միջի այլոց ասում էր. «պէտք է Հայաստանը եւ Միջագետքը նորից ստանամ, որը իմ պապից նենգութեամբ յափշտակեցիք» (Ամմիանոս ԺԷ 5, 6): Երբ Պարսից եւ Հռոմայեցւոց այս բանակցութիւնները ի զուր անցան, Կոստանդիոս կայսրը, ինչպէս վերեւ յիշուեցաւ, 360 թուին Արեւելք եկաւ, անձամբ ստանձնելու իւր զօրքերի հրամանատարութիւնը: Ահա այս ժամանակամիջոցին էր, որ ո՛չ միայն Հռոմայեցւոց կայսրն էր աշխատում Հայոց Արշակ թագաւորին իրեն հետ կապուած պահել, ինչպէս ասում է Ամմիանոս, այլ եւ Շապուհ ամէն ջանք գործ էր դնում Արշակին գրաւել իւր կողմը, ինչպէս ասում է Փաւստոս, Դ. իա. «խօսէր հասակ ողոքով (Շապուհ թագաւորն Պարսից), եւ աղաչէր զԱրշակ արքայ Հայոց՝ սիրով հաշտ եւ միաբան կալ ընդ նմա յուխտի խաղաղութեան: Վասն զի ի մեծ վտանգ չասպի էր թագաւորն Պարսից սաստ սաստ յանդգագար պատերազմացն ի թագաւորաց անտի Յունաց: Իսկ Արշակ արքայ Հայոց ոչինչ կամէր անսալ նմա, եւ ոչ հուպ ինչ լինել ի նա, եւ յղեալ (ձեռ՝ յղել) դեսպանս եւ ոչինչ տալ պատարագս ընծայից, եւ ոչ հուպ ինչ եւ մօտ լինել ի նա բնաւին. եւ զանուանն անգամ նոցա ոչ կամէր լսել: Իսկ թագաւորն Պարսից սաստ սաստ յղէր պատարագս առ նա, առաքէր դեսպանս: Եւ ինքն հապճեպ կռուէր ընդ թագաւորն Յունաց:» Ինչպէս Փաւստոս եւ Ամմիանոս համաձայնում եւ լրացնում են միմեանց:

նա Կոստանդիոսի հետ կապուեցաւ բարիքների բազմակողմանի կապերով, որոնց մէջ այն մանաւանդ փայլում էր, որ Ոլիմպիային, Աբլաբիոս անձնապահապետի դստերը, որն իր Կոստաս եղբօրը խօսուած էր, նորան կնութեան տուեց[1]:”

Արշակի ամուսնութիւնը Ողոմպի կամ Ողոմպիա օրիորդի հետ պատմում է նաեւ տոհմային պատմագիր Փաւստոս Բիւզանդացին, միամտաբար այս ամուսնութեանը շարժառիթ համարելով փառանձեմի ատելութիւնը դէպ ի Արշակ. մինչդեռ ըստ Ամմիանոսի՝ այս ամուսնութեան բուն շարժառիթը քաղաքական էր: “Ապա իբրեւ կինն (փառանձեմ) ի նա ոչ յանգոյց զմիտս իւր”, ասում է Փաւստոս, Դ, ժե, “առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, եւ խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն ազգաւ, զի անուն էր նորա Ողոմպի”: Բոլորովին անկախ Ամմիանոսից եւ Փաւստոսից Արշակի ամուսնութիւնն Ոլիմպիա օրիորդի հետ պատմում է նաեւ սուրբ Աթանասիոս ժամանակակից եկեղեցական մատենագիրը: Սա “ի թղթին առ միայնակեացս, պարսաւելով իսկ զԿոստանդիոս՝ ասէ. Զխոստեալն Կոստասայ զՈղոմպիա ետ բարբարոսաց, զոր նա (Կոստաս) մինչեւ ցվախճան իւր պահեաց եւ սնուցանէր զնա զի լինիցի իւր կին”[2]: Կասկած չկայ, որ սուրբ Աթանասիոսը “բարբարոսներ” ասելով, Արշակ Հայոց թագաւ-

---

1 Ամմիանոս, Rerum gestarum, l. XX. 11. 1—3:

2 Գաթըրճեան, Տիեզերական պատմութիւն, Բ 490. 3:

որին է հասկանում։ Անկասկածելի է ուրեմն, որ կոստանդիոսի ժամանակ Հայաստանում թագաւորում էր ոչ թէ Տիրանը, այլ Նորա որդին Արշակ։

Նոյնպէս անժխտելի վկայութիւններ ունինք, որ Յուլիանոս Ուրացողի ժամանակ եւս (361—63) Հայոց թագաւորն էր ոչ թէ Տիրան (եւ կաթողիկոսն էր ոչ թէ Յուսիկ), այլ Արշակ (եւ Ներսէս Մեծ)։ Առ այս մենք առաջ ենք բերում Յուլիանոս Ուրացողի արշաւանքի նկարագրութիւնը, որ մեզ տալիս է Ամմիանոս, եւ Արշակ Հայոց թագաւորի մասնակցութիւնն այդ արշաւանքին։ Նկատենք, որ Ամմիանոս այս արշաւանքի ժամանակ ուղեկցում էր անձամբ Յուլիանոսին եւ Նորա վկայութիւններն անկասկածելի են։ Սա պատմելով այն ընդունելութիւնը, որ Հռոմայեցւոց հպարտ կայսրը Յուլիանոս՝ արեւելեան մանր թագաւորներին եւ իշխաններին 362/63 ձմեռը Անտիոքումն ցոյց տուեց, ասում է, որ Նա միայն Արշակ Հայոց թագաւորի ուժերը գնահատեց իւր առաջիկայ պատերազմի համար։ “Միայն Արշակին, Հայոց թագաւորին յորդորում էր որ ստուար գունդ պատրաստէ եւ սպասէ իւր հրամաններին, որը շուտով պիտի յայտնէր թէ երբ եւ ուր պէտք է դիմէ[1]։„ Ամմիանոսի պատմութիւնը լրացնում է Սոզոմենոս եկեղեցական պատմագիրը, առաջ բերելով այն սպառնալից նամակն, որը աստուած-

[1] Ամմիանոս Մարց., Rerum gestarum, l. XXIII, 2, 2.

Ներքին սրտին ամբարտաւան Յուլիանոս գրեց Արշակ Հայոց թագաւորին,[1] անուանելով նորան «Արշակ նախարար Հայոց»։

---

[1] Տես այս նամակը [illegible] Պատմ., Բ. 490. 1։ Այս հարազատութեան [illegible] է։ [illegible] իր «Քննական» Հայոց պատմութեան մէջ Գ. 84 [illegible] քննում է [illegible], որ այս նամակին անհարազատ [illegible] է։ «Այս [illegible] հարազատութեանը [illegible] է նա, [illegible] եւ [illegible] Յուլիանոս «Արշակայ [illegible] թագաւոր անգամ կոչել չհամարձակի [illegible], այլ [illegible] մի նախարար՝ կը [illegible] թեան եւ (այլ) կը [illegible] իր [illegible] մեզ [illegible] թէ [illegible] բարբարոս եւ [illegible] եւ ամբարտաւան Յուլիանոս [illegible] եւ [illegible] Յուլիանոս ոչ թէ գրեց թուղթ, այլ [illegible] (nonnere) Արշակայ [illegible] եւ [illegible] հրամանի, [illegible] (propere cogniturus)։ [illegible] նախարարներ [illegible] ։ [illegible] թէ [illegible] Պողոսպաշեան իր «Քննական» [illegible] Յուլիանոս [illegible] Հարազատութիւնը [illegible] եւ [illegible] Յուլիանոս, որ [illegible] Հայոց [illegible] (369–70) [illegible] Հայոց թագաւորին մի [illegible]

363 թուին գարնանը Յուլիանոս թողելով Անտիոքը, արշաւեց Շապուհի դէմ: Նա անցաւ Եփրատը, եւ Խառան (Carrae) քաղաքը հասնելով՝ իր զօրքն երկու մաս բաժանեց. մի մասն ինքը վերցնելով, արշաւեց Տիգրոնի վերայ այն ճանապարհով, որ տանում էր Եփրատի ափով, Նիկեփորիոնի կամ Կալլինիկոսի եւ Կիրկեսիոնի վերայով դէպ ի Տիգրոն. իսկ երկրորդ մասը տուեց իր Պրոկոպիոս եւ Սեբաստիանոս զօրավարներին, "եւ նոցա հրամայեց որ որչափ կարելի է ընկերանան Արշակին եւ նորա հետ Կորդուաց, Մոկաց, Հեր եւ Զարեւանդ եւ այլ գաւառների միջից փութով արշաւելով՝ Ասորեստան հասնին որ հարկաւորութեան ժամանակ իրենց օգնական լինեն¹:" Ամմիանոս յետոյ վկայում է, որ Արշակ Յուլիանոսի հրամանը կատարել է:

Սակայն Հայոց թագաւորի այս դաշնակցութիւնը կորստաբեր հետեւանքներ ունենում Հայոց թագաւորի եւ Հայաստանի համար: Յուլիանոս թէպէտ Տիգրոնի առաջ Շապուհի զօրքերը խորտակում է, բայց հետեւեալ կռւում նետահար է լինում (26 յուն. 363): Յուլիանոսի յաջորդը Յովիանոս, թէպէտ քրիստոնեայ եւ բարեպաշտ, սակայն անճարի էր եւ ստիպուած

նոյ նամակ գրել, մանաւանդ որ իրան սպառնալ էին. որ Արշակը ապստամբական վերջ էր բանել, "կէս ամն կարծում ենք դրանաբերելին:" Ներմանեցի են նաեւ այն քննադատական երկրորդութիւնները, որ ա. Գարագաշեանն monuero (= յորդորել) եւ propere (= շուտով) բառերից դուրս է բերում:

¹ Ամմիանոս. Rerum gestarum, l. XXIII, 3, 5:

Շապուհի հետ կնեց այն խաղաղութեան դաշինքը, որը Հռոմայեցւոց անուանը նախատինք էր բերում, որով նա հրաժարուեցաւ անդրտիգրիսեան գաւառներից (regiones Transtigritanae), հիւսիսային Միջագետքից եւ իւր դաշնակցին, Արշակ Հայոց թագաւորին բարձի թող արաւ: Այս դաշնակցութեան պայմանները մեզ հաղորդում է Ամմիանոս ականատես պատմագիրը ցաւելով: "Նոյնպէս պահանջում էր թագաւորը (Շապուհ) յամառութեամբ իբրեւ պայման հաշտութեան, ինչպէս ինքն ասում էր, իւր կալուածքները, որոնք առաջ Մաքսիմիանոսից յափշտակուել էին, այն է հինգ անդրտիգրիսեան գաւառները. Աղձնիք (Arzanenam) Մոկք, Ծաւդէք (Zabdicena), ինչպէս եւ Հեր եւ Զարեւանդ (Rehimena) եւ Կորդուք տասն եւ հինգ ամրոցներով, որոնց թւում եւ Մծբինն ու Սնգարան...: Բայց ոչնչից աւելի կորստաբերն եւ գարշելին այն էր, որ այս դաշնադրութիւնից յետոյ Արշակին, մեր մշտական եւ հաւատարիմ դաշնակցին, Պարսից դէմ օգնութիւն չպէտք է հասցնուէր, եթէ նա պահանջէր: Սորանով ուզում էր պատժել նորան այն ասպատակութիւնների համար որը նա արաւ Քիլիկոմի կողմերում ինքնակալի հրամանով, եւ դարձեալ որ կարող լինի այնուհետեւ ամենայն ազատութեամբ արշաւել ի Հայս[1]:„

Կա՞յ արդեօք յիշատակութիւն տոհմային պատմագիրների մէջ այս աղէտալի պատերազմի

[1] Ամմիանոս, ibid. XXV, 7, 9—12.

մասին։ Առ այժմ մենք Խորենացու ցնդաբանութիւնները մի կողմ թողնենք, եւ դիմենք Փաւստոս Բիւզանդացուն։ Սա Դ, իա յիշում է Յուլիանոսի կռած վերոյիշեալ դաշինքը կէտ առ կէտ։ «Իբրեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ թագաւորացն Յունաց եւ ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ, ուխտից նամակ գրեալ եւ կնքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից։ Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. «Ետու քեզ, ասէ, զՆծբին (Մծբին = Nisibis) քաղաք, որ է յԱրուեստանի, եւ զՄիջագետս Ասորւոց, եւ մէջաշխարհին Հայոց՝ ձեռնթափ եմ, ասէ, թէ կարասցես յաղթել նոցա եւ արկանել ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա։ Արդ ի նեղ ուրեմն անկեալ թագաւորն Յունաց, եւ ի նեղին վշտի՝ զայս ձեւ օրինակի բանիցն կնքէր մուրհակ, եւ տայր թագաւորին Պարսից, եւ ապա ճողոպրէր ի նմանէ։»

Որ այստեղ յիշուած «Յունաց թագաւորը» Յովիանոսն է, դորա մասին ոչ մի կասկած չէ կարող լինել։ Ուրեմն ըստ միաբերան վկայութեան Փաւստոսի, Ամիանոսի, Աթանասիոսի եւ Սոզոմենոսի՝ Արշակ Տիրանի որդին ժամանակակից է եղել ոչ միայն Յովիանոսին եւ Յուլիանոսին, այլ եւ Կոստանդիոսին։[1] Եւ որովհետեւ Տիրան, սուրբ Յուսկան սպանողը, արդէն Յուլիանոսից շատ առաջ գերեզման էր մտել, պարզ է, որ

---

1 Գալթշմիդան եւ Մարքարտ (իւր նոր լոյս տեսած Untersuchungen über die Geschichte Erans) Արշակի գահակալութեան հաւանականութիւնը համարում են 350։

Յուսիկ կաթողիկոսը չէ եղել ժամանակակից Յուլիանոսին։ Այս բոլորից յետոյ ինչպէս կարելի է հաւատալ Խորենացուն, եւ Արշակի ու Ներսէսի փոխանակ Յուլիանոսին ժամանակակից համարել Տիրանին եւ Յուսիկանը։ Մենք դեռ յետոյ պէտք է ցոյց տանք այն անտեղութիւնները, որ Խորենացու պատմութեան այս մասը պարունակում է, որն արդէն վաղուց “Հազար եւ մի գիշեր„ հէքիաթների շարքն է դարսուած։[1]

Սորանով մենք այս ժամանակագրական հարցը դեռ սպառուած չենք համարում։ Դեռ պէտք է բացատրել, թէ ինչ շարժառիթներից դրդուած Խորենացին Տիրանին եւ սուրբ Յուսիկանը ժամանակակից է նշանակել Յուլիանոսին։ Այս կարեւոր է մանաւանդ այն պատճառաւ, որ չնայելով այն մահացու հարուածներին, որ պատմական քննադատութիւնը տուել է Խորենացու հեղինակութեանն, այսօր եւս մի շարք բանասէրներ դեռ պաշտպան են հանդիսանում նորա պատմութեան վաւերականութեանը։ Չպէտք է մոռանալ, որ երբ մի ամիս առաջ ձայն եկաւ, թէ Մարաբասի պատմութիւնը գտնուել է, “Բազմավէպը„ մեծ յաղթանակով շտապեց հրատարակել այդ լուրը, Խորենացու պատմութիւնը քննադատողներին անուանելով

1 Համեմ. նաեւ Գաթըրճեան, Տիեզերական պատմ. Բ, 497, Nöldeke, Geschichte der Sassaniden (թարգմ. “Արարատում„ 1895 սեպտ. եր. 333), Gelzer, Die Anfänge der armenischen Kirche, p. 122, 2, Գարագաշեան եւ այլք։

“խծբծողներ„։ Բայց բանից դուրս է գալիս (տես “Հանդէս Ամսօրեայ„ 1897 յունվ.), որ Տարաբասի Նորագիւտ գիրքը ծառայում է իբրեւ մի այլ զօրեղ ապացոյց Խորենացու պատմութեան անվաւերականութեան։

Արդ նախ պէտք է նկատել, որ Խորենացին ոչ մի գրաւոր աղբիւր չէր կարող գտնել, որի մէջ Տիրանն եւ սուրբ Յուսիկը ժամանակակից լինէին նշանակուած Յուլիանոսին։ Այս տեսակ անկարելիութիւն եւ անտեղութիւն ոչ մի գրաւոր աղբիւր չէր կարող պարունակել էլ չենք ասում, որ Խորենացին իւր Գ. գրքի յառաջաբանում ոչ մի աղբիւր չէ յիշում, այլ խոստանում է լոկ յիշողութեան վրայ հիմնուելով՝ Տրդատի յաջորդների պատմութիւնը պատմել։ “Որ ինչ առ մերով ժամանակաւ եղեալ կամ գտցի ինչ (?!) հնոյ„, ասում է նա իւր Մեծենասին, “ցուցեցից քեզ անսխալ (?!) երրորդ առնելով գիրս, որ ինչ յետ սրբոյն Տրդատայ մինչեւ ի սպառել Արշակունեաց ազգին ի թագաւորութենէ, եւ զաւակի սրբոյն Գրիգորի ի քահանայութենէ։„ Ի զուր կը լինէր նաեւ ասել, իբր թէ Խորենացին իւր պատմութեան այս մասը քաղած լինէր ժողովրդական աւանդութիւններից եւ այս կերպով մոլորութեան մէջ ընկած։ Ինչպէս մենք նորա ժամանակագրութեան մէջ տեսանք, ժողովրդական աւանդութեան հետք անգամ չէ պարունակուած նորա մէջ, այլ ամէն բան գիտակցութեամբ չափած եւ կշռած է։ Ուրեմն ինչի՞ց ստիպուած

Խորենացին այսպիսի անկարելի ժամանակագրութիւն է հնարում։

Մեր կարծիքով Խորենացին հետեւեալ տենդենցիայով առաջնորդուելով հնարել է այս։ Նա Փաւստոսի պատմութիւնից (Գ, ԺԲ) գիտէր սուրբ Յուսիկան սպանութիւնը Տիրան թագաւորի հրամանով։ Միւս կողմից էլ նորան արտաքին մատենագիրներից յայտնի էր Յուլիանոս ուրացող կայսեր պիտանկեր պատկեր-ներէ պատմութիւնը, որի համար բազմաթիւ քրիստոնեաներ նահատակուել էին։[1] Արդ մեր

---

[1] Այս նկատմամբ տես Hergenröther, Kirchengesch. I, 316. «Յուլիանոսի կառավարութիւնը մանաւանդ նորանով յայտնի եղաւ, որ նա աշխատում էր քրիստոնեաներին իբրեւ ապստամբներ եւ խռովարարներ հանդիսացնել։ Ինչպէս սպանելու համար կերակուրներին թոյն են խառնում, այնպէս էլ նա ջանում էր կայսերը մատուցանելի յարգանաց միացնել մի տեսակ խոստովանութիւն կեղծ աստուածների եւ նոցա երկրպագութիւնը նոյնացնել հռոմէական տէրութեան օրէնքների հետ։ Մանաւանդ այս գիծը նորա բնաւորութեան մէջ՝ չէչուել է Գրիգոր Նազիանզացին. եւ սորանով նա դարձաւ օրինակ եւ գաղափար ապագայ, երեւանց նոյնպէս «ապստամբ եւ համբերատար» տրամադրուած օրէնսդիրների համար։ Կայսեր պատկերներին պէտք է կցուէին կուռքերի պատկերներ եւ քրիստոնեաները ստիպուած էին երկուսից մէկն ընտրել՝ կամ յարգանք մատուցանել նոցա եւ այսպիսով հաւատուրաց երեւալ եւ կամ այդ մերժելով, կայսերը թշնամիներ եւ նորա մեծութեան դէմ մեղանչողներ դուրս գալ։ Ըսելի խոհական անձինք նկատեցին այդ չարամիտ խորէութիւնն եւ իրենց այս խոհականութիւնը ատաժեցին ծանր վնասներով, յաճախ կեանքից եւ ազատութիւնից զրկուելով, այն պատրուակով, իբր թէ նոքա արհամարհած լինէին կայսերը, մինչդեռ նոքա (ասում է Գրիգոր Նազիանզացի), ըստ իրականութեան ճշմարիտ կայսեր եւ կրօնի համար ծայրայեղ վտանգի էին ենթարկուում։ Սա-

զառամեալ պատմաբանը ցանկանալով ցոյց տալ, որ սուրբ Յուսիկն ոչ թէ մեռել է հասարակ մահով, այլ իբրեւ քաջ պաշտպան եկեղեցւոյ, անվեհեր զինուոր Քրիստոսի, տրորելով Յուլիանոսի դիւանկար պատկերը, նահատակուել է, սուրբ Յուսկան սպանութիւնը կապում է Յուլիանոսի պատկերների պատմութեան հետ, որով եւ Տիրանն եւ Յուսիկը ժամանակակից են դուրս եկել Յուլիանոսին։ Ահա մի նոր ապացոյց մեր զառամեալ պատմաբանի անբարեխղճութեան եւ այն ողորմելի հասկացողութեան մասին, որ նա ունի պատմութեան վերայ։

Բայց որ Խորենացին Յուսկան նահատակութեան պատմութիւնը վերցրել է Փաւստոսի վերոյիշեալ գլխից, այդ եւս կարող ենք ապացուցանել։ Մենք առաջ ենք բերում երկու պատմագիրների խօսքերն եւս, որպէս զի ընթերցողը տեսնէ նոցա մէջ տիրող ակնյայտնի նմանութիւնները։

Փաւստոս, Գ, ԺԲ։	Խորենացի, Գ, ԺԳ։
Իսկ թագաւորն Տիրան, եւ այլ մեծամեծ աւագանին նախարարացն, կամ աշխարհն ամենայն ոչինչ ըստ Աստուծոյ կամացն վարս յանձն առեալ՝ իմաստուն ինչ գնացեալ լինէին։ Քանզի զամենայն մանաւանդ թագաւորն կամ իշխանքն	Արդ հասեալ Տիրանայ [illegible], յիւրում [illegible] կամեցաւ կանգնել զպատկերն։ Զոր յափշտակեալ սրբոյն Յուսկանն, եհան ի ձեռաց արքային. եւ ընկեցեալ յերկիր, կոխեալ մանրեաց, զգացուցանելով

կային չառ անփորձ անձինք բանուեցան այդ ուսկանի մէջ, որը միանգամայն անվայել էր կայսեր բարձր աստիճանին, եւ որդէն ըստ ինքեան բաւական էր Յուլիանոսի անունն ընդ միշտ դատապարտելու։”

սպանութիւնս՝ անխտիր ի հեղուլ զարիւն արդար ի տարապարտուց գործէին եւ այլ դէպս բազումս... Վասն որոյ հանապազ ընդդիմացեալ լինէր երանելի հայրապետն Յուսիկն... հանապազ յերեսան յանդիմանութեամբ հարկանելով...: Եւ ինքն վասն ահի սաստիկ օրինացն Տեառն՝ թշնամի համարեալ թուէր որոց հանապազ անցանէին զկարգօքն Քրիստոսի, եւ հանապազ ի սմանէ սուրբ բանիւն Աստուծոյ խոցոտեալ լինէին: Եւ այս մարտ պատերազմի էր սորա հասարակ ընդ ամենեսեան յանդիմանութեան զամենայն աւուրս կենաց իւրոց: Որ իբրեւ օր մի յաւուրց տարեկան զիմաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլովք աւագանւովն մտանել յեկեղեցին. իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Չես արժանի. Հիմ գաս, մի գար ի ներքս: Վասն որոյ անդէն ի ներքս քարշէին զնա յեկեղեցւոյն. Բրածեծ եղեալ ջախջախեալ քաջահայրապետն Աստուծոյ սուրբ երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոչկոծեալ ընկեցեալ լինէր: Զոր բարձեալ պաշտօնէիցն տարան եկեղեցւոյն ի Բնարեզ բերդէն արտաքնէ՝ մեծ Ծոփաց գաւառէն, եկին բերին ի գաւառն Դարանաղեաց ի գեաղն Թորդան, եւ անդ ոչինչ յետ բազում աւուրց հանգեաւ, եւ եդաւ մօտ առ Գրիգորի եւ ընդ հօրն իւր:

գիրին խորամանկութիւն: Որում ոչինչ ունկնդիր եղեալ Տիրան, քանզի երկեաւ ի Յուլիանոսէ, զմտաւ ածելով՝ մտանել ինքեան իբր զկոխող թագաւորական պատկերի. եւ յաւելեալ ի բորբոքումն չարութեանն, զոր ունէր ընդ որդւոյ Յուսիկանն, յաղագս հանապազորդ յանդիմանութեան իւրոց յանցանաց, հրամայեաց ջայլուտիւք հարկանել յերկար, մինչ ի զանելն աւանդեաց զոգին... իսկ զմարմին որդւոյ Յուսիկանն բարձեալ տարան առ հայր իւր ի գեաղն Թորդան, որ եկաց յեպիսկոպոսութեանն ամս վեց:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, Փաւստոս Բիւզանդացու խօսքերը կարմիր թելի նման անցնում են Խորենացու այս պատմութեան միջով, ինչպէս վերեւի բառացի նմանութիւնները ցոյց տուին: Խորենացու պատմութիւնը է = Փաւստոսի պատմութեան համառօտութեանը եւ + Յուլիանոսի պատկերների կեղծիքին: Երկու կէտ եւս արժանի են բացատրութեան: Ըստ Փաւստոսի՝ վիրաւորուած Տիրանը հրամայում է սուրբ Յուսկանը ծեծել. բայց նորա ծառաները մանուկ կաթողիկոսին այնչափ են ծեծում, որ եկեղեցու պաշտօնեաները նորա մօտակայ մահը զգալով, Թորդան են տանում, ուր նա մի քանի օրից յետոյ մեռնում է սաստիկ ծեծից: Խորենացին հնարելով Յուլիանոսի պատկերի տրոբելը, Տիրանի հրամանն եւս սաստկացնում է, ծեծի հրամանը փոխում մահուան հրամանի: Երկրորդ պէտք է նկատել Խորենացու “զմարմին սրբոյ Յուսկանն բարձեալ տարան առ հայր իւր ի գիւղն Թորդան„ անգոյն նախադասութիւնը: Փաւստոսի “եղաւ մօտ առ Գրիգորի„ խօսքերը Խորենացին առանց նպատակի չէ բաց թողել: Խորեն. Բ, ղա կրկին արտադրել է այն ժողովրդական առասպելը, ըստ որում մեր առաջին բազմերախտ հայրապետը սուրբն Գրիգոր իւր հօտից միանգամայն մոռացուած անյայտութեան մէջ է մեռնում “եւ ծածկեալ ամս բազումս աստուածային իմն գոգցես տեսչութեամբ, իբրեւ զՄովսէս զայն ի հնումն (տես Երկրորդ Օրէնք, ԼԴ, 5—6), զի մի՛ ի պաշտօն առցի ի դեռա-

հաւատ բարբարոսացն ազգաց. իսկ յորժամ սերտեալ հիմնեցան հաւատք կողմանցս այսոցիկ, զկնի յետ բազում ժամանակաց յայտնեցաւ ճգնաւորի ումեմն Գառնիկ անուն կոչեցելոյ, և բերեալ եդաւ ի գեւղն Թորդան նշխարք սրբոյն Գրիգորի։" Արդ Խորենացին կամենալով այս առասպելի նշանակութիւնն աննուազ պահպանել, Փաւստոսի պատմութիւնը խարդախում է։ Այսպէս Փաւստոս Գ, Բ պատմում է, որ սուրբ Գրիգոր արդէն Վրթանիսի կաթողիկոսութիւնից առաջ թաղուած էր Թորդանում, ապա Գ, Ժա Վրթանիսի մահը պատմելով ասում է "զսուրբն Վրթանէս . . . մեծաւ լալեաց տրտմութեամբ մինչեւ ի գեւղն Թորդան ի Դարանաղեաց գաւառն յուղարկէին։ Եւ անդ առ մեծի հայրապետին Գրիգորի զորա սուրբ զոսկերսն հանգուցանէին։" Խորենացին հեռացնելով վերև յիշուած առասպելին եւ ցանկանալով ցոյց տալ, որ Վրթանիսի մահուան ժամանակ սուրբ Գրիգոր դեռ թաղուած չէր Թորդանում, Գ, Ժա ասում է. "Տարեալ (զՎրթանէս) հանգուցանէին ի գեօղն Թորդան, իբրու մարգարէական ակամբ հայեցեալ՝ որ զկնի բազում ժամանակաց եւ հօրն յայն տեղի հանգուցան նշխարք։" Այս միտքը, այսինքն թէ մեռած մարդիկ եւս, ինչպէս Վրթանիսի մարմինը, մարգարէանալ կարող են, մոլար միտք է եւ հակառակ սուրբ Գրոց։

Նոյն կեղծիքն անում է Խորենացին եւ սուրբ Յուսկան թաղման ժամանակ։ Նա "մօտ առ Գրիգորի" խօսքերը դուրս ձգելով, ուզում

է ասել, որ սուրբ Յուսկան թաղման ժամանակ եւս դեռ Լուսաւորչի նշխարները Թորդան չէին փոխադրուած:

Վերը ցոյց տուինք, որ Հայոց թագաւորների եւ կաթողիկոսների ժամանակագրութիւնը, որ մեզ տալիս է Մ. Խորենացին, ոչ միայն սուտ եւ հակապատմական, այլ եւ որոշ նպատակով հնարուած է նոյն իսկ Խորենացուց: Նաեւ մեր յօդուածի վերջում ցոյց տուինք, որ Խորենացին սուրբ Յուսկան սպանութեան պատմութիւնը վերցրել է Փաւստոսից եւ ըստ իւր ճաշակի՝ փոփոխութեանց է ենթարկել: Այժմ պէտք է քննենք Խորենացու Գ՞ գրքի բ—ժէ գլուխների աղբիւրները:

Արդ, ասացինք, որ Մ. Խորենացին սուրբ Տրդատի մահից մինչեւ Խոսրով Կոտակի գահակալութիւնը 2—3 ամեայ (343—345) անիշխանութեան ժամանակամիջոց է սահմանում: Պէտք է նկատել, որ Խորենացին այստեղ տրամաչափապէս հակասում է Փաւստոս Բիւզանդացուն, որին համեմատ (Փաւստ. Գ, գ) սուրբ Տրդատին անմիջապէս յաջորդում է իւր արժանաւոր որդին Խոսրով Կոտակ, եւ այս՝ առանց Հռոմայեցւոց կայսեր միջամտութեան: Խոսրով Կոտակի թագաւորութեան ժամանակ տեղի են ունենում Հայաստանում ներքին եւ արտաքին խռովութիւններ եւ պատերազմներ, բայց քաջ Արշակունին կարողանում է իւր անհնազանդ նախարարներին զսպել, եւ թշնամիներից իւր երկիրը պաշտպանել: Ահա այդ խռովութիւն-

ները եւ պատերազմները Ա. Իշխանն Մանաւազեան տոհմին եւ Նահապետն Որդունեաց տոհմին միմեանց դէմ կատաղի պատերազմ են սկսում: Խոսրով կոտակ եւ սուրբ Վրթանէս նոցա մօտ են ուղարկում երեւելի Ալբիանոս եպիսկոպոսին. բայց երբ ապստամբ նախարարներն Ալբիանոսին անարգանօք յետ են դարձնում, այն ժամանակ Խոսրով Թագաւորը նոցա դէմ զօրքով ուղարկում է “զՎաչէ, որդի Արտաւազդայ, զնահապետ Մամիկոնեան տոհմին՝ յազգէ սպարապետութեան Հայոց, զմեծ զօրավար զօրաց իւրոց, սատակել կորուսանել զազգն երկոսեան:„ [1] Վաչէն ճշդութեամբ կատարում է իւր Թագաւորի հրամանը, այնպէս որ “ոչ Թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորիւն եւ ոչ զմի (Փաւստ. Գ, դ):„ Բ. Երբ “Սանէսան Արշակունի„ Մազքթաց կամ Հոնաց (Ալանաց) Թագաւորը, սուրբ Գրիգորիսին նահատակելով, անհամար հրոսակներով Հայաստան է արշաւում, որպէս զի այս երկիրն աւերէ եւ կողոպտէ, Վաչէ Մամիկոնեան սպարապետն եւ իւր քաջ նիզակակիցները բարբարոսների հրոսակներին Վաղարշապատի մօտիկ գտնուող Օշական բերդի մօտ սրի են մատնում (Փաւստ. Գ, զ—է): Գ. Այս դէպքից մի տարի յետոյ Գուգարքէ Բդեաշխեաց Նահապետը դաւաճանելով իւր Թագաւորին, ձեռք է տալիս Պարսիկներին: Խոսրով Թագաւորն իւր Վաչէ սպարապետի եւ նորա նիզակակից Վահան Ամատունու

[1] Այս դէպքից առաջ Փաւստոս Գ, դ պատմել է սուրբ Վրթանիսի փախչելը Տարօնում:

օգնութեամբ՝ Բզնունեաց ծովի ափին, յաղթում է պարսիկներին, Դատաբէն բռնում եւ քարկոծում է, «եւ զազգ նորա եւ զկին եւ զորդիս գտանէր յամրոցի անդ իշխանին ըռշտունեաց՝ յանուանեալն յՈղթամար կղզւոջ. ի նաւ ելեալ յառաջ սպարապետն, անցեալ ի կղզին՝ առ հասարակ ոչ զէգ թողոյր եւ ոչ զարու: Եւ այսպէս բարձաւ ազգատոհմ նախարարութեանն այնորիկ եւ զտուն նոցա յարքունիս կալան» (Փաւստ. Գ, Ը): Դ. Սորանից յետոյ «ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց (Բակուր), որ անուանեալ կոչէր բդեաշխն. որ էր մի ի չորից, գահերէց բարձերէց տաճարին արքունի: Ետ ձեռս յարքայն պարսից, եւ մատնեաց զարքունի տունն...»: Սակայն Բակուրն եւս Խոսրովի «բարեկիր ծառաներից» յաղթուում եւ սպանուում է:

Ահա Խոսրով Կոտակի թագաւորութեան ժամանակ կատարուած բոլոր խռովութիւններն եւ պատերազմները, որ մեզ տալիս է Փաւստոսը: Փաւստոսի մօտ անիշխանութեան մասին, որ իբր թէ տեղի պէտք է ունեցած լինի Խոսրով Կոտակի գահ բարձրանալուց առաջ, ոչ մի խօսք չկայ: Իսկ վերոյիշեալ դէպքերը ոչ մի կերպ չեն ապացուցանում, որ Հայոց եւ Պարսից թագաւորութեան մէջ այդ ժամանակները պատերազմ լինէր գրգռուած: Դատաբէի եւ Բակուրի ապստամբութիւնն եւ Պարսից հետ միանալը ապացուցանում են միայն, թէ ինչպիսի ծածուկ որոգայթներ էր լարում Շապուհ եր-

կայնակեացը (310—379) Հայոց քրիստոնեայ թագաւորութեան դէմ[1], որի դէմ սակայն յայտնի պատերազմ սկսել չէր կարող. որովհետեւ Հայոց թագաւորն Հռոմայեցւոց կայսեր դաշնակիցն էր 297 թուականին կուած խաղաղութեան դաշինքից ի վեր։ Արդ այս խաղաղութեան դաշինքը տեւեց ամբողջ 40 տարի (297—337), մինչեւ Կոստանդիանոս Մեծի մահը, որից յետոյ Շապուհ մի տարի պատրաստուելով, 338 թուականին յարձակեցաւ Հռոմէական կայսրութեան սահմանների վերայ։ Ահա այս թուականին վրդովուեցաւ եւ Հայաս-

1 Ռոկկոյինիկ գարուց մնացած մի անգնահատելի յիշատակարան ցոյց է տալիս, որ Շապուհն արդէն սուրբ Տրդատի կենդանութեան ժամանակ այս տեսակ խարդախ քաղաքականութեան էր հետեւում, այսինքն աշխատում հայ նախարարներին իրենց թագաւորի դէմ ապստամբեցնել, որպէս զի քրիստոնէական կրօնը չկարողանայ հաստատուել Հայաստանում։ Հայոց նախարարների մէջ գտնւում են այնպիսիք, որոնք Շապուհի ձեռքին գործիք են դառնում, որոնց որոգայթներին եւ զոհ է գնում Տրդատ քրիստոսապաշտ թագաւորը։ "Արք ոմանք", ասած է այս յիշատակարանում, "հրամանաւ Շապհոյ խորհեցան սպանանել զՏրդատ, եւ միաբանեալ անդրէն զկռապաշտութիւնն հաստատել յաշխարհիս Հայոց . . ., մանաւանդ ազատքն Սիւնեաց կողմանցն, որք տուեալ հրամանակատարք Շապհոյ լինէին, վասն աշխարհիս իւրեանց խաղաղական մնալոյ" եւայլն։ Տես այս յիշատակարանը Հ. Սարգիսեանի մօտ, Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքը, եր. 167 եւ "Բազմավէպ" 1851. Պր. Ա. էջ 75։ Ինչպէս ամէն լաւ բան, այս յիշատակարանն եւս վերագրել են Մ. Խորենացու գրչին։ Սակայն Խորենացին այս տեսակ գեղեցիկ պատմութեանց համար ճաշակ չունի, այլ նորա ճաշակը զարգացած է միայն անտեղի առասպելների եւ գրականական պլագիատի մէջ։

տանի խաղաղութիւնը. որովհետեւ, ինչպէս ասացինք, Հայոց թագաւորը Հռոմայեցւոց կայսեր դաշնակիցն էր եւ 40ամեայ խաղաղութեան ժամանակ Շապուհ չէր կարող Հայոց թագաւորի դէմ պատերազմ սկսել, առանց Հռոմայեցւոց հետ կռած դաշն խախտելու: Սորա համար եւ Մարքուարտ (տես “Հանդէս„ 1897 Յունուար եր. 8) կատարեալ իրաւամբ Փաւստոս Գ, ժա յիշած մեծ եւ արիւնահեղ պատերազմը Հայոց եւ Պարսից մէջ, որից յետոյ շուտով մեռաւ Խոսրով կոտակը, համարում է եղած 338 թուին, երբ սկսուեցաւ Պարսից եւ Հռոմայեցւոց մէջ 25ամեայ (338—363) պատերազմը: Այս մի զօրեղ argumentum e silentio է, որ 297—337 թիւը, այսինքն մինչեւ Խոսրով կոտակի վերջին տարին, Հայաստանը Պարսից յարձակումներին չենթարկուեցաւ: Փաւստոս Գ, գ Խոսրովի թագաւորութեան մասին գրում է. “Ապա յետ այսորիկ (վերեւ պատմել է սուրբ Արիստակէսի խոստովանական մահը,) թագաւորեաց Խոսրով կոտակ, թոռն Խոսրովու, որդի քաջին եւ առաքինւոյն Տրդատայ: Յաւուրս սորա եկաց եւ եղեւ քահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ եւ եղբօրն իւրոյ, երէց որդին Գրիգորի Վրթանէս: Խաղաղութիւն եւ շինութիւն, մարդաշատութիւն եւ առողջութիւն, պտղաբերութիւն եւ աստուածաշատութիւն եւ շահեկանութիւն, եւ մեծն աստուածասէր պաշտօն ի հաճոյակատարն բարութիւն յամս յաւուրս սոցա աճեալ

բազմացաւ։» Այսպէս ուրեմն ըստ Փաւստոսի՝ ոչ միայն Տրդատի մահից յետոյ Հայաստանում ոչինչ անիշխանութիւն չէ սկսուել, այլ եւ Խոսրովի ժամանակ մինչեւ նորա վերջին տարին Հայաստան խաղաղ դրութեան մէջ է գտնուել։

Խորենացին Փաւստոսի պատմած բոլոր դէպքերը պատմում է նոյն կարգով, բայց այնպիսի տարբերութիւններով, որ մարդ միանգամայն շուարած է մնում։ Ի զուր կը լինէր, աշխատել Մ. Խորենացուն հաշտեցընել Փաւստոսի հետ. որովհետեւ ակնյայտնի նմանութեանց հետ կան նաեւ արմատական մեծ հակասութիւններ, այնպէս որ մէկի պատմածը միւսի պատմութեան հերքումն է ուղղակի։ Այս հակասութիւններից առաջինն էր, ինչպէս տեսանք, Խորենացու յիշած 2—3ամեայ անիշխանութիւնը։ Բ. Վերոյիշեալ բոլոր դէպքերը (երեք նախարարութեանց ազգահատութիւնը, սուրբ Վրթանէսի Տարօնում վտանգուիլն, սուրբ Գրիգորիսի նահատակութիւնը, Բակուր բդեշխի ապստամբութիւնը) Խորենացին կատարուած է համարում ոչ թէ Խոսրով Կոտակի թագաւորութեան ժամանակ, այլ նորա հօր Տրդատի մահանալուց յետոյ՝ անիշխանութեան ժամանակ։ Գ. Սուրբ Վրթանէս, որ ըստ Փաւստոսի՝ կաթողիկոսեց «յաւուրս» Խոսրով Կոտակի, եւ մեռաւ Տիրան թագաւորի գահակալութիւնից առաջ (Փաւստոս, գ., ժա—ժբ), ըստ Խորենացու՝ ընդհակառակն կաթողիկոսել է արդէն սուրբ Տրդատի օրով եւ Տիրանի թագաւորութեան ժամանակ եւս երեք տարի ապրելով, ապա

մեռել է (տես վերն երես 5): Եւ դ. Ըստ Խորենացու՝ Մամիկոնեան տան սպարապետութիւն եւ Մամիկոնեան սպարապետներ (Արտաւազդ, Վաչէ, Վասակ) գոյութիւն ունեցած չեն: Այս հակասութիւնները շատ նշանաւոր են եւ պէտք է սոցա վերայ լրջօրէն ուշադրութիւն դարձնել եւ ցոյց տալ, թէ ինչ պատճառներից նոքա առաջանում են. եւ պատմութեանը Փաւստոսին պէտք է հետեւէ, Խորենացուն առանց ուշադրութեան թողնելու, թէ ընդհակառակն: Սորա համար մենք համեմատենք Խորենացու պատմութիւնը Փաւստոսի պատմութեան հետ:

Փաւստոս Գ, [illegible] եւ Ը:

...[illegible] [illegible]. եւ մեծին Գրիգորի ի Գառնաձորեաց գաւառին... եւ որդւոյ Ա[illegible] որդւոյ նորա՝ յետ [illegible] [illegible] [illegible], եւ [illegible] [illegible] է [illegible] [illegible], եւ եղին զնա [illegible] [illegible] է ի Թիլն [illegible]. ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ...:

Սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց ... պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց

Խորենացի Գ, [illegible]:

Ի ժամանակի վախճանին Տրդատայ [illegible] մեծն Վրթանէս ի վկայարանին սրբոյն Յովհաննու, որ ի հօրէ նորին շինեալ ի Տարօն:[1]

Ուրնենգ գործեալ լերինն այնմիկ բնակչաց, ի սադրելոյ նախարարացն, կամեցան սպանանել. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] որպէս առ Եղիսէիւն այն ի Հնումն, կամ նորին ընքեամբ Քրիստոսի Աստուածոյ մերոյ՝ զարկուցեալ Հրեայքն,[2] անվնասանցեալ

---

1 Փաւստոս յաճախակի յիշում է, որ ինչպէս Աշտիշատի մայր եկեղեցին, այնպէս էլ Յովհաննէս Մկրտչի վկայարանն Սուրբ Գրիգորն էր շինել. օր. Գ, ժդ. "ի մեծ մարգարէանոցէն Յովհաննու, որ էր նախ շինեալ (ի Գրիգորէ) տուն աղօթից":

2 Դ. Թգրց Գիրք. Զ. 14—19 եւ Աւետարան ըստ Յովհաննու, ԺԸ. 6:

կռոցն, եւ ապա յանուն աստուածութեանն սըրբեցան, եւ եղեն տուն աղօթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք։ Մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ որոց... առաւել եւս ի ձեռն [illegible] [illegible] [illegible]... այնպէս եւ է [illegible] մարտիրոսացն...։

Դեռ [illegible] [illegible] է [illegible] ժամանակին՝ յորում ձեռն քահանայապետն [illegible] երթեալ շրջէր... որք զհնութիւն կռապաշտութեան... ունէին, ի միաբանութիւն ժողովեալք... խորհուրդ եդեալ ընդ միմեանս՝ [illegible] զքահանայապետն Աստուծոյ զՎրթանէս։ Բայց ունէին սակաւ մի խորհուրդ համարձակութեան ի կնոջէ թագաւորին, զայն գործել...։ [illegible] առ հասարակ [illegible] ի գնդին էին [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]... ամենեքեան առ հասարակ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] (Փաւստոս։ Գ, գ)։

զնայր [illegible] [illegible] է [illegible], ուր էրն [illegible] [illegible] [illegible] [illegible], ազացեալ ի վերայ աշխարհիս Հայոց, որք յանիշխանութեան¹։ [illegible]եալք, [illegible] ազգ յազգի վերայ [illegible] կոտորել զմիմեանս. ուստի եւ երեք [illegible], որ [illegible] եւ [illegible] եւ [illegible] անուանէին, ապաւեալ [illegible] ի միմեանց։

[illegible] խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց... եւ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն [illegible] [illegible] եւ միւս եւս նահապետն [illegible] [illegible]...։ [illegible] [illegible] [illegible] (Վաչէ) զերկոսուն [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] (Փաւստ. Գ, դ)։ Վասն [illegible] [illegible] [illegible] [illegible]...։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] պատանէր յամրոցի անդ իշխանին բաշտունեաց յանուանեալն յՈղթամար կղզւոջ. ի նաւ ելեալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կղզին, առ հասարակ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Եւ այսպէս [illegible] ազգատոհմ [illegible] այնորիկ։

¹ Խոր. Գ, դ Հայաստանի այս անիշխանութիւնը համեմատում է այն անիշխանութեան հետ, որ դատաւորաց ժամանակները պարբերաբար յառաջանում էր, երբ «ոչ գոյր թագաւոր Իսրայէլի, եւ այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր» (Դատաւորք, ԺԷ, 6)։

Արդ, որ այստեղ Խորենացին Փաւստոսի պատմութիւնն ամփոփում է, այդ անուրանալի է: Բաց ի բառացի նմանութիւններից՝ այդ երեւում է նաեւ նորանից, որ Խորենացու պատմութիւնն այստեղ վերին աստիճանի ձգձգուած եւ անորոշ է: Պէտք է նկատել եւ այն, որ Խորենացին, չնայելով իւր համառօտամոլութեան՝ այստեղ կրկնում է սուրբ Արիստակէսի թաղման տեղը, որը նա արդէն Բ, ղա[1] յիշել էր, եւ այս նշան է, որ Խորենացին Փաւստոսի պատմութիւնն աչքի առաջ ունենալով, ակամայ կրկնում է այն, ինչ որ առաջ արդէն պատմել է: Խորենացու պատմութեան մէջ մի հետք անգամ չկայ, որ ցոյց տար, թէ նա բաց ի Փաւստոսից՝ ուրիշ աղբիւր եւս ունեցած է իւր ձեռքին. բայց կան մեծ անտեղութիւններ: Եւ իրօք, սուրբ Վրթանէսը Տարօնում սուրբ Տրդատի մահը լսելով, ինչո՞ւ է Եկեղեաց գաւառը վազում. չէ՞ որ նա փոխանակ Թիլ աւանի՝ Վաղարշապատ պէտք է շտապէր, ուր դրուած էր Տրդատի սառն դիակը: Ո՞րն է "այն լեառն", ինչո՞ւ համար "այն լերան բնակիչները" կամենում են Վրթանէսին սպանել, ի՞նչ պատճառով երեք տոհմերը միմեանց դէմ են ելնում, եւ ի՞նչ եղանակով միմեանցից ոչնչանում են. միթէ նոցանից մէկը չկարողացա՞ւ միւսին յաղթել ոչնչացընել եւ ինքը կենդանի մնալ:

1 "Եւ պատահեալ ի ճանապարհի ի Ծոփաց գաւառին, սպան (Արքեղայոս) զնա (զԱրիստակէս) . . . եւ զմարմին երանելւոյն բարձեալ աշակերտացն, բերեն յԵկեղեաց գաւառն, հանգուցանեն ի Թիլն, յիւրում աւանին":

Արդ, սոքա անորոշութիւններ եւ մթութիւններ են, որոնց նկատմամբ մենք նոյնը պէտք է ասենք, ինչ որ Կարրիէրը Խորենացու վրաց դարձի պատմութիւնը քննելով՝ ասել է. այսինքն «այս ոճով միայն այն ատեն կը գրէ մէկն, երբ համառօտ քաղուածք կ'ընէ, եւ ոչ երբեք՝ երբ ազատ յանձնէ կը պատմէ»[1]: Այս բոլոր դէպքերը Փաւստոսի մօտ ոչ միայն պատմուած ենք գտնում նոյն կերպով, այլ եւ քաջ պատճառաբանուած. սուրբ Վրթանիսի վերայ յարձակուողները «քրմերի տոհմերն» են, որոնք ուզում են քրիստոնէական եկեղեցու հովուին սպաննել. Մանաւազեանք եւ Որդունիք անհետ են լինում ոչ թէ միմեանցից, այլ Խոսրով Կոտակի հրամանով իրենց անհնազանդութեան պատճառաւ. իսկ Բզնունիք՝ իրենց Դատաբէ նահապետի դաւաճանութեան պատճառով, նոյնպէս Խոսրով Կոտակի հրամանով: Բայց Խորենացին նպատակ ունենալով ցոյց տալ, որ Տրդատ քրիստոսապսակ արքայի մահով Հայաստանում ամէն բան տակնուվրայ է լինում եւ անիշխանութիւն է սկսում, որից ազատողը լինում է ոչ այլ ոք, եթէ ոչ «մեծ Վրթանէսը», Խոսրով Կոտակի թագաւորութեան ժամանակ կատարուած դէպքերը փոխադրում է նորա թագաւորութիւնից առաջ, երեւակայական անիշխանութեան ժամանակ (343—345), խարդախութեամբ ի մի ձուլելով նաեւ երեք տոհմերի ազգահատու-

[1] «Հանդէս Ամս.» 1893 յունիս եր. 181:

թիւնը։ Այս նպատակով եւ նա սուրբ Վրթանիսին, որն ըստ Փաւստոսի կաթողիկոսից "յաւուրս" Խոսրով Կոտակի, եւ մեռաւ Տիրանի գահ բարձրանալուց առաջ, նա կաթողիկոսացնում է Տրդատի օրով եւ գերեզման է ուղարկում Տիրանի թագաւորութեան երրորդ տարին[1], որպէս զի այսպէսով Վրթանէս հայրապետին միջոց տայ երկու անգամ հայրենիքը կորստեան վտանգից ազատելու, թագաւորեցնել տալով Խոսրովին եւ Տիրանին։

Որպէս զի անիշխանութիւնն առաւել եւս զօրեղացնէ, նա սուրբ Գրիգորիսի նահատակութիւնն[2] եւ Բակուրի ապստամբութիւնն եւս,

---

1 Տես վերն էջ 5։

2 Սուրբ Գրիգորիսի նահատակութիւնը մի սքանչելի օրինակ է Դ դարու հայ անվեհեր քարոզիչների կեանքից, որոնք աւետարանի զէնքով զինուած՝ աւետարանի լոյսը տարածեցին Կովկասեան կիսավայրենի ցեղերի մէջ, արհամարհելով կեանքի ամէն տեսակ վտանգները։ Ո՞րքան աննուրբ է մեր զառամեալ պատմութեան ճաշակը, որ այս սքանչելի պատմութիւնից (Փաւստ. Գ, Զ) մի միայն մի կեղծիք է հնարում, այն է ցոյց տալ, որ Տրդատի մահից յետոյ Հայաստանում անիշխանութիւն է սկսւում։ Որ Խորենացին այս պատմութիւնն եւս Փաւստոսից է վերցրել, այդ երեւում է նաեւ բառացի նմանութիւններից։

Փաւստոս Գ, Ե—Զ։	Խորենացի Գ, Է։
Երեց որդին (Վրթանիսի) Գրիգորիս եհաս յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից եւ Վրաց վասն հոգեկիր առաքինի [illegible], բարեհամբաւ, եւ գիտութիւնն Աստուծոյ յանձին կրելով։ Ոչ [illegible] նա, այլ ի	Տայ նոցա (արեւելեայ-հիւսիսային կողմերի բնակիչներին) եպիսկոպոս զմանուկն Գրիգորիս, զերեց որդին Վրթանայ... Որոյ երթեալ լինէր օրինակ բարի, հայրենական վարելով առաքինութեամբք. այլ [illegible] գեր ի վե-

որոնք ըստ Փաւստոսի տեղի ունեցան Խոսրով Կոտակի թագաւորութեան ժամանակ (Փաւստ. Գ, Զ

Ընթերցուածներէց եհաս յառաջին եպիսկոպոսութեան։ Երթեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգօք, առաջնոյն Գրիգորի՝ հօրն հօր-հոյն նմանեալ։ րոյ քան զհարսն, եւ պատժականաւ գոյք ընդ թագաւորութեանն։

Գրիգորի սպանութեան տեղին եւ հանգամանքներն մեր զառամեալ պատմաբանը նոյնպէս վերցրել է Փաւստոսից։

Փաւստոս։

Ապա չոկեցաւ թագաւորն (Սանէսան) եւ լուաւ բանից զօրացն իւրոց. եւ կալան զնէ ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագուց ձիոյն, եւ արձակեցին ընդ ծովեզր դաշտին Հեռակայեան ծովուն մերձ, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնեայ։ Եւ այսպէս ողանեն զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս։ Եւ

Խորենացի։

Իսկ ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, ի գաւելոյ նորին Սանատրկոյ եւ այլոց ամանց հանապազաւուր արանց Աղուանից, ողանեն զերանելին, ընթադրեալ ձիոց բարբարոսացն ի Վատնեան դաշտին, մեռանի ի Կասպիական եզերեալ ծովուն։ Զոր բարձեալ աշակերտաց նորուն բերելով ի Փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի։„

բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, եւ բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն որ անուանեալ կոչի Ամարաս։ Եւ եդին զնա առ եկեղեցեաւ։„ պէտք է նկատել, որ ինչպէս Փաւստոսի մօտ Սանէսանն իւր զօրքին լսելով Գրիգորիսին նահատակում է, նոյնպէս էլ "Սանատրուկը" Մովսէսի մօտ "հանապազաւուր արանց" լսելով, նոյնն է անում։

Աւելի բառացի նմանութիւն կայ Բակուրի պատմութեան մէջ.

Փաւստոս։

Ապստամբեաց յաշխարհէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ բդեաշխն Աղձնեաց (Բակուր).

Խորենացի։

Մեծ բդեաշխն Բակուր, որ բդեշխն Աղձնեաց իշխէր . . ., ապստամբեալ ի թագաւորութենէ Հայ-

եւ Թ), փոխադրում է «Անիշխանութեան ժամանակը» (Խոր. Գ, գ եւ դ): Խորենացու յիշած «Սանատրուկ անուն Արշակունին», որի հետ Տրդատը Գրիգորիսին «արեւելեայ հիւսիսային կողմերը», «փայտակարան» է ուղարկում, Փաւստոսի «Սանեսան Արշակունի» Մազքթաց թագաւորն է: Սուտ եւ Դ դարու եկեղեցական պատմութեանը հակառակ են Խորենացու այս խօսքերը, թէ Տրդատը «մանկութիւն աւուրցն հայելով պատանւոյն (Գրիգորիսի) անկարող զնա վարկանէր», որովհետեւ սուրբ Յուսիկն եւս մանկութեան հասակում հայրապետութեան գահը բարձրացաւ եւ այդ բանը բնաւ «պարականոն» համարուեցաւ: Հեղինակն ապրելով այնպիսի ժամանակ, երբ արդէն պարականոնութեան հարցը ծագել էր, իր դարու գաղափարները ներմուծում է Դ դարու պատմութեան մէջ: Այս տեսակ կեղծիքների պատահում ենք Խորենացու մօտ ուրիշ անգամ եւս. օրինակ՝ Գ, ԼԳ Նա Մեհրուժան գաւաճանի համար ասում է, թէ նա հրամայեց Հայոց, որ «մի՛ ոք իշխեսցէ յոյն խօսել կամ ասորերէն»: Բայց ինչպէս

[illegible] ... Որմիզդ [illegible]
... [illegible]
... եւ [illegible]
[illegible] Հայոց»:

Անկարելի է, որ այս բառացի նմանութիւնները պատահական լինին: Խորենացին այստեղ արտագրում է Փաւստոսի պատմութիւնը, աւելացնելով «Որմիզդ» անունը, որը թագաւորում էր 303—309 թ., ուստի եւ այդ ժամանակին մեռած էր:

կարող էին 367—369 թ. Հայք յունարէնից թարգմանութիւններ անել, քանի որ Մեսրոպեան նշանագրերը գտնուեցան 407 թուին, որով եւ ծնունդ առաւ հայ գրութիւնը: Կասկած չկայ ուրեմն, որ թերեւս կեղծ Կալիսթենեսի թարգմանութեամբ զբաղուած Խորենացին իւր դարու գաղափարով Դ դարու պատմութիւնը հարստացնում է:

Ահա այսպէս Խորենացին համախմբելով այն բոլոր խռովութիւններն, որոնք գտնւում են Փաւստոսի պատմութեան մէջ եւ խաբեբայութեամբ նոցա փոխադրելով իւր հնարած անիշխանութեան ժամանակը, Գ. դ հանդէս է բերում “մեծ Վրթանիսին„, որպէս զի նա Խոսրով Կոտակին թագաւորեցնել տալով, վերջ դնել տայ անիշխանութեանը: Սակայն “մեծ Վրթանիսի„ թուղթն եւ Կոստանդիոս կայսեր “խայտառակ„ պատասխանը իրանց աղբիւր ունեցած են միմիայն մեր զառամեալ պատմաբանի երեւակայութիւնն, սուտ եւ հնարովի են: Նոյնպէս սուտ եւ հակապատմական է Անտիոքոսի Կոստանդիոս կայսեր պաղատան յարգարչի “ծանր զօրքով„ Հայաստան գալն եւ արած կարգադրութիւնները: Այս “ծանր զօրքով„ Հայաստան եկող զօրապետի գործն այն է լինում, որ ինքնագլուխ՝ Հայաստանում “չորս սպարապետներ„ է վերահաստատում, մէկին հարաւ է ղրկում, միւսին հարաւ արեւելք, իսկ ինքն էլ՝ մնացած երկուսին վերցնելով, գնում է “Սանատրուկ ապստամբի„ վերայ: Բայց արի տես,

որ յամառ Սանատրուկը չէ հնազանդում Ընտիոքոսին եւ թողնելով փայտակարանը, ինքը վազում է Շապուհի մօտ: Այս տեսնելով Ընտիոքոս, վերջապէս համբերութիւնից դուրս է գալիս, «հրաման տայ առնուլ զիշխանութիւն պառակտելոցն նուաղեցուցանել, եւ իւր ժողովեալ զհարկն, առ կայսր գնայ»: Բանից դուրս է գալիս, որ այս «ծանր զօրքով» Հայաստան արշաւող հռոմայեցի սպարապետի ամենամեծ քաջագործութիւնը հարկ ժողովելն է լինում: Թող ներուի մեզ մեր զարմացեալ պատմաբանին հակաճառելու, որ Հայաստանն այդ ժամանակ թագաւորութիւն, նախարարութիւն եւ հայրապետութիւն ունէր. եւ մի հռոմայեցի զօրապետ չէր կարող այդպիսի անսահման իշխանութեամբ Հայաստանում կարգադրութիւններ անել: Հայոց զօրքի համար սպարապետ նշանակել կարող էր միմիայն Հայոց թագաւորն, եւ ոչ այլ ոք[1]:

1 Սրբոյն Վրթանիսի նամակն առ Կոստանդիոս եւ նորա պատասխանն անվաւեր են համարել Հայր Սարգիսեան, Ագաթանգեղոս եւ իւր գաղտն. եր. 250—251, Գարագաշեան, Քննական Պատմ. Գ, եր. 19: Ամենայն դէպս Մովսէս այս թուղթը գրելու ժամանակ, որի մէջ Հայք Կոստանդիոսին գրում են. «յուշ լիցի քեզ պայման ուխտի հօրն քո Կոստանդիանոսի, որ առ մերում Խոստովանողին Տրդատայ», աչքի առաջ ունէր Փաւստոս Գ, ժա, ուր ասած է, որ Կոստանդիոսն ստանալով Հայոց թուղթը, նոցա օգնեց. «մանաւանդ զի ուխտն յիշեալ դաշանցն կռելոց զերդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի եւ ի մէջ Խոստովանողին Տրդատայ եղեալ էր»: Հայր Գաթըրճեան, Տիեզերական Պատմ. Բ, 463 ասում է. «Ընտիոքոս զօրավար վերջապահաց (անուանեալ ի Խորենացւոյն յորդորիչ պաշտաման Կոստանդեայ) չէ

Բայց մենք դեռ տեսնենք, թէ Խորենացին ի՞նչ աղբիւրներից է քաղել "չորեսին սպարապետների„ պատմութիւնը, որոնց իբր թէ կարգել էր արդէն Տրդատը, (Խոր. Բ, ձե) եւ վերահաստատում է Անտիոքոսը: Արդ Փաւստոս Գ, ը, խօսում է Հայ աշխարհակալ, աշխարհատէր, բիւրաւոր եւ հազարաւոր նախարարների մասին. իսկ Գ, թ Աղձնեաց մեծ իշխան բդեշխի մասին ասում է, թէ նա "էր մի ի չորից, գահերէց բարձերէց տաճարին արքունի:„ Այս Փաւստոսի պատմութեան այս տեղի վերայ է հնարել Խորենացին Հայոց չորս սպարապետների պաշտօնները, որոնց եւ բաժանում է հետեւեալ անձանց մէջ. 1. Բագարատ ասպետ, զօրավար արեւմտեայ գնդին, 2. Միհրան առաջնորդ Վրաց եւ բդեշխ Գուգարացւոց, սպարապետ հիւսիսային զօրուն, 3. Վահան նահապետ Ամատունեաց, զօրավար արեւելեան գնդին, եւ 4. Մանաճիհր նահապետ Ռշտունեաց, սպարապետ հարաւային զօրուն: — Մամիկոնեան տան սպարապետութեան մասին ոչ մի խօսք չկայ. Վաչէ Մամիկոնեանի դերը Խորենացին սահմանափակելով՝ ընծայում է

անծանօթ արտաքին մատենագրութեան. Կոստանդիանոս յամի 326 տայ օրէնս ինչ գրելով առ Անտիոքոս,„ Անշուշտ այս Անտիոքոսն է, որին Խորենացին մեծ զօրքով Հայաստան է ուղարկում: Բայց մեծանուն հեղինակը սխալւում է Անտիոքոսի գալուստն ի Հայաստան պատմական համարելով (Յիեզ. Պատմ. Բ. 485) եւ աշխատելով Տրդատի յաջորդների ժամանակ Խորենացու եւ Փաւստոսի մէջ համաձայնութիւն գտնել, իսկ Հայոց հարկատուութեան խնդրի մասին տես վարը:

Բագարատ Բագրատունուն։ Այստեղ մենք ծանօթանում ենք Խորենացու մի երկրորդ տենդենցիայի հետ, այն է՝ Մամիկոնեան տան սպարապետների քաջագործութիւնները կամ լռութեան մատնել[1], եւ կամ նոցա դերերը, ուր միայն կարելի է, յանձնել Բագրատունիներին։ Սորանով Խորենացին յայտնապէս հակասում է ոչ միայն Փաւստոսին, այլ եւ Ագաթանգեղոսին, Ղազար Փարպեցուն եւ Եղիշէին, ըստ որոց Հայոց ժառանգական սպարապետներն եղել են ոչ թէ Բագրատունիք, այլ Մամիկոնեանք։ Փաւստոսի Գ. գ. յիշած Արտաւազդ Մամիկոնեան սպարապետին, Վաչէի հօրը, յիշում է նաեւ Ագաթանգեղոսը, ՃԻԳ. իբրեւ «զօրավար ամենայն զօրացն Հայոց մեծաց»։ Վաչէ, Վասակ, Մուշեղ, Մանուէլ Մամիկոնեան սպարապետները, որոնց քաջագործութիւնները Փաւստոսի պատմութեան մէջ շատ ընդարձակ տեղ են բռնում, Խորենացուց լռութեան են դատապարտուում։ Վաչէին եւ Մանուէլին նա ամենեւին չէ յիշում, անմահ Վասակին եւ Մուշեղին անորոշ կերպով յիշում է Գ. լէ, բայց ոչ իբրեւ Հայոց սպարապետների։ Սորանով Խորենացին, ինչպէս ա-

1 Ուրախ ենք, որ Մարքուարտ, անկախ մեզանից, նոյնն է ասում։ Նա խօսելով Մամիկոնեան տան սպարապետութեան մասին եւ համեմատելով Խորենացու վկայութիւնները Փաւստոսի վկայութեանց հետ, ասում է. «յայտնի է թէ ինչպէս Խորենացին ամէն հնարք ի գործ դնելով՝ Մամիկոնեանները Հայոց պատմութենէ կը ջնջէ.» («Հանդէս Ամս.» 1897 եր. 7)։

սացինք, հակասում է նաեւ Ե. դարու մատենագիրներին, ըստ որոց Մամիկոնեանները Հայոց ժառանգական սպարապետներն էին: Ղազար, Բ, Ը, ասում է, որ հայ նախարարները “տեղեկացեալ ճանաչէին ամենքեան՝ թէ առանց [illegible] ազգին այնորիկ (այսինքն՝ Մամիկոնեան) ոչ մի ինչ իրք եւ գործք աշխարհիս Հայոց երթեալ էին ի գլուխ.„ իսկ Վարդան սպարապետը հայ նախարարներին ասում է. “Թէ որպէս ի վերայ ընկերի բարւոյ՝ առաւել քան զանձին միշտ հոգալով՝ զանձն եդեալ է այսմ (այսինքն՝ Մամիկոնեան) տոհմի, զայն եւ ամենայն՝ դուք Հայք գիտէք ստուգութեամբ ի պատմութենէ գրոց, եւ ի լսելոյ ձեր յաւագաց:„ Վարդանից յետոյ սպարապետ է դառնում ոչ այլ ոք, բայց եթէ նորա եղբօրորդին Վահան: Բայց Խորենացին, Բագրատունեաց տան ծառայամիտ պատմագիրը, Հայոց ժառանգական սպարապետութիւնը տալիս է Բագրատունեաց եւ միեւնոյն ժամանակ չկամենալով հակասել Ե. դարու պատմագիրներին, Գ, ծա կարկտում է, իբր թէ Ե. դարում սպարապետութիւնը պատահաբար, սուրբ Սահակի միջնորդութեամբ անցած լինէր Բագրատունեաց տոհմից Մամիկոնեաններին: Փաւստոսի եւ Խորենացու պատմութեան համեմատութեան ժամանակ մենք դեռ առիթ պէտք է ունենանք ցոյց տալու, թէ Խորենացին ինչ տեսակ կեղծիքների է դիմում, Մամիկոնեան սպարապետների քաջագործութիւնները Բագրատունիներին ընծայ-

ելու։ Այժմ շարունակենք վերոյիշեալ չորս սպարապետներին պատմութիւնը։

Բագրատ կամ Բագարատ Բագրատունին յիշւում է Փաւստոսի մօտ Գ, Է, իբրեւ Տիգրանի Վաչէ Մամիկոնեանի, Հայոց բուն սպարապետի, եւ Գ, Գ իբրեւ "մեծ իշխան զօրավարութեան։" Ահա այս վերջին տեղից Խորենացին օգտուելով, նորան տալիս է առաջին սպարապետի պաշտօնը, ստորութեամբ լռութեան տալով Վաչէի անունը։ Վահան՝ Նահապետն Ամատունեաց, Փաւստոսի վերոյիշեալ գլխում յիշւում է նոյնպէս իբրեւ Տիգրանի Վաչէ Մամիկոնեանի. եւ որովհետեւ Փաւստ. Գ, Ը, մասնակցում է Գատարէի դէմ սկսած պատերազմին եւ Հայաստանի արեւելեան հարաւային կողմում յաղթում է Պարսիկներին, Խորենացին նորան տալիս է հարաւային գնդի սպարապետութիւնն եւ ղրկում է "զկողմամբք Ատրպատականի, ունել պահ յարքայէն Պարսից։" Մանաճիհր Ռշտունին Փաւստոսի մօտ, Գ, Ժ, անուանւում է "Մեծ իշխան, աշխարհակալ, մեծ ծառայ արքային Հայոց," այսինքն այն տիտղոսներով, որ Փաւստոսը տալիս է վերոյիշեալ "բիւրաւոր" նախարարներին։ Սորանից Խորենացին եզրակացնելով, որ Մանաճիհրն սպարապետ է եղել, նորան տալիս է յատկապէս հարաւային գնդի սպարապետութիւնն եւ ղրկում է "զկողմամբք Ասորեստանի եւ զՄիջագետաց,[1]" որպէս զի սուրբ Յակոբի

---

[1] Որ այստեղ եւս Խորենացին խարդախութեամբ արտագրում է Փաւստոսից, դորան ապացոյց է հետեւեալ

8 սարկաւագներին եւ 792 ռամիկներին գերել տայ: Նա իրաւ, Խորենացին սոյն գլխում պատմում է սուրբ Յակոբի եւ իւր սարկաւագների պատմութիւնն, որ վերցրել է Փաւստոսից (Գ., Ժ) եւ ըստ հաճոյս փոփոխութեան ենթարկել: Փաւստոս նախ սուրբ Յակոբի առասպելախառն պատմութիւնը տալով, ասում է, որ նա "եկն (ի Ուշտունիս) ուսուցանել եւ խրատել." բայց Մանաճիհր Ուշտունին արհամարհեց նորա իմաստուն խրատներն եւ "իբրեւ նմա հեճուկս առնելոյ, ած հոգէոր այր՝ որ կային ի կողմանս տանց

փառքը: Փաւստոսն ասում է. "Զօրքն (իշխանքն Հայոց) եւ յաղթեցին զօրացն Պարսից, եւ առ հասարակ ընդ սուր հանին զամենայն. եւ սպանին զբդեաշխն, եղբարբք եւ որդւովք իւրովք հանդերձ: Բայց զաղջիկ մի զդուստր նորա ածին, եւ զգլուխն Բակուր բդեշխին բերին առ արքայ . . . Բայց յորդւոցն Բակուր բդեշխի պատանեակ մի փախեաւ անկաւ առ զօրավարն Հայոց Վաչէ . . . որոյ անուն Խեշայ կոչէր:" Խորենացին աղջկայ փոխանակ՝ նորա խեղճ եղբօրը չղթայել տալով, ասում է. "Սպանեալ (Մանաճիհր) զնա (զԲակուր), եւ զզօրս նորա եւ զՊարսիկս օգնականս նմա հալածականս առնէ, եւ զորդին Բակրայ Ջհիշայ ձերբակալ արարեալ, հանդերձ երկաթի կապանօք առաքէ Խոսրովու:" Արդ "հանդերձ" նախադրութիւնը Փաւստոսի մօտ անհրաժեշտ է, բայց Մովսէսի մօտ ոչ միայն աւելորդ, այլ եւ միանգամայն հակառակ է լեզուի կանոններին. որովհետեւ "կապանօք" բառն Ablativus instrumenti է, իսկ Abl. Instr. գրւում է առանց որ եւ է նախադրութեան: Տես օրինակներ նոյն իսկ Մովսէսի մօտ՝ Գ., Խ. "Երկաթի-կապանօք ետ տանել (զՎարազդատ) ի Թուղիս," Գ., ԼԹ "Երկաթեղէն կապանօք երթեալ (Պապայ) առաջի Մեծին Թէոդոսի . . ., սակրով վճարի:" կասկած չկայ, որ Խորենացին անուշադրութեամբ ընդօրինակում է Փաւստոսի "հանդերձ" բառը: Ինչպէս Փաւստոսի վերոյիշեալ անդից երեւում է, Բակուրին յաղթողը Մանաճիհրը չէր:

յանցման, եւ ածել առաջի նորա. եւ հրամայեաց ի դահճէ մուծէ ի ծով անդր հոսել:„ Արդ մեր ղառամեալ պատմաբանը Փաւստոսի մօտ այս ութհարիւր անմեղ կապեալների մասին ցանկալի տեղեկութիւնը, այսինքն թէ նոքա ինչ պատճառով կապուեցան, չգտնելով՝ եւ կամենալով Փաւստոսի պատմութիւնը պարզաբանել, Մանածիհրի մասին ասում է. "բազում գերիս առեալ ի կողմանց Մծբնայ, ընդ որս եւ սարկաւագունս ութ մեծի եպիսկոպոսին Յակոբայ:„ Սոցանից ութին սարկաւագներ է համարում, որովհետեւ Փաւստոսից գիտէր, որ Յակոբը հետեւորդներով էր Ուշտունեաց երկիրն եկել ("եւ որ ընդ նմայն էին„) իսկ 792ին՝ հասարակ ռամիկներ: Բայց սորանով Խորենացին ագիտաբար յեղաշրջել է սուրբ Յակոբի Ուշտունիք գալու նպատակը. մինչդեռ նա ըստ Փաւստոսի՝ Ուշտունեաց երկիրն է գալիս իբրեւ քարոզիչ, Խորենացին ասում է, թէ նա Հայաստան եկաւ գերիներին ազատելու համար: Մնացած միւս պարագաները, ինչպէս լերան կատարից, "յորմէ երեւէր գաւառն ամենայն„, Ուշտունեաց երկիրը նզովելը, Մանածիհրի հերովդեան մահով սատակիլը (Փաւստ. "չարամահ ծակոտեալ ելանէր մեծաւ տանջանօք յաշխարհէ„) վերցրած են Փաւստոսից:

Առանձին բացատրութեան կարօտ է Միհրան Վրոյ——Զորքի սպարապետութիւնը: Ակամայ մարդ ապշում է, թէ ինչպէս Տրդատ Հայոց թագաւորն իւր զօրքերին սպարապետ

կարգեց մի օտար ժողովրդի "առաջնորդի," որ կարող էր ըստ պահանջելոյ հարկին իւր սուրը դարձնել նոյն իսկ Տրդատի դէմ, ինչպէս եւ արաւ[1]։ Խորենացին պարզամտութեամբ աւելացնում է. "վստահացեալ (Տրդատայ) վասն ի Քրիստոս հաւատոցն." սակայն այս իւր սեպհական կարծիքն է։ Մեր կարծիքով Միհրանի[2] սպարապետութիւնը Խորենացու ցնդաբանութիւններից մէկն է։ Նա այս հնարելով նպատակ ունի Վրաց քրիստոնեայ[3] թագաւորին՝ Հայոց քրիստոնեայ թագաւորին ժամանակակից եւ հպատակ հանդիսացնել, ինչպէս յետոյ Հայոց Տիրան ամբարիշտ թագաւորին ժամանակակից է նշանակում Յուլիանոս ուրացողին եւ նորան սպասաւորել է տալիս (վարը եր. 57), ցոյց տալու համար, որ "նմանն զնմանոն սիրեսցէ։"

Ահա Խորենացու յիշած չորս սպարապետների պատմութիւնն եւ Խորենացու պատմութեան այս մասի (Գ, բ—է) գաղտնիքը։

Այս բոլորից յետոյ Խոր. Գ, ը, վերջապէս անցնում է Խոսրով Կոտակի թագաւորու-

---

1 Տես Հ. Սարգիսեան, Ագաթանգեղոս եւայլն, 230, 1։

2 Նկատենք, որ այս Միհրանը նոյնը չէ Փաւստոսի Գ, է, ժղ եւայլն յիշած Մեհենդակի հետ, ինչպէս Մարքուարտ կարծում է։

3 Վրաց դարձի բուն հեղինակը Ռուփինոս եկեղեցական պատմագիրն է. (տես Գաթըրճեան, Տիեզերական պատմ. Բ, 480, 7)։ Սորանից վերցրել է Սոկրատէսը, իսկ Սոկրատէսից՝ Մ. Խորենացին (Բ, ձզ), ի հարկէ իւր ցանկացած փոփոխութիւնները մտցնելով նորա մէջ, ինչպէս ցոյց է տուել Կարրիէրը. ("Հանդէս ամսօրեայ,, 1893 յունիս։)

թեանը, Փաւստոսի պատմութիւնն ըստ իւր ճաշակի փոփոխութեան ենթարկելով: Արդ պէտք է գիտենալ, որ Խոսրով կոտակն ըստ Փաւստոսի պատմութեան՝ իւր մեծ հօր արժանաւոր զաւակն է եղած: Փաւստոսը նորան անուանում է "քաջ արանցն աշխարհաշէնն Խոսրով:" Նա իմաստուն, խոհեմ եւ վեհանձն էր.[1] Նա լսում էր սուրբ Վրթանիսի բարի խրատներին եւ նորան հնազանդում էր՝ ինչպէս որդին հօրը, որով եւ զարմանալի համերաշխութիւն էր տիրում սուրբ Տրդատի եւ սուրբ Գրիգորի որդւոց մէջ: Պատերազմների ժամանակ երկուսին էլ միասին Հայոց զօրաբանակումն ենք տեսնում, մէկին ձեռքին սուրը, միւսի ձեռքին սուրբ խաչը (Փւստ. Գ, Է, Ը):

Բոլորովին այլ գոյներով է նկարագրում Խորենացին սոյն այս Խոսրովին: Ըստ Խորենացու՝ Խոսրովը "ոչինչ արութիւն քաջութեան ցուցեալ, որպէս զհայր..., ամենեւին ոչ ունելով փարել ազնուական մտածութիւնս..., զքաջութենէ եւ զբարի յիշատակաց անփոյթ արարեալ," անձնատուր է լինում "զբօսանաց հաւորսութեանց եւ այլոց որսոց:[2]" Ո՞ր տեղից, ո՞ր աղբիւրներից Խորենացին այստեսակ դատողութեան եկաւ: Նորա մի քանի կցկտուր տեղեկութիւնները Խոսրովի մասին ամբողջապէս վեր-

---

1 Նա տեսնելով Սանէսան Մազքթաց թագաւորի, իւր թշնամու, արիւնաշաղախ գլուխը, "Լալ սկսաւ (եւ) ասէ. Եղբայր իմ էր ազգաւ արշակունի," (Փւստ. Գ, Է:)

2 Խոր. Գ, Թ, Նորան նոյնպէս անուանում է "Թուլամիրտ," "ԹՈՒԼ"

ցրած են Փաւստոսից.[1] Նա ոչ մի բան չէ պատմում Խոսրովի մասին, որ Փաւստոսի մօտ չգտնուի. ուրեմն ո՞ր տեղից է մեր զառամեալ պատմաբանը այստեսակ լուրանքներ թափում Խոսրովի գլխին։ Արդ, կասկած չէ կարող լինել, որ այս բոլոր լուրանքներն արտադրողը Խորենացու տենդենցիան է։ Նա կամենում է ցոյց տալ, որ սուրբ Տրդատի յաջորդները նորա հակապատկերն են ներկայացնում. նոքա ամէնքն էլ վատ, անարժան եւ անօրէն անձինք են։ Այս սկզբունքով առաջնորդուելով մեր վանականը՝ Խոսրով Կոտակի աշխարհաշինութեան գործերը (Փւստ. Գ, ը) համարում է շռայլութեան եւ զբօսասիրութեան գործեր, եւ դառնացած ծերունին այնչափ յառաջանում է, որ հեզ եւ խոնարհ Խոսրովին համեմատում է Հրէից անօրէն, անխիղճ եւ վատթար Յովակիմ թագաւորի, Յովսիա ազնիւ թագաւորի անարժան որդու եւ յաջորդի հետ (609—599 նախ քան զՔր.), որը իւր ժողովրդի դառն ճգնաժամին զբաղուած է իւր պալատական շինութիւններով, իւր ժո-

---

[1] Փաւստոսի խօսքերը՝ "ի ճշ[illegible] որ անուանեալ կոչի Դ[illegible]„ Խորենացին ադխատարար յեղաշրջել է. "յասպ[illegible] . . . որ ըստ պարսկական լեզուին [illegible] կոչի„։ Ինչպէս մասնագէտք նկատած են, պարսկերէն "դուռն„ բառ չկայ. ուստի եւ այս մեր ազէտ, բայց գիտնական երեւալ ցանկացող ծերունու ընդունայն բացատրութիւններից մէկն է։ "Արեւ ուղեկցեալ արեգական, եւ [illegible] [illegible] փչէին„ խօսքերը Խոր. վերցրել է Փաւստոսից, որը Մազքթաց կոտորածը յիշելով, ասում է. "տեսին զկոտորածն զօրացն հարելոց, զի [illegible] [illegible] [illegible]„։

ղովրդին ծրի բանեցնում է, որին և Երեմիա մարգարէն ուղղում է իւր սոսկալի բողոքը, Գլ. ԻԲ, 13—19. (Խոր. «տաղաւարանս հովանաւորս շինել.» Երեմիա. «շինեցէք քեզ տուն պատշաճող, վերնատուն հովանոց յօրինեալ պատուհանիւք»):

Հետևեալ գլխում (Գ, Թ) Խորենացին պատմում է Հիւսիսականների արշաւանքը, որը Փաւստոսի պատմութեան (Գ, Է) այլանդակութիւնն է: Ըստ Փաւստոսի՝ Հայոց վերայ արշաւողն է «թագաւորն Մազքթաց Սանէսան» Հիւսիսային Կովկասում բնակող բազմաթիւ ազգերով, որը ցանկանում է Հայոց թագաւորից վրէժ առնել, որովհետև սուրբ Գրիգորիսի առաքելութիւնը (Փաւստ. Գ, Զ) նա վերագրում է Հայոց թագաւորի խորամանկութեանը. ըստ Խորենացու՝ արշաւողներն են «բնակիչք Հիւսիսոյ Կովկասու, գիտացեալ զթուլասրտութիւն նորա (Խոսրովու) և զյուլութիւն, և առեալ ի հրապուրելոյ մաղթանաց Սանատրկոյ՝ ի գաղտնի հրամանէ Շապհոյ արքայից արքայի:» Խորենացու պատճառաբանութիւնը սուտ և ինքնահնար է: Նորա Սանատրուկ Արշակունին՝ Մազքթաց Սանէսան Արշակունի թագաւորն է, ինչպէս վերև ասացինք: Խորենացին Գ, Զ, Նորան Շապուհի մօտ փախցնելով, այստեղ վերջին անգամ յիշում է, չասելով, թէ ինչ եղաւ նորա վախճանը: Սուտի և նորա տեղ Խորենացին Հիւսիսականների վերայ զօրագլուխ է կարգում «սկայ ոմն Անարի,» «ահագին վերագ,» որի զինավառութիւնը մեզ յիշեցնում է Հեր-

կուլէսի եւ Թէոդէոսի ժամանակների առասպելները: Սուտ է, թէ հիւսիսականները արշաւեցին Շապուհի հրամանով. որովհետեւ հիւսիսականները նոյն իսկ Շապուհի կատաղի թշնամիներն էին: Խորենացին այս պատճառը հնարում է, որպէս զի Գ., Ժ., Խոսրովին առիթ տայ Շապուհի հետ «խաղաղութիւնը լուծանելու» եւ «մանաւոր հարկերը» արգելելու, որով եւ մեր զառամեալ պատմաբանը նպատակ ունի բացատրելու, թէ ինչ պատճառով ծագեց այն արիւնահեղ պատերազմը Պարսից եւ Հայոց մէջ, որ Փաւստոսը Գ., Ժա., անմիջապէս Խոսրովի մահից յետոյ յիշում է: Ըստ Փաւստոսի՝ հիւսիսականները արշաւում են անթիւ եւ անհամար խառնաճաղանճ զօրքերով. Խորենացին ուզում է մի կերպ Փաւստոսի պատմութիւնը պարզաբանել, ասելով «ի միջոց աշխարհիս մերոյ հասանէին մեծաւ ամբոխիւ, որպէս թէ երկու բիւրովք:» Ըստ Փաւստոսի՝ հիւսիսականների արշաւանքի ժամանակ Վաչէ Մամիկոնեան սպարապետը «երթեալ էր զերկայն ճանապարհս ի կողմանս Յունաց» (այսինքն դէպ արեւմուտք): Այս պատճառաւ Խոսրով Թագաւորն եւ Վրթանէս կաթողիկոսը խոյս տուին «եւ անկան յամուր բերդն Դարեւնից յերկիրն Կոգկայ:» Բարբարոսները ընդդիմադրութեան չհանդիպելով, սփռուում են Հայաստանի զանազան կողմերն եւ սկսում են աւար եւ կողոպուտ առնել: Վաչէ Մամիկոնեանն այդ ժամանակ հայրենիք վերադառնալով, զօրք է ժողովում եւ Ցլու գլուխ կոչուած լեռան

մօտ նոցա զօրքի մի մասը սրի մատնելով, խլում է նոցանից աւարն եւ գերութիւնն եւ շտապում է Այրարատեան դաշտը, ուր եւ "գտանէր զՍանէսան Թագաւորն Մազքթաց բուն գնդաւն, անթիւ անհամար զօրօքն հանդերձ՝ ի Վաղարշապատ քաղաքի:„ Խորենացին այս պատմութիւնն այնպէս փոխում է, որ մի մեծ անտեղութիւն է յառաջանում: Նա ասում է, որ հիւսիսականները "պատահեալ պատերազմաարեւելեան եւ արեւմտեան զօրուն Հայոց հանդերձ զօրապետօքն Բագարատաւ ասպետիւ եւ Վահանաւ նահապետիւ Ամատունեաց. քանզի հարաւային մեր գունդք առ արքային Խոսրովայ էին յաշխարհին Տոփաց, եւ զՄիհրան սպանեալ, եւ զհիւսիսային մեր գունդն հարեալ՝ ի թիկունս ընկեցեալ թշնամեացն, եւ հասեալ ի դրունս Վաղարշապատու՝ պաշարէին:„ Արդ ի՞նչպէս եղաւ, որ հիւսիսից արշաւող բարբարոսները պատահեցան արեւելեան եւ արեւմտեան Հայոց գնդին, եւ վերջապէս ի՞նչպէս եղաւ, որ նոքա արեւելեան եւ արեւմտեան զօրքերին պատահելով, հիւսիսային գունդը ջարդեցին եւ նորա սպարապետին, խեղճ Միհրանին սպանեցին: Արդարեւ Խորենացին հարկից ստիպուած՝ իւր Մեկենասի խնդիրը կատարում է, շտապով այս տեղից այնտեղից արտագրելով Հայոց պատմութիւնը,[1] այլ եւս չնկատելով այն հակասու-

---

[1] Այս ծերունին որչափ խարդախ, նոյնչափ եւ միամիտ է: Նա Գ., կն պարզամտութեամբ ի լուր աշխարհի պատմում է, թէ ինքն ինչ ողորմելի, թերի եւ ծիծաղելի

թիւնները, որոնք իւր շարադրութեան մէջ մնում են: Օշականի ճակատամարտի պատմութեան մէջ երկու պատմագիրների մէջ բառացի նմանութիւնն ակնյայտնի է:

Փաւստոս.

Ըռնեալ զգունդն Վաչէ եւ յանկարծակի յարձակեցաւ ի վերայ քաղաքին... Իբրեւ տեսին զնա յարձակեալ ի վերայ իւրեանց, փախեան ելին ի քաղաքէ անտի յառաջագոյն ի կողմն յՕշական բերդին. եւ զանապատն, եւ [illegible] գեղն ապաւէն իւրեանց համարեցան:

Խորենացի.

Որոց յանկարծակի ի վերայ անկեալ արեւելեայ եւ արեւմտեայ մեր զօրուն, եւ անտի մերժեալ զՕշական առ Արագածն... արագեալ տառապակէս զՇեառ ունելով քաջածիւղն ի գժուարս տերանց եւ ի լեռնոտ տեղիս:

Խորենացին Վաչէ Մամիկոնեանի անունը ստորութեամբ լռութեան տալով, նորա դերը յանձնում է Բագարատ Բագրատունուն: Խորենացին Հայոց այս յաղթութիւնը վերագրում

Հակայաղութիւն ունի պատմագրութեան մասին: "Բայց թէ առիցէ ոք", գրում է նա իր Մեկենասին, "պարտ է մեզ զառացելոյն Մեծին Սահակայ ի Գարուց հրապարակախօսութեանն գրել, զխօսեցէ, զի ոչ յումեքէ ի լսելիս մեր հասեալ է բովանդակն ճշմարտութեամբ, եւ ոչ մեք ի պատմութեանս հիւսել համարիմք: Զի ես այր եմ ծերացեալ եւ հիւանդոտ եւ անպարապ ի թարգմանութեանց, եւ [illegible] բանից. [illegible]". Ո՜վ ծերացեալդ հիւանդոտ. որքան մեծ ծառայութիւն պէտք է մատուցած լինէիր քո ազգին, եթէ քո Մեկենասի անիրաւ պահանջին ընդդիմանայիր. շարունակէիր քո թարգմանութիւններով զբաղուիլ եւ ապառնի՝ դարերու սերունդներին չթողնէիր քո կեղծ, անշունչ եւ անկենդան Հայոց պատմութեան կմախքը:

է Վաղարշապատի կաթողիկէին. եւ այս՝ այն ժամանակի վանականի կողմից շատ հասկանալի է: Ինչպէս ըստ Փաւստոսի, այնպէս էլ ըստ Խորենացու՝ պատերազմից յետոյ տեղի են ունենում պարգեւաբաշխութիւններ: Մովսէս՝ Վաչէ սպարապետի անունը լռութեան մատնելով, չէ յիշում նաեւ նորա ստացած տեղերը, այլ միայն Բագարատ Բագրատունու "աննախանձ վկայութեամբ" Վահան Ամատունուն ընծայել է տալիս "զտեղի ճակատուն զՕշականն:" Այս հակառակ է Փաւստոսին, որը թէպէտ յիշում է, որ Խոսրովը "այլոց նախարարացն" եւս պարգեւներ տուեց, բայց Օշականի պարգեւաբաշխութիւնը Վահանին՝ չէ յիշում: Ուստի ամենայն հաւանականութեամբ Խորենացին այս կարկատում է Կորիւն Աքանչելու պատմութեան վերայ (Վենետիկ 1894, եր. 45), որից գիտէր, որ Օշականը Ե. դարում ապրող Երեւելի Վահան Ամատունուն էր պատկանում: "Գարջյլ Մաղխազ Խոռխոռունեաց նահապետը," որին Խորենացին երեւակայական մեռեալ Միհրանի տեղ սպարապետ է նշանակել տալիս, Փաւստոս Գ, ժա, յիշում է իբրեւ մէկն այն իշխաններից, որոնք Ներսէս Մեծին ուղեկցում են դէպ ի Յունաց երկիրը:

Խոր. Գ, Ժ, պատմում է Խոսրովի մահն եւ Հայոց պատերազմը Պարսից հետ: Ինչպէս ասացինք, Խոր. Գ, Թ, հիւսիսականներին Հայոց վերայ արշաւել է տալիս "ի գաղտնի հրամանէ Շապհոյ Պարսից արքայի:" Իսկ այստեղ պատ-

մում է, թէ «գիտացեալ Խոսրովայ, թէ ձեռն Շապհոյ Պարսից արքայի ընդ թշնամիսն է, լուծանէ զխաղաղութիւն ընդ նմա. եւ զմանաւոր հարկսն արգելու ի նմանէ, տալով կայսեր. եւ ածելով զզօրս Յունաց ընդդիմանայ արքային Պարսից: Բայց ոչ յերկարեալ զկեանս իւր վախճանի, թագաւորեալ ամս ինն. եւ բարձեալ զնա՝ թաղեցին յԱնի առ հարս իւր:» Մեծ Վրթանէսը «ժողովեալ զամենայն Նախարարս Հայոց, հանդերձ զօրօք եւ զօրապետօք, յանձն առնէ Արշաւրի Կամսարականի, որպէս գլխաւորի եւ յոյժ պատուականի յետ արքայի, զաշխարհս Հայոց: Եւ ինքն առեալ զՏիրան որդի Խոսրովու, գնայ առ կայսր, զի թագաւոր Հայոց ի տեղի հօր իւրոյ կացցէ:» Արդ այս բոլորը սուտ, հակապատմական զրոյցներ են: Մենք արդէն տեսանք, որ հիւսիսականների արշաւանքի պատճառը սուրբ Գրիգորիսի քարոզութիւնն եւ գործով բարբարոսների սրտերում յարուցած անվստահութիւնն էր, եւ ոչ թէ Շապուհի գաղտնի հրամանը: Պէտք է նոյնպէս նկատել, որ Խորենացու վկայութիւնը, թէ Հայաստանը Խոսրովի ժամանակ կանոնաւոր հարկ էր տալիս Յունաց կայսերը (վերեւ եր. 35) եւ Պարսից արքային էլ «մանաւոր հարկեր» (տես եւ Գ, ժա) էր տալիս, շատ անհաւանական զրոյցներ են, հակառակ փաստերին եւ արտաքին պատմագրութեանը: Յիրաւի, Հայաստանը, որ 297 թ. դաշնագրութեամբ բոլորովին ազատուել էր Պարսից գերիշխանութիւնից, ինչպէս կարող էր

Խոսրով Կոտակի ժամանակ Պարսից «մասնաւոր հարկեր» տալ: Նոյն իսկ Խոսրովից շատ ուշ, 358 թուին, երբ Հայաստանում թագաւորում էր Խոսրովի թոռն Արշակ, Շապուհը, Արեգակի եւ Լուսնի եղբայրը, իւր թղթում առ Կոստանդիոս դառն բողոք է ներկայացնում, թէ „Armeniam recuperare cum Mesopotamia debeo, avo meo composita fraude praereptam„ (Ստիպուած եմ Հայաստանը Միջագետքի հետ նորից գրաւել, որ նենգութեամբ իմ պապի ձեռքից խլեցին, այսինքն 297 թուին)[1]: Բայց Հռոմայեցւոց կայսերը հարկ տալն եւս վերին աստիճանի կասկածելի է: Հայաստանն իւր ռազմագիտական դրութեամբ՝ կռուախնձոր էր դարձել Պարսից եւ Հռոմայեցւոց մէջ, որոնցից ամէն մէկը աշխատում էր իւր գերիշխանութեան տակ ունենալ այդ երկիրը: Հռոմայեցիք ոչ միայն իրենց դաշնակից Հայոց թագաւորութիւնն այդ ժամանակ հարկերով չէին կեղեքում, այլ եւ աշխատում էին Հայոց թագաւորի եւ նախարարների սրտերը մեծամեծ ընծաներով շահել, որպէս զի նոքա շարունակեն իրենց դաշնակից մնալ[2]: Երբ Տիրան թագաւորի գերութիւնը տեսնելով, հայ ժողովրդի բոլոր դասակարգերը պատգամաւորութիւն ուղարկեցին (Կոստանդիոս) Հռոմայեցւոց կայսեր մօտ, խոստացան նորան

1 Ammianus Marc. Rerum gest. XVII, 5, 6:

2 Տեսնել վերն, եր. 6, ուր պատմած է, թէ ինչպէս Կոստանդիոս կայսրը ընդունում է Արշակ թագաւորին իւր մեծամեծներով:

ծառայել ոչ թէ հարկով, այլ "հնազանդու-թեամբ"[1]: Ցետոյ միայն Մանուէլ Մամիկոնեանը Վարազդատին հալածելով եւ "ածեալ զմտաւ խորհրդով, թէ արժան է նմա գէթ զմի ոք թիկունս առնել," պատգամաւորներ է ուղարկում Պարսից թագաւորի մօտ եւ նորանից օգնութիւն է խնդրում: Աճա այստեղ ասած է, որ երբ Պարսից թագաւորն Հայոց ազգապետի խնդիրը կատարելով, Սուրէնին 10.000 զօրքով Հայաստան ուղարկեց, Հայք "հնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից եւ կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս տալ ընծայս եւ պատարագս: Սոյնպէս եւ մարզպանին Սուրենայ հասս եւ կօշիկս եւ զպիտոյս ռոճկացն. սոյնպէս եւ տասն հազարացն զարման եւ կերակուր ըստ պիտոյիցն:" Իսկ Հայաստանի բուն հարկատուութիւնը Յունաց եւ Պարսից տէրութեանց՝ սկսւում է Արշակունեաց թագաւորութեան բաժանմամբ, երբ յոյն եւ պարսիկ քաղաքագէտները մտածում էին. "Լաւ է, զի այսու (բաժանմամբ) եղծանել եւ խանգարել կարասցուք զայս թագաւորութիւնս նախ ընդ երկուս բաժանելով երկու թագաւորօքս Արշակունօք՝ զօրս կացուցաք, ապա եւ ընդ նոսա կռուել ջանացաք, աշխատացուցանել, և մեզ տաժանել և ձանձրացուցանել, զի մի կարասցեն ի մէջ մեր բառնալ գգլուխս:" Այս բոլորից յետոյ պարզ է, թէ ինչպէս կասկածելի է Խորենացու վերոյիշեալ վկայութիւնը:

1 Փաւստոս, Գ, խա:

Բայց Խորենացու միւս խօսքերն եւս շատ տարակուսելի են։ Ցիրաւի, ինչպէս Պարսից թագաւորը լսելով Խոսրովի ապստամբութիւնը, ձեռքերը ծալեց եւ անգործ մնացած, մինչեւ Խոսրովը մեռաւ, թաղուեցաւ (Անիում թաղուելը Խոր. վերցրել է Փաւստոսից, Գ, ժա, եր. 28), մեծ Վրթանէսը Տիրանի հետ Կ. Պոլիս գնաց։ Վերջապէս ինչպէս կարող էր Վրթանէսը Հայրենիքի այդ դառն ճգնաժամին վերցնել Տիրանին եւ Կ. Պոլիս փախչել. չէ՞ որ հէնց այդ րոպէին Վրթանիսի եւ Տիրանի ներկայութիւնը Հայրենիքում անհրաժեշտ էր. միթէ չէ՞ր կարող մեծ Վրթանէսը Կոստանդիոս կայսրը թուղթ գրել եւ խնդրել, որ նա Տիրանին թագաւորեցնէ, ինչպէս այդ եղաւ ըստ Խորենացու՝ Խոսրովի թագաւորութեան ժամանակ (վեր եր. 34)։ Արդ ինչպէս Խոսրովի թագաւորելը մեծ Վրթանիսի միջնորդութեամբ եւ Անտիոքոս յարդարչի ձեռքով, այնպէս էլ Տիրանի եւ Վրթանիսի Կ. Պոլիս գնալն եւ առաջինին թագաւոր պսակուիլն անմիտ զրոյցներ են։ Խորենացին, ինչպէս ասացինք, գաղտնի նպատակ ունի, սուրբ Լուսաւորչի ծերունի որդուն միանգամ՝ եւս Հայրենիքի պաշտպան հանդիսացնել, դորա համար եւ նա նորա մահն երեք տարով ուշացնում է (վերեւ եր. 31)։ Բայց իսկապէս մեր զարմանալի պատմաբանն այստեղ եւս Փաւստոսի պատմութիւնն այլանդակում է. Գ, ժա եւ իա։ Փաւստոս Գ, ժա, պատմում է Պարսից եւ Հայոց մէջ տեղի ունեցած մի արիւնահեղ պատերազմ, որի մէջ ըն-

կնում է նաեւ Վաչէ Մամիկոնեան քաջ սպարապետը: Փաւստոսն այս պատերազմին անմիջապէս կցելով Վաչէի մահուան վերայ արած սուգն եւ սուրբ Վրթանիսի սքանչելի գամբանականը, մոռանում է ասել, թէ ով յաղթեց այս պատերազմում: Սակայն գամբանականի հետեւեալ խօսքերը. “մեր բարեպաշտութեան նահատակք ի վերայ այսորիկ ճգնեալ պատերազմաւ, զչար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ մեռան,” ցոյց են տալիս, որ Հայերը Պարսիկներին յաղթելով՝ իրենց երկրի սահմաններից հալածեցին: Ահա այս պատերազմն է, որ Խորենացին լոկ “ընդդիմադրութիւն” է անուանում եւ անորոշ թողնում անցնում է. որովհետեւ եթէ նորա վերայ ընդարձակուէր, ստիպուած պէտք է լինէր Մամիկոնեան տան սպարապետութիւնը յիշել, իսկ Բագարատ Բագրատունուն Վաչէի տեղ մտցնել չէր կարող, ինչպէս յետոյ երեւակայական Սահակ ասպետին Մանուէլ Մամիկոնեանի փոխանակ՝ գերեզման է ուղարկում[1], որովհետեւ Փաւստոսից, Գ., գ., գիտէր, որ Բագարատն Արշակ Թագաւորի ժամանակ դեռ եւս ապրում էր: Բայց որ Խորենացու յիշած “ընդդիմադրութիւնը” Փաւստոսի վերոյիշեալ պատերազմի աղճատումն է, այդ երեւում է նորանից, որ Փաւստոսի նման՝ Խորենացին եւս այդ դէպքից անմիջապէս յետոյ պատմում է Խոսրով Թագաւորի մահը:

1 Փաւստոս, Ե., խդ. եւ Խորենացի, Գ., խա:

Իսկ Վրթանիսի եւ Տիրանի Կ. Պոլիս պատգամաւորին Փաւստոսի Գ, իա, այլափոխութիւնն է։ Այս պատգամաւորութիւնն եղաւ ոչ թէ Տիրանին, այլ Արշակին թագաւորեցնելու համար, երբ մեռած էր ոչ միայն սուրբ Վրթանէսն, այլ եւ նորա որդին սուրբ Յուսիկ։ Հայոց պատգամաւորներն էին Անդովկ Նահապետն Սիւնեաց եւ Արշաւիր կամսարական Նահապետն Արշարունեաց։ Ահա սոցա դերն է, որ Խորենացին յանձնել է սուրբ Վրթանիսին, որպէս զի նորան բարեխօսել տայ Կոստանդիոս կայսեր առաջ։ Եւ որովհետեւ Փաւստոսը պատմում է, որ Յունաց կայսրը Արշաւիր կամսարականի օգնութեամբ յաղթեց Պարսից (Ներսեհ) թագաւորին, դորանից Խորենացին հնարել է, թէ մինչեւ Տիրանի Հայաստան վերադառնալը քաջն Արշաւիր Կամսարական Շապուհ Պարսից թագաւորի եղբօրը Ներսեհին "ի Մռուղն անուանեալ դաշտի" յաղթեց։[1]

1 Ըստ Փաւստոսի՝ յաղթութեան տեղին էր Բասեան գաւառի Ոսխայ գիւղը։ Խորենացու յիշած Մռուղ դաշտը ինձ անյայտ է, բայց հաւանօրէն գտնւում է Բասենի կողմերը։ Ինչպէս արդէն շատերից նկատուած է, Փաւստոսն՝ Արշակին թագաւորեցնելու համար եղած այս պատերազմի պատմութիւնը շփոթել է 297 թուականի պատերազմի հետ, որ յիրաւի Պարսից Ներսեհ թագաւորը հրատարակեց Դիոկղետիանոս կայսերը, բայց Գալերիոս զօրավարից Հայաստանում յաղթուելով, փախաւ, գերի թողնելով իւր կանանոցը թշնամու ձեռքում։ Որովհետեւ Տիրանի եւ Արշակի ժամանակ Պարսից թագաւորն էր Շապուհ, ուստի Փաւստոսը սխալւում է Ներսեհ դնելով։ Նա Ներսեհին եւ Շապուհին, ինչպէս եւ Կոստանդիոսին եւ Վաղէսին, ի մի է ձուլում, ինչպէս նկատած է Մար-

Հետեւեալ գլխում (Գ., ԺԱ), բաց ի ժամանակագրական այլանդակութիւններից, որոնց մասին արդէն խօսել ենք, ուրիշ ոչինչ չկայ։ Գ., ԺԲ մի ողորմելի տեղեկութիւն է Պարսից եւ Հռոմայեցւոց մէջ ծագած 25ամեայ պատերազմի վերայ, որի մասին յետոյ պէտք է խօսինք. իսկ Շապուհ Որմզդեանի մեր Տիրան արքայի հետ «առաւել սէր հաստատելն» Խորենացին վերցրել է Փաւստոսից, Գ., Ի, ուր ասած է. «բայց դեռ բարեկամութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, ի մէջ թագաւորին Հայոց եւ Պարսից։» Գ. ԺԳ, Խորենացին Յուլիանոս Ուրացողի մասին մի երկու խօսք ասելով, որ վերցրել է արտաքին պատմագիրներից, ասում է, որ «Տիրան մեր թագաւոր իջեալ ընդ առաջ Յուլիանոսի, դիմէ ի վերայ Պարսից զօրացն եւ հալածականս առնէ. եւ հարեալ սպասաւորութիւն, անցուցանէ զամբարիշտն Յուլիանոս հանդերձ բազմութեամբ այրուձիոյն. եւ մեծարի ի նմանէ յոյժ։» Խցիկում թարգմանութեամբ զբաղուած ծերունին, ինչպէս երեւում է, շատ խակ, մանկական հասկացողութիւն ունի պատերազմական գործի մասին։ Նա կարծում է, թէ հեշտ բան էր Հայոց թագաւորի համար Շապուհ Երկայնակեացի հսկայական զօրաբանակը «հալածական առնելն։» Արդէն մենք

քարոզ։ Խորենացին ցանկանալով Փաւստոսի սխալն ուղղել, նոր մոլորութեան մէջ է ընկնում, Ներսէհին Շապուհի եղբայրը համարելով (տես Gelzer, Die Anfänge d. arm. Kirche, p. 118, Anm. 2.)

վէրն ցոյց տուինք, որ Տիրանի եւ Յուլիանոսի ժամանակակցութիւնը անմիտ զրոյց է։ Խորենացին գաղտնի նպատակ ունի, սուրբ Յուսկան սպանչին Հռոմայեցւոց ամբարիշտ կայսեր հետ հանդիպեցնել եւ նորան համամիտ հանդիսացնել. դորա համար եւ Տիրանին Յուլիանոսի առաջն է ուղարկում։ Բայց դորանով Խորենացին ցոյց է տալիս իւր տգիտութիւնը այդ ժամանակուայ պատմութեան մէջ։ "Անցուցանել թագաւորին (Արշակայ) զՅուղիանոս ընդ Եփրատ, վանելով անտի զՊարսիկս՝ չէ ամենեւին հաւանութեան։ Չէր մարթ Արշակայ անցուցանել զՅուղիան ընդ Եփրատ, ոչ զառաջինն նուագն, զի այն կողմանք ի ձեռս Հռոմայեցւոց էին եւ չէր հնար Պարսից արգելուլ անդ զանցսն Յուլիանու, եւ ոչ յետոյ առ Կիրկեսիոնիւ, զի չէր ի միասին ինքն Արշակ կամ զօրն նորա ընդ գնդին Յուղիանու, այլ ընդ գնդին որ ընդ հիւսիսակողմն արշաւէր[1]։" Խորենացին այս գլխի վերջը ասում է, որ Յուլիանոսը Տիրանից "խնդրէ զօրս եւ պատանդս". իսկ Տիրանը նորան տալիս է "զորդի իւր զՏրդատ զկրտսեր՝ հանդերձ կնաւ եւ որդւովք, եւ զՏիրիթ զորդի մեռելոյն Արտաշիսի որդւոյ իւրոյ անդրանկան։ Զորս առեալ Յուլիանու, նոյնհետայն առաքէ ի Բիւզանդիոն։" Խոր. Գ., իա, իմանում ենք, որ այս "Տրդատ

---

1 Գաթըրճեան, Տիեզերական Պատմ. Բ. 496։ Հեղինակն ենթադրութեամբ միայն Տիրանի տեղ Արշակին է յիշում իբրեւ ժամանակակից Յուլիանոսի. բայց տեսնում է, որ այս դէպքում եւս ոչինչ չէ դուրս գալիս։

Գ. ի„ որդին էր Գնէլ։ Արդ այս բոլորը յօրինուած է Փաւստոսի պատմութեան վերայ, որը Դ, Ե, ասում է, որ Յունաց կայսրը սուրբ Ներսեսին աքսորելով եւ կամենալով Արշակ թագաւորի սիրտը շահել, „արձակեաց զպատանդսն զԱրշակունիսն թագաւորին Հայոց, որ կային ի Հո-ռոմոցն պատանդութեան, զի նոքա եղբօրորդիք էին արքային Արշակայ. զի միումն անունն ճանաչէր Գնէլ եւ միւսումն անունն Տիրիթ„, այլ եւս չյայտնելով, թէ երբ եւ ինչ պատճառով նոքա Հռոմայեցւոց կայսերը պատանդ տրուեցան։ Եւ աՀա՛ Խորենացին կամենալով վերացնել Փաւստոսի պատմութեան այս մթութիւնը, հնարում է վերոյիշեալ անյաջող կեղծիքը, իբր թէ նոցա պատանդ տուած լինէր Տիրանը Յուլիանոսին։

Խորենացւոյ Գ, ժգ, գլխի մասին արդէն վերը խօսեցանք։ Գ, ժե, մի անմիտ եւ այլանդակ քաղուածք է Փաւստոսի պատմութիւնից, Գ, ը, ժը։ Խորենացին Փաւստոսի յիշած հայ նախարարների կոտորածքը կապում է սուրբ Յուսկան մահուան հետ, ցոյց տալու համար, թէ ինչպիսի աղէտներ ունեցաւ սրբի նահատակութիւնը հայ նախարարների համար։ Որովհետեւ մենք տեսանք, որ սուրբ Յուսկան եւ Տիրանի ժամանակակցութիւնն, ինչպէս եւ Ջօրայի զօրքով Յուլիանոսի առաջ իջնելն անմիտ զրոյցներ են, ուստի պարզ է, որ Ջօրայի ապստամբութիւնը սուրբ Յուսկան մահուան պատճառով եւս սուտ եւ հնարովի է։ Խօսրով Կոտակի դէմ ապստամբուող Դատաբէ Բզնունեաց

նահապետն է, որին Խորենացին Ռշտունեաց նահապետ է անուանում, Մանաճիհրի տեղ «Հայոց հարաւային գնդին սպարապետ» է կարգում, Մեհենդակ Ռշտունու եղբայրն է համարում եւ ապա Տիրանի դէմ ապստամբեցնում է: Իսկ Ձորայի ազգահատութեան պատմութեան մէջ Խորենացին ի մի է ձուլել Փաւստոսի յիշած Գնատրէ ապստամբի ազգատոհմի եւ Ռշտունեաց տոհմի ազգահատութեան պատմութիւնը (վերջինս Հայր Մարդպետի ձեռքով):

Փաւստոս:	Խորենացի Գ, ժը:
«Եւ զորդ նորա (Գնատրեայ) եւ զկին եւ զորդիս զանէր յամրոցի անդ իշխանին Ռշտունեաց յանուանեալն յՈւղթամար կղզւոջ. ի նաւ ելեալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կղզին՝ [illegible] (Փաւստ. Գ, ը):	«Եւ արքայ զՁորայ ի բուռն առեալ. ունի [illegible] նոցին [illegible], եւ [illegible]:
«Ի գայթակղի զանէին ի [illegible] զՏաճատ որդի Մեհնդակայ Ռշտունւոյ եւ Շաւասպ ...» (Փաւստ. Գ, ժը):	Բայց [illegible] մի, որդի Մեհենդակայ եղբօր նորա (Ձորայի), [illegible] ապրեցուցին:»

Փաւստոսը պատմում է, որ վերյիշեալ մանկանցը կոտորածքից ազատեցին Արտաւազդ եւ Վասակ Մամիկոնեանները: Այդ անունները Խորենացին բոլորովին լռութեան է մատնում, եւ այս քաջ հասկանալի է:

Սոյն եւ հնարովի է Խորենացու, Գ, ժե, յիշած Յուլիանոսի թուղթն առ Տիրան: Այս

թուղթն «ունի նմանութիւն միայն» (Գաթըրճեան) այն թղթի հետ, որ Յուլիանոսը գրեց Տիրանի որդի Արշակին[1]։ Նոյնպէս կարկատող պատմաբանի ինքնահնար կեղծիքներից մէկն է Գ, ժէ, յիշած թուղթը, որ Հապուհը Յովիանոսին հալածելով գրում է Տիրանին (ուրեմն 363 թուականից յետոյ. ո՞րքան ոգէտ է մեր «պատմահայրն» այդ ժամանակուայ պատմութեան մէջ)։ Իսկ Տիրանի կուրացուցման պատմութիւնը Խորենացին վերցրել է Փաւստոսից Գ, ի, ինչպէս եւ չէ մոռանում կրկնելու Փաւստոսի յիշած բարեպաշտական պատճառաբանութիւնը։ Պէտք է նկատել, որ ինչպէս Փաւստոսը (Գ, ժթ), այնպէս էլ Խորենացին (Գ, ժղ) անմիջապէս Տիրանի կուրացումից առաջ պատմում են սուրբ Յուսկան անարժան որդկերանց, Պապի եւ Աթանագինեսի պատմութիւնն եւ «շանճնաւոր լինելն» (Փաւստ. հրեշտակ Տեառն ի նմանութիւն քոյլտակման). եւ այս պատահական չպէտք է համարել, այլ այստեղ եւս Խորենացին միակ աղբիւր է ունեցել Փաւստոսի պատմութիւնը։ Միակ նորութիւնը, որ Խորենացին Փաւստոսից շեղուելով մեզ տալիս է, այդ այն է, թէ սուրբ Յուսկան մահուան ժամանակ (ըստ իւր ժամանակագրութեան 363 թուին, երբ սուրբ Ներսէսը ոչ միայն կաթողիկոսել, այլ եւ գնելի անիրաւ սպանութեան պատճառով հայրապետական գործերից հեռացել էր,) Աթանա-

[1] Տես վերն եր. 10։

գինեսի որդին Ներսէս գնացած էր Բիւզանդիոն՝ "առնուլ կին զդուստր Ասպիոնայ ուրումն իշխանի մեծի։„ Անկարելի ոչինչ չկայ, բայց հազիւ թէ սուրբ Սահակի պէս աննման հայրենասիրի մայրը յոյն կին եղած լինի։

Իսկ թէ ինչ բանից գրգռուած Խորենացին Փառներսեհի (Փառէնի) եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու համար Կեսարիա գնալը ծածկում է, դորա մասին յետոյ կը խօսենք։

Բ.

Անցնելով Արշակի թագաւորութեան պատմութեանը, մենք նախ եւ առաջ պէտք է խօսենք Խորենացու ժամանակագրութեան մասին։

Խորենացին (Գ, ժը) Արշակին Տիրանի տեղ թագաւորել տալով, (Գ, լէ) ասում է, որ նա "թագաւորեաց ամս երեսուն„, ուրեմն 365—395 թիւը. որովհետեւ, ինչպէս տեսանք, ըստ Խորենացու՝ Տիրանը թագաւորում էր 354—365 թիւը։ Արշակի որդուն եւ յաջորդին Պապին, Խորենացին (Գ, լը) թագաւորեցնում է Թէոդոս Մեծի ձեռքով եւ (Գ, լթ) նորան տալիս է 7ամեայ թագաւորութիւն, ուրեմն ըստ Խորենացու՝ Պապը թագաւորել է 395—402 թուականը։

Կաթողիկոսների համար էլ Խորենացին տալիս է հետեւեալ ժամանակագրութիւնը։ Յուսիկին յաջորդում է Փառներսեհը "ի տասներորդի ամի Տիրանայ, որ կալաւ զաթոռն ամս

չորս» (Խոր. Գ, ժԶ), ուրեմն 364—368: Ըստ Խորենացու՝ Փառներսեհի անմիջապէս յաջորդեց Ներսէս Մեծը «յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ» (Խոր. Գ, Ի) եւ կաթողիկոսեց 34 տարի (Խոր. Գ, ԼԸ), ուրեմն 368—402 թիւը: Նկատենք, որ Խորենացու այս ժամանակագրութիւնը կազմած է գիտակցաբար եւ ազատ է ներքին հակասութիւններից. օրինակ՝ (Խոր. Գ, ԻԹ) պատմում է, որ Արշակ Վաղենտիանոս կայսեր մահուան ժամանակ († 17 Նոյեմբ. 375) դեռ թագաւորում էր, (Գ, ԼԶ) նա Ներսէս Մեծին եւ Պապին ժամանակակից է նշանակում Թէոդոս Մեծին (379—395):[1]

Այժմ գանք լինե՞լ թէ չլինելու հարցին: Արդ մենք արդէն տեսանք (տես վերեւ երես 8) որ Արշակ թագաւորի ամուսնութիւնը Ողիմպիադայի հետ՝ եղաւ 360 թուականին, իսկ Յովլիանոսի կռած կորանաց դաշինքը՝ 363 թուականին: Որովհետեւ թէ Փաւստոս (Գ, ԻԱ) եւ թէ Ամմիանոս (XXV, 7, 12) անմիջապէս կորանաց դաշինքին կցում են հայ-պարսկական պատերազմի պատմութիւնը, ուրեմն 363 թուականը մի եւ նոյն ժամանակ եւ այդ պատերազմի սկիզբն է: Այս պատերազմը ըստ Ամմիանոսի անկասկածելի վկայութեան (XXVII,

---

[1] Բայց ի հարկէ Խորենացին ինքն իրան հակասում է, Պապին թագաւորեցնելով մինչեւ 402 թիւը եւ միեւնոյն ժամանակ (Գ, ԼԹ) սպանել տալով Թէոդոս Մեծի հրամանով: Այս հակասութեան պատճառը բարեպաշտական է, ինչպէս պէտք է տեսնենք:

12, 1—3) տեւեց մինչեւ 367 թուականի վերջը կամ 368 թուականի սկիզբը,[1] երբ տեղի ունեցաւ Արշակ թագաւորի անձնատուր լինելը, ուրեմն 367 կամ 368 թուականը միեւնոյն ժամանակ եւ Արշակի թագաւորութեան վերջին տարին է։ Արշակի գերութիւնից յետոյ տեղի է ունենում Արտաշատի պաշարումն եւ առումն (XXVII, 12, 5—12), որ տեւում է 368 հոկտ. —369 դեկտեմբ։[2] Արշակի որդին Պապը հռոմայեցւոց օգնութեամբ գահը բարձրանում նոյն այս 369 թուականին, եւ 374 թուականին սպանւում է Վաղէս կայսեր հրամանով ըստ անկասկածելի ընդարձակ վկայութեան Ամիանոսի (XXX, 1)։ Եւ որովհետեւ Ներսէս Մեծը թէ ըստ Փաւստոսի եւ թէ ըստ Խորենացու թունաւորուեցաւ Պապի հրամանով, ուրեմն Ներսէս Մեծը ապրած չէ աւելի երկար քան մինչեւ 374 թուականը։

Այս բոլոր ըստ Ամիանոսի։ Փաւստոս Բիւզանդացին իւր ժամանակագրական սխալ տեղեկութիւններով հանդերձ[3], ըստ ժամանա-

---

1 Marquart, Untersuchungen zur Geschichte von Eran, p. 221.

2 Marquart, ibid.

3 Այդ ժամանակագրական մոլորութիւններն են՝ Ներսէսը Վաղէս կայսեր (364—378) մօտ պատգամաւորելով, նորանից աքսորւում է (Փաւստ. Դ, ե) եւ 9 տարի աքսորի մէջ մնալով (Դ, զ), Վաղէս կայսեր մահից յետոյ վերադառնում է Հայաստան (Դ, ժգ)։ Հայ պարսկական պատերազմը, որը, ինչպէս վերեւ տեսանք, տեւեց 364—367/68 թուականը, ըստ Փաւստոսի՝ տեւում է 36 տարի (Դ, ի. ծա. ծդ) կամ նոյն իսկ 34 տարի (Դ, ծ), որ ի հարկէ

կագրութեան եւս համաձայնում է Ամիանոսի հետ։ Այսպէս նա (Ե, լբ) պատմելով Պապի սպանութիւնը՝ չէ ասում, թէ Պապը Յունաց մր

սուտ է։ Վերջապէս, ինչպէս յիշած ենք, Փաւստոսը պատմում է (Գ, իա), թէ Վաղէս կայսրը Արշակին թագաւորեցնելու համար Պարսից Ներսէհ թագաւորի (293—302) հետ պատերազմ է մղում, որը նոյնպէս անկարելի բան է։ Պ. Ստ. Մալխասեան իւր “Փաւստոս Բիւզանդացու ստուգապատմութեան„ մէջ (“Հանդէս„ 1896, ապրիլ, եր. 103—105) Փաւստոսի այս մոլորութիւններն առանձին ջանքեր գործ դնելով աշխատում է մեծացնել եւ Փաւստոսի պատմութիւնը ծիծաղելի դարձնել։ Նա Ներսէհի եւ Վաղէսի ժամանակակցութիւնը կատարեալ իրաւամբ սուտ եւ հակապատմական համարելով, միեւնոյն ժամանակ ասում է. “Արշակի թագաւորութեան ժամանակը, ըստ Փ.ի, որոշենք Վաղէսի ժամանակով, եւ ենթադրենք նորան թագաւորած Վաղէսի թէկուզ առաջին տարում, 364ին։„ Թէ ինչու պ. Մալխասեան Փաւստոսի վերոյիշեալ անդէպութիւնը սուտ համարելով, միեւնոյն ժամանակ այդ սուտի վերայ հիմնուելով, Արշակին թագաւորած է համարում 364 թուականին, մնում է ընթերցողի համար անհասկանալի։ Այսպէս պ. Մալխասեան “ըստ Փաւստոսի„ Արշակին թագաւորած համարելով 364 թուականին (մի բան, որ Փաւստոսն ամենեւին չէ ասում, այլ Խորենացին է, ըստ որոյ ժամանակագրութեան՝ Արշակը գահ է բարձրանում 364 կամ 365ին), այս թուականի հիման վերայ զանազան եզրակացութիւններ է հանում Փաւստոսի պատմութիւնից, որոնք ընթերցողի աչքում Փաւստոսի պատմութիւնը ծիծաղելի են կացուցանում։ Տիրանի թագաւորութեան սկիզբը նա սահմանում է 343ին։ (“Աւելի կանուխ, ասում է պ. Մ., դնել չէ կարելի„, տես Մարքուարտ. Untersuchungen etc. p. 219, որտեղ հեղինակը շատ յարգելի խորհրդածութեամբ Տիրանի գահակալութիւնն եղած է համարում 339ին)։ Եւ այս թուականի վերայ հիմնուելով՝ Մեհրուժան Արծրունու, Շաւասպի որդու մանկութիւնը հայկական-պարսկական պատերազմում անկարելի է համարում։ Դուրս է բերում, որ “ըստ Փաւստոսի„ Պապի ծնունդը եղած է ոչ առաջ քան 379 թուականը եւ այլն։

կայսեր հրամանով սպանուեցաւ, բայց միեւնոյն ժամանակ նորա պատմութիւնն այնպիսի նմանութիւններ ունի Ամմիանոսի պատմութեան հետ, որ ոչ մի կասկած չէ կարող լինել, որ Փաւստոս եւս Պապին սպանուած է համարում 374 թուին, ինչպէս Արշակի ամուսնութիւնը Ողիմպիայի հետ 360ին, եւ կորանց դաշինքը 363 թուականին։

Այս բոլորից յետոյ պարզ է, որ Խորենացու ժամանակագրութիւնը, ըստ որում Արշակը թագաւորած պէտք է լինի մինչեւ 395 թիւը, Պապն եւ Ներսէս Մեծը ապրած պէտք

Գ. Խալաթեանի այս խորհրդածութիւնները Փաւստոսի մասին միակողմանի են։ Այսպէս նա դուրս բերելով, որ "ըստ Փաւստոսի„ Պապը 379էն առաջ ծնուած չէ կարող լինել, անտես է անում նոյն Փաւստոսի պատմութեան մի այլ գլուխը (Ե. լբ), ըստ որում Պապը սպանուեց 374ին։ Ուրեմն պ. Խալթ. այս տեսակ դէպքում, եթէ ցանկանար անաչառ գտնուել, շատ շատ միայն իրաւունք ունէր եզրակացնելու, որ Փաւստոսի պատմութեան մէջ Պապի ծննդեան եւ մահուան նկատմամբ հակասութիւն կայ. եւ ոչ Փաւստոսի պատմութիւնը ծիծաղելի դարձնել։ Հէնց քննադատի կոչումն էլ այն է, որ այս տեսակ դէպքերում բաղդատողական կերպով աշխատէ պատմականը հակապատմականից, ուղիղը սուտից զանազանել, այն ինչ որ ուղիղ է ընդունել, իսկ այն ինչ որ սուտ է մերժել, եւ ոչ թէ „Das Kind mit dem Bade ausschütten", ինչպէս այս տեսակ դէպքերում ասում է գերմանացին։ Այս եղանակով ղեկավարուողի համար շատ մթութիւններ կը պարզուին։ Այսպէս Փաւստոսի յիշած 34 կամ 30 ամեայ հայկական-պարսկական պատերազմը հասկանալի է դառնում, եթէ այդ ժամանակամիջոցը հաշուենք Հռոմէական-պարսկական պատերազմի սկզբից մինչեւ Արշակ թագաւորի գերութիւնը, ինչպէս այդ արած է Մարքուարտ (Untersuchungen etc. p. 220)։

է լինին մինչեւ 402 թիւը եւայլն, սխալ եւ հա-
կապատմական է։ Մեզ մնում է բացատրել,
թէ ինչից ստիպուած Խորենացին մի այսպիսի
սխալ ժամանակագրութիւն է հնարում. եւ այս
մենք կ՚անենք, խօսելով Խորենացու պատմու-
թեան առանձին գլուխների մասին։

Այն՝ ինչ որ Խորենացին (Գ, ժը) պատմում
է Արշակի գահ բարձրանալու մասին, ամենեւին
չէ միաբանում Փաւստոսի պատմութեան հետ
(Գ, իա—Դ, ը)։ Փաւստոս (Գ, ի) պատմելով
Տիրանի գերութիւնն եւ կուրացութիւնը Ատըր-
պատականի վերակացու Շապուհ Վարազի ձեռ-
քով, (Գ, իա) պատմում է, թէ ինչպէս հայ
ազգի բոլոր դասակարգերը վրէժխնդրութեամբ
լցուելով, Անդովկ Սիւնուն եւ Արշաւիր Կամսա-
րականին խնդրագրով եւ ընծաներով Յունաց
թագաւորի մօտ են ուղարկում, "զի ի նա ձեռս
տուեալ ծառայեսցեն նմա հնազանդութեամբ,
եւ լինիցի նա նոցա թիկունք օգնականութեան՝
խնդրել վրէժս ի թշնամեաց նոցա։" Վաղէս (?!)
կայսրը սիրով ընդունելով Հայոց պատգա-
մաւորներին, Բասեն գաւառի Ոսխա գիւղի մօտ
յաղթելով Պարսից Ներսեհ (?!) թագաւորին,
ստիպում է նորան, Հայոց վերայ թագաւորե-
ցնելու Արշակին, որն իւր հօր հետ միասին
գերի էր գնացած Պարսկաստան։ Իսկ Խորե-
նացին, ինչպէս ցոյց տուինք (վերն՝ էջ 55),
յայտնի նպատակով Հայոց այս պատգամաւ-
որութիւնն առ Յունաց կայսր եւն այլընդայ-
լոյ խառնելով Կոստակի մահից յետոյ, Տիրանի

գահակալութեան ժամանակ պատմելով, այս-
տեղ սխալուած է միայն ասել. «Շապուհ թա-
գաւորեցոյց փոխանակ Տիրանայ զորդի նորա
զԱրշակ», առանց Յունաց կայսեր միջամտու-
թիւնը յիշելու: Բայց միևնոյն ժամանակ Խո-
րենացին չէ զլանում իւր այս կեղծիքը պատ-
ճառաբանելու: Խորենացու համեմատ Շապուհը
«ակն ածելով ի զօրացն Հայոց, զի մի խափան ինչ
առաջի արկելոց իւրոց գործոցն լինիցին. այսպիսի
իմն պատեհ համարեալ, բարեբարութիւն առ-
նելով՝ իւր հաստատել զաշխարհս»: Այս պատ-
ճառաբանութիւնն անհիմն է. Շապուհը, որ
չակնածեց Հայոց զօրքերից, Տիրանին գերելով
և կուրացնելով, այժմ չէր կարող նոյն զօրքից
ակնածելով Հայոց վերայ թագաւորեցնել Ար-
շակին: Փաւստոսի պատճառաբանութիւնը միակ
ուղիղն է. Շապուհը Կոստանդիոս կայսեր զէնքից
ակնածելով՝ Արշակին թագաւորեցնում է: Իսկ
մեր կեղծ պատմաբանի խօսքերը, թէ Շա-
պուհը «զհետ երթեալ յունական զօրացն, և
հասեալ ի Բիւթանիա, նստեալ ամիսս յոլովս»
և այլն, միանգամայն սուտ և հակապատմական
են. որովհետև բազմիցս յիշուած 25ամեայ
(338—363) պատերազմի ժամանակ այսպիսի
բան պատահած չէ: Վաղինակ Սիւնին, որին Շա-
պուհը՝ ըստ Խորենացու՝ Վահան Ամատունու փո-
խանակ սպարապետ է կարգում արևելեան
զօրքին և յանձնարարում Հայաստանը, յի-
շուում է Փաւստոսի մօտ (Գ, Թ) իբրև զօրապետ:
Խորենացու այս կեղծիքը մի մութ ակնարկու-

թիւն է Փաւստոսի պատմութեան վերայ (Գ, բ), ուր ասած է. «կացոյց արքայն (Արշակ) զՎասակ (Մամիկոնեան) զմիջին եղբայրն զիւր գայեակն ի սպարապետութիւն զօրավարութեան յիւր պատերազմացն...»: Որ Խորենացին Մամիկոնեան տան քաջերի գործերը սիրով լռութեան է մատնում, այդ մենք մինչեւ այժմ եւս տեսել ենք: Ահա Խոր. (Գ, ժը-ի) գաղտնիքը:

Հետեւեալ գլխում (Գ, ժթ) պատմում է Վաղենտիանոսի թագաւորելը, Պարսիկներին հալածելը, նորա թուղթն առ Արշակ, Արշակի անպատասխան թողնելը Հռոմայեցւոց կայսեր թուղթը եւ այս անխոհեմութեան հետեւանքը: Արդ պէտք է ասել, որ այս ամբողջ գլուխը մեր պատմարանի ինքնահնար գիւտերից մին է: Նախ սուտ եւ միանգամայն ստոյգ պատմութեանը հակառակ է, թէ «Յունաց թագաւորեալ Վաղենտիանոս, եւ գումարտակ ի միջերկրեայս առաքեալ, հալածականս առնէ զզօրս Պարսից». որովհետեւ հաստատապէս յայտնի է, որ Վաղենտիանոսը 364 թուի գարնան իւր Վաղէս եղբօր հետ բաժանելով հռոմէական լայնածաւալ կայսրութիւնը, այնուհետեւ (365—375) ինքն իշխում էր արեւմտեան երկիրների վերայ, եւ Պարսիկների դէմ երբեք պատերազմ մղած չէ, Վաղէս կայսրն եւս, որ իշխում էր Արեւելքում (364—378), ոչ միայն այդ ժամանակները Պարսիկներին հալածական չէ արել, այլ եւ կորանց դաշինքից յետոյ մինչեւ 368 թուականը լռութիւն պահպանելով, այս թուականին էլ

միայն մեծ զգուշութեամբ օգնեց Պապին թագաւորեցնելու, որպէս զի 363ին կրած դաշինքին խախտող չհանդիսանայ։[1] Երկրորդ Նամակի բովանդակութիւնը բոլորովին հակառակ է այս ժամանակուայ (364—368) պատմութեանը։ Հռոմայեցւոց կայսրը, որի նախորդը ստորութեամբ 363ին իւր դաշնակից Արշակ Հայոց թագաւորին բարձի թող էր արել, չէր կարող այժմ վերջինիս հետեւեալ խօսքերը գրել. "Պարտ էր քեզ յիշել... զերախտիսն՝ որ ի մէնջ ի վաղնջուց մինչեւ ցքեզ, եւ հեռանալ ի նոցանէ եւ մտանել մեզ, որպէս զի խառնեալ ընդ զօրս մեր մարտիցես ընդ նոսա։" Արդ Արշակ թագաւորը այդ ժամանակ ոչ միայն հեռացած էր Պարսիկներից, այլ եւ նոցա հետ, կեանքի եւ մահուան պատերազմ էր մղում, եւ Յունաց կողմից ոչ թէ երախտեաց, այլ մեծ ապերախտութեան էր հանդիպած։ Խորենացին միանգամայն անտեղեակ լինելով այն ժամանակուայ պատմութեանը, այս տեսակ անյաջող կեղծիք է հնարում։ Պատմութեան հակառակ են նաեւ կայսեր հետեւեալ խօսքերը. "Առաքեսցես զհարկս աշխարհիդ. եւ առեալ զեղբարս քո, եւ որ ընդ նոսա փտարանդիքս՝ ի բաց ածցին", որովհետեւ

---

[1] "Ըստ ժամանակ (Հայոց խնդրած) օգնութիւնը մերժելով, Տերենտիոս զօրավարի միջոցաւ Պապան (Պապը) Հայաստան տարուեցաւ, որը մի քանի ժամանակ պէտք է իշխէր առանց արքայական պատուոյ Հայ ազգի վերայ։ Այս այսպէս կատարուեցաւ այն ուղիղ խորհրդածութեամբ, որպէս զի մենք չդատապարտուինք իբրեւ խախտող խաղաղութեան դաշինքին" (Ammian Marc. XXVII, 1240)։

ինչպէս տեսանք (վերև՝ էջ 52), Հայոց թագաւորութիւնը այդ ժամանակ հարկատու չէր Հռոմայեցւոց կայսրութեանը, իսկ պատանդները ոչ միայն արդէն վաղուց Կ. Պոլսից վերադարձած էին, այլ և Գնէլն և Տիրիթ Արշակի հրամանով վաղուց արդէն սպանուած էին։

Այս բոլորից յետոյ մեզ մնում է միայն բացատրել, թէ ինչ բանի հիման վերայ մեր պատմաբանը մի այսպիսի կեղծիք է հնարում։ Արդ Խորենացու այս ամբողջ գլուխն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ընդհանուր հայեացք Արշակ թագաւորի քաղաքականութեան վերայ, ի հարկէ մի հայեացք Խորենացու տեսակէտից։ Խորենացին Փաւստոսի պատմութիւնից գիտէր, որ Արշակ թագաւորը Ներսէս Մեծի աքսորման համար Յունաց կայսեր հետ գժտուելով, նորա սահմանները աւերել էր (Դ, ժա), որ Արշակը Շապուհիբարեկամական հրաւիրին հետեւելով, գնացել էր Տիզբոն և նորան երդուել էր հաւատարիմ մնալու, բայց յետոյ իւր երդմանը դրժել և փախել էր (Դ, ժզ), որ Արշակը, չնայելով սորան, այնու ամենայնիւ միացել էր Շապուհի հետ և Մծբնի մօտ Յունաց կայսեր զօրքերը ջարդել էր, բայց դարձեալ Շապուհի կասկածելով, նորա դաշնադրութիւնն արհամարհել և Հայաստան էր փախել (Դ, ի)։

Մենք առ այժմ մի կողմ ենք թողնում այն հարցը, թէ Փաւստոսի պատմութեան այս գլուխներն ինչ պատմական արժէք ունին։ Անուրանալի է միայն, որ Խորենացին այս բոլորը

կարդալով, այն եզրակացութեանն է եկել, որ Արշակ թագաւորը չէ հետեւել մի որոշ քաղաքականութեան, այլ միշտ տատանուել է Պարսից եւ Յունաց աքցունեաց մէջ, երբեմն մէկի, երբեմն միւսի կողմը բռնելով: Խորենացին Արշակի այս անհաստատամտութիւնը (իւր կարծիքով) պախարակում է շատ խիստ խօսքերով. “Իսկ Արշակ, ասում է նա, եւ ոչ պատասխանի առնէ [Վաղենտիանոս կայսեր կարծեցեալ] թղթոյն. այլ նշկահեալ արհամարհեաց զնոսա, նաեւ ոչ զհետ Շապհոյ միտեցաւ ամենայն սրտիւ. այլ անձնահաճ եղեալ, պարծելով հանապազ ի գինարբուս եւ յերգս վարձակաց. քաջ եւ արի երեւեալ քան զԱքիղղեւս, իսկ արդեամբք Թերսիտեայ նմանեալ կաղի կորագլխոյ.[1] փառանդեալ յուրոց նախագլխոցն, մինչեւ զամբարտաւանութեանն ընկալաւ վարձս:„

Բայց արդեօք արդարացի՞ կերպով մեր պատմաբանն Արշակի գլխին այս տեսակ հայհոյանքներ է թափում: Արդ, ով որ ծանօթ է այն դարու պատմութեանը, նորա համար դժուար չի լինիլ հասկանալ, թէ Հայոց թագաւորն ինչ դժուար դրութեան մէջ էր գտնւում, եւ կարո՞ղ էր նա Հռոմայեցւոց հետ դաշնակցելով, Պարսից բարեկամութիւնն արհամարհել: Ամենեւին ոչ: Հայոց թագաւորի այսպիսի քաղա-

---

1 Աքիլլէսի եւ Թերսիտէսի նմանութիւնը Խորենացին վերցրել է Կեղծ-Կալլիսթենէսի պատմութիւնից (“Հանդէս„ 1891, ապրիլ, եր. 104):

քականութիւնը կարող էր երբեմն Հայաստանի համար կորստաբեր հետեւանքներ ունենալ։ Սորա համար կենդանի օրինակ կարող է լինել Յուլիանոս կայսեր ժամանակը, երբ Արշակը ստիպուած բացարձակապէս անցաւ Հռոմայեցւոց կողմն եւ պատերազմեց Շապուհի դէմ (տե՛ս վերն՝ էջ 9)։ Թէ ինչ հետեւանքներ ունեցաւ Հայոց թագաւորի այս վճռական քաղաքականութիւնը, այդ ցոյց տուեց 363ի դաշինքն եւ հայ-պարսկական պատերազմը։ Ուրեմն Հայաստանի անբարեյաջող աշխարհագրական դիրքն աչքի առաջ ունենալով, կարելի է ասել, որ Արշակը պէտք է շատ մեծ զգուշութեամբ վերաբերուէր դէպ ի Պարսից արքունեաց պահանջները։ Հռոմայեցւոց կայսրը, որ երբեմն նոյն իսկ անկարող էր գտնուում իւր սահմաններն արքայից արքայի յարձակումներից պաշտպանել, չէր կարող երաշխաւորել, որ Հայաստանը չի աւերուի Պարսիկներից։ Այս բանը հասկանալով Արշակ թագաւորը, ոչ միայն աշխատել է Շապուհի հետ բարեկամութիւն պահպանել, այլ եւ, ինչպէս երեւում է, քաջ դիտելով հռոմէական-պարսկական պատերազմի ընթացքը, երբեմն պատրաստակամութիւն է ցոյց տուել Պարսից հետ միանալու։ Այս բոլորից յետոյ կարծում ենք, որ մեր պատմաբանը բոլորովին ի զուր է դատապարտում Արշակին։

Հետեւեալ գլխում (Գ. ի) Խորենացին պատմում է Ներսէս Մեծի եւ իւր բարեկար-

գութեանց մասին, որը Փաւստոսի սքանչելի պատմութեան (Գ, գ—դ) համառօտութիւնն է։ Շաղիտա, Եպիփան եւ Գինտ անապատակեաց վանականների անունները Խորենացին վերցրել է Փաւստոսից (Ե, իե—իը եւ Զ, ժզ), իսկ որ նոքա Ալկունեաց ազգից էին եւ Եփրեմ անունով մի ընկերակից եւս ունէին, այդ մի ազատ յաւելուած է Խորենացու կողմից։ Ըստ Փաւստոսի Շաղիտան ասորի, իսկ Եպիփանը յոյն էր ազգով։ Խորենացին ինչպէս Փառէնի եւ միւսների, նոյնպէս էլ Ներսիսի եպիսկոպոս ձեռնադրութիւնը Կեսարիայում ծածկում է, եւ մենք դորա մասին յետոյ պէտք է խօսենք։

Հետեւեալ գլխում (Գ, իա) պատմում է Վաղենտիանոս կայսեր ահաւորութիւնը, Գնէլ մանկան հօր սպանութիւնը, Թէոդոսի ծանր զօրքով Հայաստան գալը, Ներսէս կաթողիկոսի ընդառաջելը, Կ. Պոլիս գնալը, Վաղենտիանոսից եւ Վաղէսից փառաւոր ընդունելութիւն գտնելը եւ պատանդներով ու Ողիմպիադա կոյսի հետ միասին Հայաստան վերադառնալը։

Արդ այստեղ Վաղենտիանոսի վերայ պատմածը Խորենացին վերցրել է Մաղաղասից,[1] որի պատմութիւնն սակայն անվաւերական է համարւում։ Թէոդոսի "ծանր զօրքով" Հայաս-

---

[1] "Հանդէս Ամս." 1894 փետրուար, եր. 60։ Իսկ "ի ձեռին ունէր զպարկութիւնն", խօսքերը Խորենացին բառացի կերպով ընդօրինակել է Կեղծ-Կալլիսթենէսից ("Հանդէս" 1891, ապրիլ, եր. 104)։

տան արշաւելն Արշակին պատժելու համար անմիտ «հէքիաթ» է, որ մեր պատմաբանը հնարել է, որպէս զի Ներսէս Մեծ Հայրապետին միջոց տայ բարեխօսելու Թէոդոս կայսեր առաջ եւ իւր բարեխօսութեամբ ազատելու Արշակին։ Ի՞նչպէս կարող էր Թէոդոսը 364—368 թուականին Հայոց վերայ արշաւել, քանի որ յայտնի է, որ նա մինչեւ իւր կայսր ընտրուիլը (19 յունուար 379) պատերազմ մղելով Սարմատացիների դէմ, յետոյ առանձնացել էր Սպանիայում եւ զբաղւում էր իւր անդային գործերով,[1] ուրեմն Արեւելքում զօրավարութեան պաշտօն վարած չէ։ Սուտ եւ հնարովի են մեր պատմաբանի խօսքերը, թէ Ներսէսն Ողիմպիա օրիորդին Հայաստան բերեց եւ ամուսնացրեց Արշակի հետ։ Ինչպէս մենք տեսանք, (վերն՝ էջ 8), այդ ամուսնութիւնը կատարուեցաւ 360 թուականին, առանց Ներսէս կաթողիկոսի միջամտութեան։ Մեր պատմաբանն այս կեղծիքը հնարելով նպատակ ունի՝ այս ամուսնութեան գործն եւս վերագրել Ներսէս Մեծ Հայրապետին։ Խորենացին իւր այս գլուխը հնարել է Փաւստոսի պատմութեան վերայ (Դ, է), ուր պատմուած է Ներսիսի պատգամաւորութիւնն առ Յունաց կայսր։

Խորենացին (Գ, իբ–իե) պատմում է Գնելի ամուսնութիւնը Փառանձեմի հետ, Տիրիթի եւ Վարդան Մամիկոնեանի արած ամբաստանու-

---

[1] Գաթըրճեան, Տիեզերական Պատմ. Բ, 352։

թիւնը Գնելի դէմ, Տիրան կոյր թագաւորի խեղդամահ անելը, Արշակի որսի ելնելը, Տիրիթի եւ իւր բարեկամ Վարդանի կրկին ամբաստանութիւնը, Գնելի սպանութիւնը Վարդանի ձեռքով, Արշակի ապօրինի ամուսնութիւնը Փառանձեմի հետ, Փառանձեմի գործած զարհուրելի ոճիրը Ողիմպիադայ տիկնոջ դէմ, Շապուհի պատերազմը Յունաց դէմ, Տիրիթի եւ Վարդանի սպանութիւնը Վասակի ձեռքով։[1]

---

[1] Ինչպէս առաջ եւս առիթ ենք ունեցել նկատելու, Խորենացու մօտ պատմական կարգն եւ նիւթի դասաւորութիւնը նոյնն է՝ ինչ որ Փաւստոսի մօտ։ Այսպէս Փաւստոսը կարգով պատմում է Արշակի թագաւորութիւնն եւ արած կարգադրութիւնները (Դ. ա—բ), Ներսէս Մեծի ընտրութիւնն, օծումն եւ գործերը (Դ. գ—դ), նորա պատգամաւորիլն առ Յունաց կայսրն եւ աքսորուիլն (Դ. ե)։ Ճիշդ այս կարգով եւ Խորենացին պատմում է Արշակի թագաւորութիւնն եւ արած կարգադրութիւնները (Դ. ժը), Ներսէս Մեծի ընտրութիւնն եւ գործերը (Դ. ի) եւ նորա պատգամաւորիլն առ Յունաց կայսր (Դ. իա)։ Միայն թէ այս կարգը Խորենացու մօտ ընդհատուած է Դ. ժթ գլխով, որը, ինչպէս տեսանք (վերն՝ էջ 67—68) Խորենացու կողմից մի ինքնահնար հայեացք է Արշակի թագաւորութեան վերայ, յօրինուած Փաւստոսի պատմութեան վերայ։ Մինչդեռ ըստ Փաւստոսի Ներսէսն իւր առաջին պատգամաւորութեան ժամանակ աքսորւում է, Խորենացին ընդհակառակն նորան Հայաստան է վերադարձնում պատգամաւորներով (յայտնի նպատակով, ինչպէս շուտով պիտի տեսնենք)։ Այս է պատճառը, որ Խորենացին բաց է թողել Փաւստոսի Դ. գրք. ժբ գլուխները, որոնց մէջ պատմւում են Ներսէս Մեծի աքսորանքն եւ նորա բացակայութեան ժամանակ Հայաստանում տեղի ունեցած դէպքերը, իսկ յետոյ (Դ. իբ) պատմում է Արշակի խռովութիւնը Գնելի հետ եւայլն, որ կրկին Փաւստոսի պատմութեան (Դ. ժե) համառօտութիւնն եւ յեղաշրջութիւնն է, ինչպէս շուտով պիտի տեսնենք։ Ուրեմն Խորե-

Համեմատելով Խորենացու այս պատմութիւնը Փաւստոսի պատմութեան հետ (Դ, ժե—ժը), գտնում ենք բազմաթիւ ակնյայտնի նմանութեանց հետ ի միասին նաեւ բազմաթիւ հակասութիւններ: Այսպէս՝ մինչդեռ ըստ Փաւստոսի այս բոլոր եղերական պատմութեան շարժառիթը լինում է Տիրիթի եւ Արշակի տըռփանքը դէպ ի գեղեցկուհին Փառանձեմ, ըստ Խորենացու Գնելի կորստեան պատճառը լինում է իւր փարթամութիւնն եւ հարստութիւնը, որը Արշակը յափշտակել է ցանկանում: “Բայց կայսերն„, ասում է Խորենացին (Գ, իա), “բարեբարութիւն արարեալ մանկանն Գնելայ՝ յաղագս զուր ի նոցանէ մահուանն Տրդատայ հօր նորա, տայ նմա զպատիւ հիւպատոսութեանն եւ գանձս յոլովս: Ընդ որ խանդացեալ Տիրիթ, խորհէր նմա ի չարիս հանապազ, սպասելով նմա դիպող աւուր:„ Այս օրը հասնում է, երբ Գնելին իւր կուրացած պապը Տիրան ընծայում է իւր բոլոր կայքերն եւ կալուածքները, “իբր զինքն ունելով պատճառ սպանմանն„ Տրդատի, Գնելի հօր. երբ Գնելը Փառանձեմի հետ ամուսնանալով եւ “թագաւորապէս հարսանիս արարեալ,„ գրաւում է հայ նախարարների սրտերը: Այստեղ երկու պատմագիրների մէջ նմանութիւնները ակնյայտնի են, որ եւ մենք յառաջ ենք բերում:

նացին այստեղ պատմական կարգը խանգարել է այն պատճառով, որ Ներսէսի մի անգամ պատգամաւորութիւնից որոշ տենդենցիայով երկուսն է շինել:

Փաւստոս Գ, ԺԷ:

Ապա Տիրիթ ի հնարս նենգութեան մտանէր, եւ թագուցեալ վարձէր իւր օգ-նականս եւ սատարս, որով զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ: Եւ ինքն սկսանէր զԳնե-լոյն նենգութեամբ առ թա-գաւորն Արշակ մատուցանէր՝ թէ Գնել թագաւորել խորհի, եւ զքեզ սպանանել. եւ ա-մենայն մեծամեծք, եւ նա-խարարք եւ ազատք սիրեն զԳնել, եւ ամենայն աշ-խարհիս նախարարք կամին զթագաւորութիւն նորա ի վե-րայ իւրեանց լինել քան զքո: Արդ, ասէ, քննեա եւ տես արքայ, զինչ գոր-ծեսցես...:

Խորենացի Գ, ԻԲ:

(Նախարարացն ամենեցուն) համեալ ընդ նա (իմա ընդ Գնել) եւ սիրել, եւ տուն առ նա զգուշակս իւրեանց, զօրս առեալ, մեծապէս հանդերձեաց զարդու եւ զինու. պատուել եւս սիրե-ցին զնա: Աստանօր եգիտ Տիրիթ պատճառս ժամանակին, եւ մատուցեալ առ Արշակ հանդերձ բարեկամաւ իւ-րով Վարդանաւ զինակրաւ արքայի, որ ի Մամիկոնեան տոհմէն էր, ասէն. Ո՞չ գիտես, զի խորհեալ է Գնել սպանանել զքեզ, զի ինքն փոխանակ քո թագաւորես-ցէ...:

Պարզ է որ Խորենացին իւր պատմութիւնը գրելու ժամանակ Փաւստոսի պատմութիւնը աչքի առաջ ունէր: Բայց նա այստեղ նոյն ե-ղանակով է վարւում, ինչպէս շատ դէպքերում վարուել է, այսինքն Փաւստոսի պատմութեան մէջ ըստ իւր ճաշակի եւ տենդենցիայի փոփո-խութիւններ է մտցնում: Օր. Խորենացին Ար-շակի տափանքը լռութեան է մատնում, որով-հետեւ իբրեւ ողջախոհ վանական չէ ցանկա-նում իւր զգաստ ընթերցողների լսելիքը տաղտ-կացնել այսպիսի տգեղ պատմութիւններով: Փաւստոսը Գնելի թաղման հանդէսը նկարա-գրելու ժամանակ ասում է. “Իսկ կինն սպա-նելոյն Փառանձեմ զհանդերձսն պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարհանին

կոծէր. ձայն արկանելով ճչէր, յողբս արտասուաց յաղիողորմ գուժի առհասարակ զամենեսեան լացուցանէր: Իսկ Թագաւորն Արշակ ի լալիւն տեսանէր զկինն սպանելոյն, տափէր եւ ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեան:» Իսկ Տիրիթի համար ասում է. «Մինչդեռ ի նմին կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ տափանացն: Պատգամ յղէր առ կին մեռելոյն. ասէ՝ զի մի՛ կարի զանձն քո աշխատ առնէր այդչափ, զի այր բարի ես եմ քան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան:» Այս տեսակ նկարագրութիւններն այն ժամանակուայ ողջախոհ վանականին առ նուազն նոյնչափ անախորժ պիտի թուէին, ինչպէս Զօլայի La Terre կեղտոտ ռոմանը դարուս բարոյական մարդկանց: Այս տեսակ՝ զգաստ ականջների համար յիրաւի տաղտկալի նկարագրութիւններով Փաւստոսը հարուստ է: Տես օր. Փաւստոս (Դ, խդ), ուր հեղինակը նկարագրում է Պապ արքայորդու ախտերը, կամ (Դ, ծը) ուր Հայաստան եկող Շապուհ Բ.ի անարժան վարմունքը նկարագրուած է: Ահա՛ Փաւստոսի այս տեղերն են, որոնցից տաղտկացած մի ուրիշ ողջախոհ վանական, տարակուսանօք բացագանչում է. «Արդ յայսպիսումն քաղաքի եւ ի մէջ այնչափ բազմութեանն ուսելոյ վարժեալ այրս Փաւստոս, այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լսողաց բանս կարգէր ի պատմութեան իւրում. քա՛ւ եւ մի՛ լիցի:»[1]

1 Ղազար Փարպեցի. Ա. գ.

Իսկ Խորենացու նկարագրութեան մի քանի տեղերը ակնյայտնի կերպով ապացուցանում են նորա կեղծիքը։ Օր. սուտ է, թէ "Տիրան ողբացեալ դառնապէս զՏրդատ զորդի իւր, զհայր գնելայ, իբր զինքն ունելով պատճառ սպանման նորա„ (որովհետեւ Յուլիանոսի առաջ իջնելով, պատանդ էր տուել Տրդատին, տե՛ս Խոր. Գ, ժգ). որովհետեւ ինչպէս տեսանք (վերն՝ էջ 9), Տիրանն ոչ ժամանակակից է եղել Յուլիանոսին եւ ոչ էլ երեւակայական Տրդատին պատանդ է տուել։ Նոյնպէս Խորենացին Փաւստոսից (Գ, ա) գիտէր, որ Տիրան կուրացրած թագաւորն Արշակի թագաւորութեան ժամանակ ապրում էր, բայց թէ ինչ մահով նա մեռաւ, այդ նա Փաւստոսի մօտ չէր գտել։ Եւ ահա Խորենացին ցանկանալով Փաւստոսի պատմութիւնը լրացնել, հնարում է Տիրանի խեղդամահ լինելն Արշակի հրամանով, ի հարկէ ցանկանալով վերջինիս հայրասպան հանդիսացնել։ Իսկ Տիրանին յատկապէս խեղդամահ է անել տալիս, որովհետեւ Փաւստոսի պատմութիւնից (Գ, ժգ) գիտէր, որ Տիրանն ինքն Դանիէլ ասորուն խեղդամահ անել էր տուել, ցոյց տալու համար, որ "զփոխարէնսն Դանիէլի առն Աստուծոյ հատոյց. որով չափով չափեաց՝ չափեալ եղեւ ըստ Գրոց։„ [1]

Խորենացին զարմանալի փոփոխութեան է ենթարկում նաեւ Վարդան Մամիկոնեանի խա-

1 Մատթէոս. Է, 2։

ղացած դերն այս եղերական պատմութեան մէջ։ Ըստ Փաւստոսի՝ սա Վասակ սպարապետի անդրանիկ եղբայրն եւ իւր տոհմի նահապետն կամ տանուտէրն էր, որն Արշակի հրամանով գնելին նենգութեամբ Հայոց բանակն է հրաւիրում, որով եւ լինում է պատճառ նորա մահուան։ Նոյնպէս Փաւստոս (Դ, ԺԲ) պատմում է Վարդանի մահը բոլորովին այլ կերպով։ Փաւստոսի մօտ Վարդան եւ Վասակ եղբայրները ներկայանում են իբրեւ գաղափարական հակառակորդներ։ Մինչդեռ Վարդանը միանգամայն հակառակ է հռոմէական դաշնակցութեան եւ ամէն հնարք գործ է դնում, Արշակին կայսեր դաշնակցութիւնից հեռացնելու եւ Շապուհի հետ կապելու, Վասակն ընդհակառակն ամէն միջոց գործ է դնում Արշակին համոզելու, որ նա չհաւատայ Շապուհի պատիր խոստումներին եւ ամենեւին չենթարկուի նորա ազդեցութեանը։ Գաղափարների այս տեսակ տարբերութիւնից յառաջանում է երկու եղբայրների ոխերիմ թշնամութիւնը միմեանց դէմ, որի հետեւանքն եւ լինում է Վարդանի սպանութիւնը Վասակի ձեռքով։ Բոլորովին այլ կերպով է պատմում Խորենացին այս բոլորը։ Ըստ Խորենացու՝ Վասակը թշնամացած է Վարդանի հետ ոչ թէ գաղափարի համար, այլ “վասն աղջկան միոջ հարճի, վասն որոյ նախատեաց զնոսա արքայ բանիւք կսկծեցուցանողօք„, մի կեղծիք, որ մեր ծերունու անունը յաւիտենական նախատինք է բերում։ Նոյնպէս Խորենացին Վասակին չէ

անուանում սպարապետ եւ Վարդանին չէ անուանում նահապետ կամ տանուտէր, այլ երկուսին է լոկ ընկերներ Արշակ թագաւորի, եւ այս շատ հասկանալի է Մամիկոնեան տան թշնամի պատմագրի կողմից։ Մինչդեռ ըստ Փ.ի Տիրիթն առանձին է սպանուում[1] (Հայոց զօրագնդից, Բասենի անտառներում), իսկ Վարդանը՝ առանձին (Վասակի ձեռքով, Տայոց աշխարհում), Խորենացին կարճ կտրելով, այս երկու բարեկամներին էլ միասին է գերեզման ուղարկում։ Սոցա՝ գաղափարով եւս միմեանց հետ բարեկամացուում է, Վարդանի խաղացած քաղաքական դերը մասամբ յանձնելով Տիրիթին։ Շապուհը, ասում է Խորենացին, “յայտնեաց զցասումն՝ զոր ունէր առ Արշակ, վասն ոչ նմա՝ այլ կայսեր հարկելոյ զայնքան ամս։ Վասն որոյ առաքէ առ նա Արշակ զՏիրիթ եւ զնորուն սիրեցեալն Վարդան արժանի պատարագօք, խնդրել զհաշտութիւն„ եւայլն։ Այս բոլորը Փաւստոսի պատմութեան (Դ. ժզ) յեղաշրջումն է։ Այդ ժամանակները, ինչպէս արդէն նկատած

---

1 Խորենացու պատմածը Տիրիթի եւ Վարդանի մահուան մասին բաւական նմանութիւն ունի Փ.ի պատմութեան հետ (որ միայն Տիրիթի մահուան մասին է)։

Փաւստոս։

“Ցոյց հզօրման թագաւորն Արշակ ազդարարեալ բանակին չէր լինել Տիրիթայն. չէ էէրրեւ հասցէն նմա, անդէն ի տեղւոջն սպանցէն։„

Խորենացի։

“Արշակ հրամայէ նոյն Վասակայ չէր նոցա լինել բազմամեան ինքեան, չէ ոսր ի— հասցէ՝ սպանցէ։„

ենք, Հայերը հարկատու չէին ոչ Հռոմայեցինե-րին եւ ոչ էլ Պարսիկներին։

Թողնենք այս Տիրիթ եւ Վարդան բա-րեկամներին եւ վերադառնանք Գնելի սպա-նութեան պատմութեանը։ Նախ պէտք է նկա-տել սպանման տեղի նոյնութիւնն երկու պատմա-գիրների մէջ։ Ըստ Փաւստոսի՝ Գնելը սպանուե-ցաւ Շահապիվանում, ուր գտնուում էր Արշակ թագաւորն եւ Հայոց զօրաբանակը։ Խորենացին mutatis mutandis համաձայնուում է Փաւստոսի հետ։ Նախ նա Գնելին բնակուել է տալիս Ա-ղիովիտ գաւառում, ապա Շահապիվան լերան[1] վե-րայ նետահար անել տալով, թաղել է տալիս Աղիովիտ դաշտում, արքունական Զարիշատ աւա-նում։ Արդ որովհետեւ ըստ Փաւստոսի (Դ, ծե)՝ Զարիշատ մեծ աւանը գտնուում էր "ի գաւառին յԱղիովտի," դորա համար կասկած չէ կարող լինել, որ Մովսէսը Գնելին սպանուել եւ թա-ղուել է տալիս նոյն տեղն, ուր եւ Փաւստոս։ Իսկ Արշակի որս ելնելն Խորենացին կարկտել է Փաւստոսի պատմութեան վերայ (Գ, ի), որ տեղ պատմած է Տիրան թագաւորի որսի ելնելը "յերկրին Ապահունեաց, յոտին մեծի լերինն Մա-սեաց... տեղւոյն՝ որում անուն կոչի քաղաք Ա-ղիորսոյ" (այսպէս էլ Արշակը որսի է ելնում

1 Արդեօք Շահապիվան միայն լեռան էր անուա-նուում, թէ՝ այդ անունով որ եւ է աւան կամ դաստա-կերտ եւս եղած է, մնում է անորոշ։ Հայր Ալիշան, իւր "Տեղագրութիւն Հայոց Մեծաց" § 85 նոյնպէս միայն Շա-հապիվան լեռան է յիշում։

„Ընկեցաւ Մանեայ առնել որսս յիւրում սիրեցեալ գաւառին ի Կոգայովիտ„): Ըստ Փաւստոսի (եւ ըստ ճշմարտութեան) Գնելը սպանուեցաւ ոչ թէ որսի ժամանակ, այլ Արշակի հրամանով Նաւասարդի տօնին (որը սուրբ Յովհաննէս Մկրտչի տօնին էր փոխարինուած), Հայոց զօրաբանակի հանդէպ Շահապիվանում գլխատուեցաւ, չնայելով, որ Ներսէս Մեծը փառանձեմի աղերսողում ողբից յուզուած՝ խափանեց սուրբ պաշտօնը, շտապեց Արշակ Թագաւորի խորանն եւ իւր մօրքի ամբողջ կարողութեամբ աշխատեց Արշակ Թագաւորին համոզելու, որ Գնելի անիրաւ գլխատման հրամանը յետ առնէ: Արշակը, զակատուած փառանձեմի՝ Գնելի կնոջ սիրով, չյարգեց հայրապետի միջնորդութիւնը եւ Գնելը գլխատուեցաւ, որից յետոյ եւ Արշակը ամուսնացաւ նորա կնոջ հետ: Խորենացին, որպէս զի ստիպուած չլինի հայրապետի պաշտօն խափանելն եւ ապարդիւն միջնորդութիւնը յիշելու, Գնելին սպանել է տալիս որսի ժամանակ: Ներսէս Մեծը միայն ուշ, բոլորից յետոյ է իմանում Գնելի մահը եւ նզովում է Արշակին: Պէտք է նկատել եւ այն, որ ինչպէս Փաւստոսը, այնպէս էլ Խորենացին Գնելի մահից անմիջապէս յետոյ պատմում է՝ 1. Արշակի ամուսնութիւնը փառանձեմի հետ, 2. Պապի ծնունդը, 3. Մըրջիւնիկ երիցի անլուր ոճիրը. եւ այս եւս նշան է, որ նա իւր պատմութիւնը գրելու ժամանակ Փ.ի պատմութիւնը աչքի առաջ ունէր: Միայն Խորենացին անյաջող կերպով ստախօսում է, Ո-

ղիմպիային Արշակի ——ջին կինը համարելով: Ըստ Փաւստոսի Արշակը փառանձեմի յափշտակութիւնից յետոյ միայն, “իբրեւ կինն (փառանձեմ) ի նա ոչ յանգոյց զմիտս իւր,„ ամուսնացաւ Ողիմպիայի հետ: Եւ իրաւ, եթէ Ողիմպիային (որի ամուսնութիւնը Արշակի հետ եղաւ 360 թուին), համարենք Արշակի առաջին կինը, այն ժամանակ փառանձեմի՝ Պապի մօր ամուսնութիւնը Արշակի հետ պէտք է եղած համարենք 360 թուից յետոյ. եւ այդ ժամանակ ժամանակագրական մեծ անտեղութիւն դուրս կու գայ, որովհետեւ Պապը սպանուեցաւ 374 թուին, երկու մանուկ որդի թողնելով: Իսկ որ Խորենացին Ներսէս Մեծի գահից հեռանալն եւ սարկաւագ Չունակի կաթողիկոսութիւնն ամենեւին չէ յիշում, այդ եւս շատ հասկանալի է Խորենացու նման եկեղեցականի կողմից, որն ամէն հնարք գործ է դնում՝ հայրապետական աթոռի վեհութիւնն եւ զօրութիւնը ցոյց տալու համար:

Խոր. (Գ, իզ) պատմում է Շապուհի ապարդիւն արշաւանքը Տիգրանակերտի վերայ, այս քաղաքի պաշարումն, Մծբին յետ նահանջելն եւ սպառնական թուղթը Տիգրանակերտացիներին, իսկ իը. գլխում Խորենացին պատմում է նոյն քաղաքի “առումն եւ բնաբարձ քանդումն:„

Արդ որովհետեւ այս եւ հետեւեալ գըլուխների մասին Շապուհի պատերազմների խօսք կայ, մենք անհրաժեշտ ենք համարում՝

նախ մի քանի խօսք ասել Պարսից եւ Հռոմէացւոց մէջ տեղի ունեցած պատերազմների մասին, որով եւ մենք մեր տուած խոստումը (վերն՝ էջ 56) կատարած կը լինինք։ Խոր. (Գ, ժբ, որի վերնագիրն է. "Պատերազմ Շապհոյ ընդ Կոստանդեայ„) պատմում է. (Շապուհ Որմզդեան) "յարձակեցաւ ի մէջերկրայս եւ ի Պաղեստինէ։ Իսկ Կոստանդեայ արարեալ կեսար զՅուլիանոս, սպառազինեցաւ ընդդէմ Պարսից. եւ տուեալ ճակատ, երկոքին կողմանքն պարտեցան. քանզի բազումք անկան յիւրաքանչիւրոցն. եւ ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց, մինչեւ ի հաւանութիւն եկեալ, արարին խաղաղութիւն ամս սակաւս։ Եւ ի Պարսից դարձեալ Կոստանդեայ, յերկար հիւանդացեալ վախճանեցաւ ի Մոմփսիւեստի քաղաքին Կիւլիկեցւոց, թագաւորեալ ամս քսան եւ երիս։„ Արդ արտաքին պատմագիրներից գիտենք, որ Շապուհի եւ Կոստանդիոսի մէջ ծագած պատերազմը ընդհատումներով տեւեց սորա կայսրութեան առաջին տարւոյ մինչեւ վերջին տարին (338—361)։ Արդ ով որ այս երկարամեայ պատերազմի պատմութիւնը գիտէ,[1] նորա համար պարզ կը լինի Խորենացու տուած վերոյիշեալ տեղեկութեանց արժէքը, որ ոչինչ է։ Մեր ծերունի պատմագիրն արտաքին պատմագրութիւնից գիտէր, որ Կոստանդիոսի եւ Շապուհի մէջ պատերազմներ են տեղի ու-

[1] Տես Գաթըրճեան, Տիեզերական պատմ. Բ, 490—493 եւ Նէօլդեկէ, Պատմութիւն Սասանեան, (Թարգմ. "Արարատում„ 1895, սեպտ. եր. 332—33)։

նեցել, բայց այն պատերազմի պատմութիւնը ուսումնասիրած չլինելով, նորան լոկ մի երկու ֆրազներ է նուիրում, այլեւս չասելով, թէ երբ, ինչ տեղ Հռոմայեցիք եւ Պարսիկները ընդհարումներ ունեցան, ով որ տեղ յաղթեց կամ յաղթուեց: Խորենացու տուած տեղեկութիւնները Յուլիանոսի եւ Յովիանոսների ժամանակի մասին (361—363) արդէն բոլորովին սուտ եւ հակապատմական առասպելներ են, որոնց մասին արդէն խօսել ենք (վերն՝ էջ 9): Նոյնպէս աններելի յանցանք է Խորենացու կողմից, որ նա 363 թուին կռուած կորանաց դաշինքի մասին ամենեւին տեղեկութիւն չունի: Մինչդեռ այդ օրից սկսուեցան Շապուհի յարձակումները Հայաստանի վերայ, որոնք եւ տեւեցին մինչեւ Պապի թագաւորութիւնը (363—369), իսկ Հռոմայեցւոց եւ Պարսից մէջ մինչեւ 371 թուականը ընդհակառակն խաղաղութիւն էր տիրում,[1] Խորենացին բոլորովին անծանօթ լինելով այդ ժամանակների պատմութեան կարծում է, թէ 363 թուից յետոյ եւս Պարսից եւ Հռոմայեցւոց մէջ անընդհատ պատերազմները

[1] Արդէն մենք տեսանք (վերն՝ էջ 68), որ 368 թուին Վաղէս կայսրը մեծ զգուշութեամբ օգնեց Հայերին, որպէս զի Յովիանոսի կռած դաշինքին խախտող չհանդիսանայ: Դորանից յետոյ Ամմիանոսը (XXVII, 12) պատմում է, որ Շապուհը լսելով Հռոմայեցւոց Հայերին հասցրած օգնութիւնը, ինչպէս եւ նոցա միջամտութիւնը Վրաց թագաւորութեան գործերում, չափազանց զայրացաւ եւ 369 թուին մեծ պատրաստութիւններ էր տեսնում Հռոմայեցւոց վերայ յարձակուելու, [որ եւ արաւ 371 թուին: (Ամմիանոս XXIX, 1:)

շարունակում են: Արդէն մենք խօսել ենք այն [illegible]ների մասին, որ Խոր. (Գ, ժը եւ ժթ) ագիտաբար շարադրում է հռոմէական-պարսկական պատերազմի մասին, (տես վերն՝ էջ 69) (Գ, իե) պատմում է, որ "քինախնդիր անցելոցն մարտից կամեցեալ լինել Շապուհ, ինքն ելանէ պատերազմել ընդ Յոյնս, որոյ աղագաւ խնդրէ զԱրշակ մեր թագաւոր հանդերձ ամենայն զօրօք Հայոց ընդ իւր լինել: Իսկ Արշակ ոչ կամեցաւ իւրովի երթալ, այլ բարուրս եդեալ, դդրն գունդ առաքէ զկնի Շապհոյ,, այլ եւս չասելով, թէ ինչ եղաւ Շապուհի այս արշաւանքի հետեւանքը: Այսքանն միայն նա ասում է, որ Շապուհ իւր այս արշաւանքի ժամանակ (Գ, իզ) եւ այս արշաւանքից վերադառնալիս (Գ, իը) հանդիպում է Տիգրանակերտին: Սակայն Խորենացու այս պատմութիւնն եւս սուտ է: Ամմիանոսից եւ Փաւստոսից հաստատապէս յայտնի է, որ Արշակը կորանաց դաշինքից մինչեւ իւր անձնատուր լինելը (363—368) Շապուհի հետ անընդհատ պատերազմների մէջ է եղել, եւ նորան երբեք օգնական զօրք չէ տուել Յունաց կայսեր դէմ: Խորենացին (Փաւստոսի պատմութեան վերայ, Գ, ի) հնարում է այս անմիտ արշաւանքը, որպէս զի յետոյ (Գ, իթ) բաց ի Շապուհից եւ հայ նախարարներից՝ Վաղէսին եւս թշնամի հանդիսացնէ Արշակին, վերջին եւ անելանելի դրութեան մէջ դնէ, որպէս զի Ներսէս Մեծ հայրապետը նորան կորստից ազատող հանդիսանայ:

Բայց նախ քան Խորենացու տուած տեղեկութիւնները հռոմէական-պարսկական պատերազմների մասին սպառելը, հարկ է, որ Խորենացու վերոյիշեալ (իզ եւ իը) գլուխների մասին խօսինք, որոնց մէջ, ինչպէս ասացինք, նա պատմում է Տիգրանակերտի առնելն եւ կործանելը։

Արդէն մեզնից առաջ թէ ազգային եւ թէ օտարազգի գիտունք զարմանալով ցոյց են տուել մեր պատմաբանի կեղծիքն եւ խարդախութիւնը, որոնք ծածկուած են այս գլուխների մէջ։[1] Խորենացին Փաւստոսի պատմութիւնից գիտենալով Տիգրանակերտի աւերումն Պարսիկների ձեռքով (տե՛ս քիչ ներքեւ), այստեղ ուղղակի բառացի կերպով արտագրում է կեղծ Կալլիսթենեսի առասպելախառն պատմութիւնը Տիւրոսի եւ Թեբէի կործանման մասին Աղեքսանդր Մակեդոնացու ձեռքով, անելով հետեւեալ փոփոխութիւնները միայն. այնտեղ ուր Կալլիսթենէսը գրում է Տիւրոս եւ Թեբէ, Խոր. գրում է Տիգրանակերտ, ուր Տիւրացիներ եւ Թեբացիներ՝ Տիգրանակերտցիք, ուր Աղեքսանդր, Խոր. գրում է Շապուհ, ուր Մակեդոնացիներ՝ Պարսիկներ, ուր Գազա՝ Մծբին։ Այս նամակը, որ Շապուհը գրում է Տիգրանակերտցիներին, բառացի ընդօրինակութիւն է այն նամակի, որ Աղեքսանդրը գրում է Տիւրացիներին։ Մինչեւ անգամ Տիգրանակերտի պաշարման ժամանակ տեղի ունեցած դէպքերը, ձայնարկութիւնները, առման

---

1 Տես "Հանդէս Ամսօրեայ", 1891, Ապրիլ, եր. 103։

ժամանակ գործ գրուած մեքենաները նոյնն են, որոնք ըստ կեղծ Կալլիսթենեսի գործածուեցան Թեբէի առման ժամանակ։

Գալով այն հարցին, թէ ո՞րտեղից գիտէր Խորենացին Տիգրանակերտի աւերման պատմութիւնը, դորա մասին պէտք է պատմել հետեւեալը։ Նախ եւ առաջ պէտք է գիտենալ, որ ազգային պատմութեան մէջ երկու Տիգրանակերտ է յիշւում։ Դոցանից առաջինը, որն եւ կոչւում է Ամիդ (կամ Դիարբեկիր) այսօր եւս կանգուն է եւ գտնւում է Տիգրիս գետի ափին, Ծոփաց աշխարհում։ Բոլորովին ուրիշ քաղաք է յոյն եւ լատին պատմագիրներից բազմիցս յիշուած Տիգրանակերտը, որ հիմնեց Տիգրան Մեծը Հայաստանի եւ Միջագետքի սահմանում, Մծբնից մօտ երկու օրուայ ճանապարհ դէպ ի արեւմուտք, նման Նինուէին եւ Բաբելոնին, շրջապատուած 50 կանգուն բարձրութեամբ պարիսպներով, զարդարուած շքեղ ապարանքներով եւ պարտէզներով։ Լուկուլլոս 69 թուականին, հոկտ. 6ին յաղթելով Տիգրանին, կործանեց նաեւ նորա հիմնած քաղաքը։ Այնպէս ինչպէս վերեւ նկարագրուեցաւ, այս Տիգրանակերտի դիրքն որոշում է Զախաու, որն անձամբ այն կողմերը գտնուել եւ աչքով ամէն հանգամանքներ տեսել եւ կշռել է (իւր „Ueber die Lage von Tigranokerta“, Abh. der Berliner Akademie 1880 շարադրութեան մէջ) որի հետ համաձայնւում են Մոմզէն (Römische Geschichte III. 68, Anm.) եւ Կիպերտը։

Արդ Փաւստոս Բիւզանդացին (Դ, իդ) պատմում է, պարսկահայկական պատերազմի (363—368) առաջին ժամանակները Շապուհը Մեհրուժան գաւաճանի առաջնորդութեամբ արշաւելով Հայաստան, աւերում է նաեւ Տիգրանակերտը: Ահա Փաւստոսի խօսքերը. „Ապա զօրաժողով լինէր թագաւորն Պարսից Շապուհ. եւ լրտես արձակէր, գիտել զարքայն Հայոց զԱրշակ: Եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն զԱնտրապատական սահմանօքն, զի անդ սպասէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՄեհրուժանն՝ ընդ այլ կաթել ասպատակ յաշխարհն Հայոց առնէին: Զի ընդ Աղձնիս եւ ընդ Ծոփս մեծ, ընդ Անգեղ տունն եւ ընդ գաւառն Անձտայ ընդ Ծոփս Շահունոց, ընդ Մզուր գաւառն եւ ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն ասպատակեալ հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրեւ զջուրս բազումս...: Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին. քառասուն հազար երդ, զայն նոյնհետայն ի գերութիւն խաղացուցին. եւ ինքեանք ի Ծոփս մեծ արշաւեցին...„ Որ այստեղ յիշուած Տիգրանակերտն Ամիդ կամ Դիարբեքիրն է, դորա մասին Փաւստոսի ընդարձակ նկարագրութիւնը ոչ մի կասկած չէ թողնում:[1]

[1] Այս բոլորից յետոյ մարդ առանց տարակուսանաց չէ կարողանում կարդալ Ամմիանոսի ընդարձակ պատմու-

Ահա՛ Փաւստոսի այս պարզ եւ ստոյգ պատմութիւնն է, որ Խորենացին կեղծ Կալլիսթենեսի առասպելներով այլանդակել է։ Խորենացին այսպէս վարուելով, միեւնոյն ժամանակ զանց է առնում յիշելու այն փայլուն յաղթութիւնը, որ Վասակ սպարապետը, Մամիկոնեան տան հերոսը, կանգնեց Շապուհի զօրքի վրայ, ինչպէս Փաւստոսն իր վերոյիշեալ գլխում պատմում է։

Նկատենք, որ ըստ Փաւստոսի՝ Պարսիկները նոյն արշաւանքի ժամանակ կողոպտում եւ աւերում են Անի բերդն եւս։ "Բայց միայն մատնեցաւ ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին անդ..., ելանէին ի վեր եւ կործանէին զպարիսպս նորա եւ իջուցանէին անթիւ գանձս ի բերդէն։ Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զարշակունոյ, եւ խաղացուցանէին ի գերութիւն զոսկերս թագաւորացն...։ Զի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեանն ըստ օ-

---

թիւնը (XIX, 1), ուր նկարագրւում է Ամիդի (Amida) առումը, աւերումը եւ բնակիչների գերութիւնը Շապուհի ձեռքով 359 թուականին։ Հ. Գաթրճեանը (Տիեզերական պատմ. Բ, 491) այս աւերումը նոյնացնում է հայ պատմագիրների պատմած աւերման հետ, մոռանալով այն ժամանակագրական անտեղութիւնը, որ այս դէպքում դուրս է գալիս, որովհետեւ հայ պատմագիրների պատմած Տիգրանակերտի աւերումը եղել է ոչ առաջ քան 364 թուականը, հաւանաբար 365 թուականին։ Արդ այստեսակ դէպքում՝ միայն մնում է ենթադրել, որ Տիգրանակերտը կամ Ամիդը երկու անգամ աւերուել է Պարսիկներից, 359 եւ 365 թուին։

րինացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Հայոց յաշխարհէն մեր, զի փառք թագաւորացն եւ բախտքն եւ քաջութիւն աշխարհիս աստի գնասցեալ ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն։ Ապա թափէր Վասակ... եւ զոսկերս թագաւորացն Հայոց, զորս... հանեալ թաղեցին յամուր ի գիւղն՝ որ Աղձքն անուանին, յԱյրարատ գաւառին, որ կայ ի խինձս ի գոգս ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն անուանեն։" Խորենացին, ցանկանալով Փաւստոսից տարբերուիլ, այս դէպքը Տիգրանակերտի աւերումից քիչ առաջ է պատմում (գ, իէ), ասելով, "Սպարապետն Պարսից եկեալ ի Հայս, ի ձեռնտու լինելոյ նախարարացն (Փ.ի մօտ ձեռնտու լինողը միայն Մեհրուժանն է)՝ առնու զամուրն Անի, եւ գերէ զամենայն գանձս արքունի որ ի նմա, այլ եւ զոսկերս թագաւորացն. ոչ գիտեմ՝ թէ վասն նախատինս առնելոյ Արշակայ, եւ թէ վասն համբաւոյ ինչ հեթանոսականաց։ Զոր ապա մաղթեալ նախարարացն, թափեալ թաղեցին յաւանին յԱղձս, որ յոտին Արագածոյ կոչեցեալ լերինն։" Մեր ստախօս պատմագիրը նախանձելով Մամիկոնեան տան հերոսի փառքին եւ նորա յաղթութիւնը անբարեխղճութեամբ լռութեան տալով, հայ նախարարներին է աղերսել տալիս թագաւորների ոսկրները։ Նոյնպէս նա ի զուր է կեղծաւորում չգիտենալու թագաւորների ոսկրները գերելու պատճառը, քանի որ այդ Փաւստոսի պատմութիւնից շատ լաւ գիտէր։

Որպէս զի Խոր. (Գ, իզ—իը) մասին մեր խօսքը վերջացրած լինինք, պէտք է քննենք նաեւ Արշակաւանի հիմնարկութեան եւ կործանման պատմութիւնը, որ մեզ Խորենացին տալիս է (Գ, իէ): Խորենացու այս պատմութիւնը Փաւստոսի պատմութեան (Դ, ժբ) համառօտութիւնը կարելի է համարել: Բայց եւ այնպէս՝ երկու պատմագիրների մէջ հիմնական տարբերութիւններ կան: Այսպէս՝ մինչդեռ ըստ Փաւստոսի Արշակն Արշակաւանը հիմնեց Ներսէսի բացակայութեան ժամանակ (երբ նա աքսորանքի մէջ էր), խաղաղութեան ժամանակ, Գնելի մահից առաջ, ըստ Խորենացու Արշակաւանը հիմնուել է Գնելի մահից յետոյ, պարսկահայկական պատերազմի ժամանակ, երբ Ներսէսն իւր առաջին (ըստ Խորենացու) պատգամաւորութիւնից վերադարձած Հայաստանումն էր գտնուում: Բայց մի թէ կարելի՞ է ենթադրել, որ Արշակը 364—368 թ. միջոց ունէր Արշակաւան հիմնելու կամ թէ մի այսպիսի վատթար ձեռնարկութեան ժամանակ Ներսէս Մեծը Հայաստանում գտնուելիս լինէր եւ չմիջամտէր: Մեր կարծիքով Փաւստոսի պատմութիւնը միակ բնականն եւ ուղիղն է: Խորենացին Փաւստոսին հակասում է նոյնպէս եւ Արշակաւանի կործանումը պատմելու մէջ: Մինչդեռ ըստ Փաւստոսի՝ Արշակաւանի աւերման եւ ամայանալու պատճառը չարակեղ կոչուած ժանտախտն էր, որի ծագելն մի այնպիսի աղտոտ եւ ապականուած սրիկաների բունում, որպիսին էր

Արշակաւանը, շատ բնական էր, (բայց որը պատմագիրը պարզամտութեամբ վերագրում է Ներսէս Մեծի արդար զայրոյթին եւ անէծքին), ըստ Խորենացու՝ Արշակաւանի աւերողներն էին Հայ նախարարները, որոնք բողոքում են առ Շապուհ. սա նոցա խնդրանօք "ի դառնալն ի Յունաց„ իւր սպարապետներից մէկին Հայաստան է ուղարկում, որից Արշակը "խոյս ետ զկողմամբք Կաւկասու, Վրաց միաբանելով,„ իսկ Հայ նախարարները համարձակութիւն առնելով, "դիմեցին ի վերայ ալքունական ձեռակերտին Արշակաւանայ, եւ հարին զնա սրով սուսերի յառնէ մինչեւ ցկին, բայց ի տղայոց ստնդիացաց։„ Արդ որովհետեւ, ինչպէս տեսանք (վերը՝ էջ 87), Շապուհի արշաւանքը Յունաց վերայ հակապատմական անմիտ [illegible] է, պարզ է, թէ ինչ նշանակութիւն կարելի է տալ Խորենացու այս պատմութեանը։ Փաւստոսը պատմելով Արշակաւանի շնորհիւ առաջ եկած աղէտները, ասում է. "Զի թէպէտ եւ կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր, եւ իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին։ Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին... առհասարակ ամենեցուն ասելով՝ թէ իրաւունք մեռան, եւ վասն այսորիկ ոչ գտանէին. այլ թէ էր եւ կորուսեալ էին, [illegible] [illegible]։„ Այս Փաւստոսի այս խօսքերի վերայ է կարկատել Խորենացին նախարարների առ Շապուհ բարձած բողոքը։

Խոր. (Գ, ԻԹ) պատմում է Արշակի պա-

տերազմէ իւր նախարարների հետ, Վաղէս կայսեր Հայաստան զօրք ուղարկելը, Արշակ Թագաւորի յուսահատական դրութիւնը, Ներսէս հայրապետի բարեյաջող միջամտութիւնը Թագաւորութեան գործերում, Ներսէս Մեծի Պապի հետ միասին Բիւզանդիոն գնալն եւ աքսորուիլն: Քննենք այս բոլորը այն ամէնի հիման վերայ, ինչ որ մեզ յայտնի է արտաքին եւ տոհմային պատմագրութիւնից իբրեւ ստոյգ եւ անկասկածելի: "Հիւանդացեալ Վաղենտիանու," ասում է Խորենացին, "ի բերդին՝ որ կոչի Բերգիտիոն, վճարի ի կենցաղոյս, եղբօրն փոխանորդելով զտէրութիւնն: Յետ բարեբախտագոյն Վաղեսի պատերազմաւ Գթացն յաղթութեամբ դարձի,[1] եւ այն հետացն առաքեալ զօրս ի Միջագետս եւ ի Հայս յաղագս տալոյ զօրուն յօգնականութիւն Շապհոյ:" Ո՛րքան տգէտ է մեր ծերունի պատմագիրն այն ժամանակուայ պատմութեան մէջ: Վաղէսն իւր եղբայր Վաղենտիանոսի մահից յետոյ († 375) Արշակին պատժելու համար (որը 368 Թուականին արդէն Շապուհին անձնատուր էր եղել եւ Անյուշ բերդում շղթայած տառապում էր,) Հայաստան զօրք է ուղարկում Թէոդոս զօրավարի հրամանատարութեան ներքոյ, որը մինչեւ 379 Թուականը Արեւելքում գտնուած չէ:

Արդ, ինչպէս վերեւ եւս ասացինք, Խո-

[1] Մինչեւ այստեղ Խորենացին բառացի ընդօրինակել է Մաղաղասի անվաւեր պատմութիւնը: ("Հանդէս Ամս.," 1894, Փետր. եր. 60:)

րենացին այս կեղծիքը հնարում է, որպէս զի Արշակ թագաւորին անելանելի, յուսահատական դրութեան մէջ ձգէ, եւ յետոյ Ներսէս Մեծ Հայրապետին եւ իւր միջամտութեամբ եւ բարեխօսութեամբ նորան ազատել տայ։ Հէնց այս նպատակի համար Խորենացին Արշակի պատերազմն իւր նախարարների հետ, որ շատ առաջ էր եղել (Փաւստոս, Դ, ժթ), այստեղ է յիշում, եւ այսպիսով Արշակին ամէն կողմից թշնամիներից շրջապատուել տալով, շարունակում է. “Ապա տեսեալ Արշակայ, թէ թշնամի են նորա Շապուհ եւ Վաղէս եւ իւր նախարարքն, տարակուսեալ յամենեցունց՝ յղէ բազում անգամ աղաչելով զՄեծն Ներսէս. խոստանայր դառնալ յամենայն ճանապարհաց չարաց, եւ լինել ըստ կամաց նորա, եւ ապաշխարել ի քուրձ եւ ի մոխիր. միայն զի նա եկեսցէ, եւ արասցէ խաղաղութիւն, եւ թափեսցէ զնա ի ձեռաց հզօրացն Յունաց։„

Ո՞վ կարող է չհնազանդուիլ Ներսէս Մեծ Հայրապետի հայրական խրատներին։ Նա իսկոյն Արշակին եւ իւր նախարարներին հաշտեցնում է միմեանց հետ, “բայց ի նահապետէն Արծրունեաց Մերուժանայ եւ ի նորին քեռանէ Վահանայ Մամիկոնենէ,„ ասում է Խորենացին, “որք անլսող եղեալ՝ ապստամբեալ գնացին առ Շապուհ։„ Սակայն այս վերջին տեղեկութիւնը Խորենացին վերցրել է Փաւստոսի պատմութիւնից (Դպր. Դ., գլ. իգ եւ ծ), Վահանին, որ Մեհրուժանի քեռին էր, նորա քեռայրը դար-

ձնելով։ Ահա այս երկու ամբարիշտներն են միայն, որոնք յանդգնում են Ներսէս Մեծ Հայրապետի միջնորդութիւնը չյարգել։ “Բայց եւ առ զօրսն Յունաց երթեալ մեծին Ներսիսի,„ շարունակում է Խորենացին, “աղաչէր մի ինչ աշխարհիս մեղանչել, այլ առնուլ զհարկսն եւ զորդի Արշակայ զՊապ հանդերձ ամենայն նախարարացն որդւովք պատանդս, եւ դառնալ։ Որում լսող եղեալ քաղցր եւ մեծն Թէոդոս զօրավարն, դառնայ առ կայսրն հանդերձ պատանդօքն, ընդ իւր տանելով զմեծն Ներսէս թղթով Արշակայ„ եւայլն։ Որ այս բոլորը սուտ, հակապատմական եւ անկարելի բաներ են, դորա մասին ոչ ոք չէ կասկածում, բայց գլխաւորն այն է, որ սորանով ընթերցողի համար պարզւում է, թէ ինչ պատճառաւ Ներսէսը Խորենացու պատմութեան մէջ ժամանակակից է դուրս եկել Թէոդոսին։ Խորենացին դիտմամբ Ներսէս Մեծ Հայրապետին ժամանակակից է դուրս բերում Թէոդոս մեծ քրիստոնեայ զօրավարին, որպէս զի Ներսէսը հայրաբար Նորան օրհնէ, իսկ Նա որդիաբար Նորան հնազանդուի. Ներսէսը Նորա առաջ բարեխօսի, Նորան կարեւոր բաների համար խնդրէ, իսկ Թէոդոսը որդիաբար Նորան լսէ եւ Նորա խնդիրը կատարէ առանց այլեւայլութեան։ Եւ իրաւ, Թէոդոս զօրավարը, չնայելով որ իւր կայսեր հրամանով զօրքով Հայաստան է եկել Արշակին պատժելու, այնքան յարգում է Ներսիսին, որ ինքնագլուխ, նոյն իսկ առանց իւր ինքնակալի կամքը

հարցնելու, սեպհական պատասխանատուու-
թեամբ իւր սուրը յետ է դարձնում Հայաս-
տանից։ Արդէն մենք տեսանք (վերն եր. 15),
որ Խորենացին նման բարեպաշտական գաղա-
փարներով առաջնորդուելով, Յուսիկին ժամա-
նակակից է հանդիսացնում Յուլիանոսին, որ-
պէս զի միեւնոյն ժամանակ եկեղեցու քաջ նա-
հատակ հանդիսացնէ։

Իսկ որ Արշակի թուղթն առ Վաղէս՝ Խո-
րենացու երեւակայութեան արդիւնքն է, դորա
մասին խօսել անգամ չ՛արժէ։ Նամակում յի-
շուած Արշակի խօսքերը, թէ “իբրեւ հզօրս
ինչ զմեզ վարկանելով՝ արձակեցաք գունդ հի-
նից յերկիրդ Յունաց„ Խորենացին յօրինել է
Փաւստոսի պատմութեան վերայ, (Դպր. Դ., գլ.
ժա.) ուր պատմւում է, որ Արշակ թագաւորը
լսելով, որ Վաղէս կայսրը Ներսէսին աքսորեց.
“տայր հրաման Վասակայ իւրում զօրավարին զօր
ժողովել, զգունդս (բո)վանդակել, ելանել հար-
կանել եւ աւար առնուլ զկողմանս Գամրաց։ Իսկ
զօրավարն սպարապետն Վասակ... հարկանէր
աւար առնոյր զկողմանս Գամրաց մինչեւ ի քա-
ղաքն յԱնկուրացւոց...։„ Իսկ մեր պատմաբանը
նոյն իսկ արտագրելու մէջ այնքան անփոյթ է,
որ այստեղ վերոյիշեալ խօսքերը Արշակի բե-
րանն է դնում, առանց նախօրօք կամ գոնեայ
յետոյ պատմելու, թէ Արշակ երբ, ինչ առթիւ
գունդ ղրկեց Յունաց երկիրը աւերելու։

Իսկ Ներսէս Մեծի պատգամաւորուելու
եւ աքսորուելու դժուար խնդրի մասին, այսինքն

թէ նա որ աստիճանի պատմական կարող է համարուիլ. քիչ վարը կը խօսինք:

Ներսէս Մեծի առ Հռոմայեցիս պատգամաւորուելու, աքսորուելու եւայլն (Փաւստ. Դ, ե—ժա) մասին խօսելուց առաջ՝ յառաջ բերենք մի քանի ժամանակագրական կէտեր, որոնց հետ արդէն ծանօթացել ենք եւ շուտով ստիպուած պէտք է լինենք շօշափելու:

Արդ ինչպէս տեսանք, Արշակ թագաւորի ամուսնութիւնը Ողիմպիա օրիորդի հետ տեղի ունեցաւ 360 թուականին. հայ-պարսկական պատերազմը տեւեց 363—367 կամ 68 թուականը, եւ Ներսէս Մեծը թունաւորուեցաւ ոչ ուշ քան 374 թուականը: Եւ որովհետեւ Փաւստոսի պատմութիւնից երեւում է, որ Գնելի սպանութիւնն եւ Փառանձեմի յափշտակութիւնն Արշակի ձեռքով, ինչպէս եւ վերջինիս ամուսնութիւնը Ողիմպիայի հետ, տեղի ունեցան Ներսէս Մեծի Հայաստան վերադառնալուց յետոյ (Փաւստոս, Դ, ժգ եւ ժե,) պարզ է, որ Ներսէս Մեծի պատգամաւորութիւնն առ Յոյնս 360 թուականից առաջ է տեղի ունեցել, երբ Հռոմայեցւոց կայսրն էր ոչ թէ Վաղէսն (364—378), այլ Կոստանդիոսը (337—361): Այս բոլորից յետոյ ակնյայտնի է, թէ ինչ արժէք ունի Փաւստոսի պատմութիւնն, ըստ որում Ներսէս Մեծը պատգամաւորուելով առ Վաղէս, նորանից աքսորուում, 9 տարի աքսորանքի մէջ մնում եւ ապա նորա մահից յետոյ Հայաստան է վերադառնում. (Փաւստոս, Դ, ե—զ եւ ժգ:)

Սուտ եւ շինծու առասպելներ են այս բոլորը, որի հնարողը նպատակ է ունեցել՝ Ներսէս Մեծ հայրապետին Վաղէս արիանոս կայսեր յարուցած հալածանքներին մասնակից անելու եւ այսպէսով Նորան եկեղեցու քաջ պաշտպան հանդիսացնելու։ Այս մենք տեսնում ենք հէնց է. գլխից։ Այստեղ պատմւում է, որ Վաղէս հերետիկոս կայսրը Ներսէս հայրապետին ստիպում է իւր միակ որդու համար, որը ծանր հիւանդ էր, աղօթք անել։ Ներսէսը համաձայնւում է, այն պայմանով միայն, որ կայսրը թողնէ Արիոսի աղանդն եւ ուղղափառութեան դառնայ, միեւնոյն ժամանակ յայտնելով վճռականապէս, որ եթէ 15 օրուայ ընթացքում կայսրը ուղղափառութիւնը չընդունէ, նորա որդին կը մեռնի։ Կայսրը ուղղափառութեան չէ դառնում եւ ըստ մարգարէութեան Մեծին Ներսիսի՝ ուղիղ 15 օրից յետոյ նորա միակ զաւակը մեռնում է։ Վաղէս կայսրը սկզբում կամենում է Ներսիսին սպանել տալ, բայց յետոյ զիջանելով իւր մեծամեծների յորդորանքներին, "հրաման ետ աքսորել զերանելին Ներսէս, եւ տանել ընկենուլ զնա ի կղզի մի ի ծովուն մեծի, յայնպիսի յանապատ տեղի՝ ուր ոչ մարդ կայցէ, եւ ոչ ջուր ըմպելոյ, եւ ոչ կերակուր, բայց սոսկ միայն անապատ իցէ, զի սովամահ սատակեսցէ զնա:„ Փաւստոսի այս պատմութիւնը զարմանալի նմանութիւն ունի Բարսեղ Մեծի, Կեսարիոյ հայրապետի (370—379) մասին եղած մի աւանդութեան հետ։ Ըստ այս

ւանդութեան՝ Վաղէս կայսրը, երբ 372 թուին Կեսարիայում էր գտնւում, արիոսական հոգեւորականների դրդմամբ վճռում է Բարսեղին աքսորել: Հէնց Բարսեղը աքսոր պէտք է գնար, երբ կայսեր միակ որդին Գալատէս անակնկալ կերպով հիւանդանում է: Վերջինս դեռ եւս մկրտուած չէր. եւ երբ կայսրը Բարսեղից պահանջում է, որ նա իւր մանկան համար աղօթէ, Բարսեղը համաձայնւում է, միայն այն պայմանով, որ մանուկը ուղղափառ մկրտուի: Բարսեղը աղօթում է հիւանդ մանկան վերայ եւ վերջինս թեթեւութիւն է զգում իւր ցաւերից: Բայց երբ թոյլ կայսրն արիոսականներին լսելով, մանկանը արիոսական է մկրտում, այն ժամանակ մանկան հիւանդութիւնը ծանրանում է եւ նա մեռնում է նոյն գիշերը: Կայսրը բարկանալով կրկին վճռում է Բարսեղին աքսորել, բայց այս վճիռը մի կարծեցեալ հրաշքի շնորհիւ ի կատար չէ ածւում[1]:

Արդ ինչպէս Մարքուարտն արդէն նկատած է, կասկած չէ կարող լինել, որ Բարսեղի այս պատմութիւնն է, որի մէջ Փաւստոսը չնչին փոփոխութիւններ անելով, վերագրում է Ներսէսին: Նոյնպէս հարկաւոր է նկատել, որ ինչպէս տեսանք, Ներսէսը Կոստանդիոսի մօտ պատգամաւորեց, իսկ վերջինս արու զաւակ չունէր: Նոյնպէս եւ աղաւնու պատմութիւնը, որն ըստ Փաւստոսի (Դ, գ) ձեռնադրութեան ժամանակ իջած պէտք

1 Տե՛ս Մարքուարտ, Zur Kritik des Faustus von Byzanz, p. 221–222.

է լինի Ներսէս Մեծի վերայ, վերցրած է Բարսեղ Մեծի մասին եղած զրոյցներից: Եւ առհասարակ փաւստոսի պատմութեան վերոյիշեալ գլուխները վերաբերում են Վաղէս կայսեր հալածանքներին: Թէպէտ նոքա ճշմարտութիւն եւս պարունակում են[1], սակայն որովհետեւ փաւստոսն իւր պատմութեան այս մասի համար աղբիւր է ունեցել ըստ մեծի մասին ժողովրդական աւանդութիւնները, բազմաթիւ սխալներ եւս սպրդել են նորա պատմութեան մէջ: Եւ փաւստոսը յայտնապէս ցոյց է տալիս, որ ինքն այստեղ ժողովրդական աւանդութիւնից է օգտւում: Շատ բնորոշ է նորա պատմութեան Ժրդ գլուխն, որի մէջ նա վերարտադրում է Վաղէս կայսեր մահուան մասին եղած ժողովրդական աւանդութիւնը: "Ապա խնդիր հրամայէր առնել, ասում է փաւստոսը, թագաւորն Վա-

1 Օր. պատմական են Վաղէս կայսեր յարուցած սարսափելի հալածանքները Եկեղեցու դէմ, բազմաթիւ ճշմարտահաւատ հովիւներին աքսորելը, Եւսեբիոս Կեսարիոյ հայրապետի (362–370) նախանձը դէպ ի Բարսեղն եւ այլն: Տես Վաղէսի հալածանքների մասին Hergenröther, Kirchengesch. I., 383–384, ուր ի միջի այլոց ասած է. "Շատ կաթոլիկ եպիսկոպոսներ աքսորուեցան, մանաւանդ Կոստանդնուպոլսի ժամանակ պաշտօնանկ եղածները: Նորից յայտնուեցան նահատակներ կաթոլիկ դաւանութեան համար... Անտիոքիայում Վաղէսը հրամայեց շատ կաթոլիկներին Որոնտէս գետում խեղդել եւ Մելետիոս եպիսկոպոսին հալածել... 370 թուին բռնակալութիւնն այն աստիճանի մեծ էր, որ 80 կաթոլիկ եպիսկոպոսներ Նիկոմիդիայում, որոնք կայսերը խնդրել էին խնայողութեամբ վարուելու, դորա համար մի հին նաւ ածուեցան եւ այնտեղ կրակի մատնուեցան:"

ղէս, զի տեսցեն գտցեն այր մի ճարտար, որ կարող իցէ գնել գրով բանս դիմադարձութեան ընդդէմ Հաւատոց քրիստոնէութեան։ Եւ պատմեցին նմա զի էր այր մի ոսկերիչ ճարտար ի քաղաքէ Դվին։ Ապա առաքեաց կայսրն առ նա մագիստրիանոսս, զի երթիցեն փութով եւ անզբաղապէս զայրն առ նա ածցեն. եւ առեալ ածին փութապէս։ Իբրեւ գնացեալ գայր օթեւանս երկուս, դէպ եղեւ նոցա դիպել այլ քաղաքէ Դվին, եւ արտաքոյ քաղաքին վկայանոց մի սուրբ տիկնոջն Թեկղի։„ Մագիստրիանոսները գիշերում են քաղաքում, իսկ սոփեստէսը մտնելով վկայանոցը, ընթրում, անկողին է ձգում եւ վկայանոցի դռները փակելով, անկողին է մտնում քնելու։ Բայց "աչօք բացօք„ տեսնում է, որ վկայանոցի դռները բացւում են, ժողովւում են բազմաթիւ վկաներ, որոնց մէջ եւ Թեկղէ տիկինը։ Նոքա միմեանց ողջոյն տալով, կարգով նստում եւ սկսում են խօսել. "Սուրբքն Տեառն, որ չեւ են հրաժարեալ յերկրէս, դեռ եւս աստէն ինեղութեան են. են որք ի կապանս են, են որք ի փիւղակէս են, են որք յաքսորս, եւ են որք յայլ բռնութեան... պարտ է մեզ զխափանիչս մշակացն զՎաղէս խափանել, զի ամենայն մշակ ի գործս իւր կանխեսցէ... Արդ եկայք առաքեսցուք ի մէնջ երկուս, որք երթիցեն վճարիցեն ի կենաց զչարագործն Վաղէս։ Ապա միում անուն էր Սարգիս ի նոցանէ, եւ միւսումն Թէոդորոս. արձակէին զնոսա, գնէին ժամ եւ աւէին. ի սոյն ժամ եկեսջիք դուք եւ մեք։„

Սարգիս եւ Թէոդորոս վկաները կատարում են վերոյիշեալ սրբերի յանձնարարութիւնը սպանելով "զթշնամին ճշմարտութեան զՎաղէս", որին եւ ափսոսէսին յայտնում է հետեւեալ գիշերը: "Ապա իբրեւ այգ եղեւ, շարունակում է Փաւստոսը, եկին մագիստրիանոսքն, առեն ցափսոսէսն. Արի գնասցուք առ կայսրն: Նորա պատասխանի տուեալ, ասէ. կայսրն մեռաւ, արդ մեք առ ո՞ երթիցուք: Եւ բազում վիճումն ի մէջ եղեալ նոցա վասն այսր բանիս, եւ ֆրասոյան եղեալ է մէջ ժամն այսր բանիս մինչեւ յերեկոսօրս: Եթէ ոչ, ասէ, հարցին աւար վաճառք, եւ քաղաքք յափշտակեսցին, եւ՝ եթէ հայրն նոյն հայրն՝ ֆլաւիոսացս, զի իշխեսցի զայս ճառել:"

Արդ մի ծանօթ մարդ, որ ամբողջ կայսրութեան մէջ որոնում է, մի տաղատում գտնում է, մի աղբէշ տաղատում գիշերում է, երեք օրով գրաւ է գալիս ֆլաւիանոսեան պալատով, — այսպիսի անորոշ դարձուածքները միմիայն հէքիաթների մէջ են պատահում, եւ ցոյց են տալիս, թէ հեղինակը ինչ աղբիւրից է քաղում իւր պատմութիւնը: Բայց մենք դեռ աւելին տեսնենք: Այն գլխի վերջում Փաւստոսը պատմում է, որ Վաղէս կայսեր մահից յետոյ քրիստոնեաներից յափշտակած գույքերը վերադարձնում են իրենց: Բարսեղ Մեծն եւս ժողովելով Կեսարացիներին, կամենում է նոցա յանձնել իրենց յափշտակած կայքերը: "Եւ ոչ ոք ի Կեսարացւոց անտի, ասում է Փաւստոսը, հպեցաւ յարծաթ իւր, եւ ոչ մի ոք. բայց թողին

զայն ի գանձ եկեղեցւոյն։ Ապա էառ զայն արքեեպիսկոպոսն, արար աւազանս մկրտութեան կնքոյ տալոյ. եւ չէն հաստատեալ աստուծոյ որդւոյն ի դուռն լուսաւորչին մինչեւ ցայսօր ժամանակի։„ Աւելի պարզ խօսել չէ կարելի։ Այս առասպելին իբրեւ հիմք ծառայել են այն արծաթոյ աւազանները, որ Փաւստոսի ժամանակ գոյութիւն ունէին կեսարիայում։

Այսպէս ուրեմն Փաւստոսի պատմութեան այս հատուածը (Դ, ե—ժ), ինչպէս տեսանք, քաղուած է ժողովրդական աւանդութիւններից, ուստի եւ մեծ մոլորութիւններ է պարունակում, որոնցից գլխաւորն է Ներսէս Մեծի առ Վաղէս պատգամաւորելն եւ նորանից աքսորուելն. որովհետեւ ինչպէս տեսանք, Ներսէսի պատգամաւորելն եղաւ 360 թուականից առաջ, իսկ Վաղէս գահ բարձրացաւ 364 թուին։ Բայց սորանով մենք Ներսէս Մեծի պատգամաւորելն առ Յոյնս ամենեւին չենք հերքում։ Այդ պատգամաւորութեան մասին ստոյգ տեղեկութիւնը մենք գտնում ենք հէնց Փաւստոսի վերոյիշեալ հատուածի սկզբում, որ է. "Ապա կոչէ խաղաղութեան ուխտին միաբանութեան փոչէնն, որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց, դէպ եղեւ առաքել անդր կազմութեամբ մեծաւ արքային Հայոց. զի ինքնին մեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս եւ ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն[1]

---

1 Այսինքն Ներսէսի հետ միասին 10 հոգի, որոնց անուանացուցակը մեզ տալիս է Փաւստոս (Ե, ժա), հաւանաբար վերցնելով Հայոց արքունի դիւանից։

ընդ նմա, զի երթիցէ. է ձեզ հայրերն եւ է ձեզ իւրեանց զաւակացն հաստատութեան եւ խաղաղութեան նորոգեցէն: Ապա չոգան հասին ի կայսերական պալատն թագաւորացն Յունաց:»

Փաւստոսի այս հակիրճ տեղեկութիւնն այնպէս զանազանւում է այն տեղեկութեանը անմիջապէս հետեւող առասպելներից, ինչպէս զտած ցորեանը յարդից: Ուրեմն Ներսէս Մեծի Շքախմբով պատգամաւորելն առ Հռոմայեցիս լոկ քաղաքական, դիւանագիտական նպատակ ունէր: Հռոմայեցւոց կայսրն էր Կոստանդիոս, եւ ոչ Վաղէս: Պատգամաւորութիւնը կայացաւ Արշակի թագաւորութեան սկզբներում[1]: Արշակ թագաւորը, որ ինչպէս տեսանք (վերն՝ եջ 67), Կոստանդիոս կայսեր օգնութեամբ գահ էր բարձրացել, սորանով ցանկանում էր իւր երախտիքը արտայայտել Հռոմայեցւոց մեծ կայսերին եւ իւր հաւատարիմ դաշնակցին: Միեւնոյն ժամանակ՝ մեր կարծիքով՝ հակապատմական պէտք է համարել Ներսէս Մեծի աքսորանքը, որ եթէ ցանկանանք պատմական համարել, սխալուած պէտք է լինենք ենթադրել, որ նորան աքսորողն եղել է Կոստանդիոսը: Կոստանդիոսը, որ Հայերի հետ սիրով էր վարւում եւ վերջը Արշակ թագաւորի հետ ազգականական կապով եւս կապուեցաւ (վերն եջ 8), չէր կարող Հայոց ազգի պատկառելի պատգամաւորին դաւանաբանական խնդրի համար աքսորել, մանաւանդ որ յայտնի

1 Ըստ Մարքուարտի (Zur Krit. d. F. p. 223—224) 353 կամ 355 թուին:

է, որ Կոստանդիոսը արիոսականներին պաշտպան հանդիսանալով հանդերձ, ուղղափառներին Վաղէսի նման չէ հալածել: Մենք միանգամայն միանում ենք Մարքարտի կարծիքին, ըստ որում՝ Ներսէս Մեծի աքսորելը մի անհաւանական զրոյց է, որի գոյանալուն առիթ է եղել Ներսէս Մեծի գահից հեռանալն եւ երկարամեայ առանձնութիւնը[1]:

Սորանով ի հարկէ հերքւում է եւ Փաւստոսի այն աւանդութիւնը, թէ (Ե. ժա) Արշակը լսելով Ներսէս Մեծի աքսորանքը, Հռոմայեցիներից սարսափելի վրէժ է առնում: Նորա հրամանով Վասակ սպարապետը 260.000 զօրք ժողովելով, վեց տարի շարունակ Հռոմէական կայսրութեան սահմանները մինչեւ Անկիւրա քաղաքը աւերում եւ կողոպտում է, առանց որեւէ ընդդիմադրութեան հանդիպելու: Այս աւանդութեանը նոյնչափ հաւատ ընծայելու է, որչափ եւ Նորա միւս աւանդութիւններին (Դ. իզ—(խդ)խթ), ըստ որոց Հայերը Պարսից 100 հազարաւոր զօրաբանակները 23 անգամ սրի մատնելով, վերջ ի վերջոյ իրանք են քայքայւում եւ ուժասպառ լինում: Ուր Փաւստոսը գրաւոր աղբիւրներ չունենալով, դիմում է ժողովրդական աւանդութիւններին. այնտեղ Նորա երեւակայութիւնն եւ ազգային անապարծութիւնն այլ եւս չափ ու սահման չէ ճանաչում: Հաւանաբար Հայոց եւ Հռոմայեցւոց տէրութեան մէջ տեղի ունեցած որ եւ է ընդհար-

---

1 Մարքարտ Zur Krit. d. Faust. p. 222.

ման պատմութիւնն է՝ որ Փաւստոսը կցում է Ներսէսի աքսորանաց պատմութեանն եւ ըստ իւր ճաշակի ծաղկեցնում է։

Վերջապէս աւելացնենք, որ "Հայոց Հերոդոտը" ոչ միայն Փաւստոսի բոլոր մոլորութիւնները կրկնել է, այլ եւ իւր կողմից նոր մոլորութիւններ եւ առասպելներ է աւելացրել Ներսէսի աքսորման պատմութեանը։ Վաղէսը հրամայում է "աքսորել զՄեծն Ներսէս, որպէս չէ անգամ խաբող եւ պղծող ուխտին[1], մատուցեալ ոմանց առ նա ի հերձուածոյն Արիոսի, ասեն. եթէ դաւանես ընդ մեզ, թափէ զքեզ հայր մեր Մակեդոն։ Որում ոչ հաւանելով՝ աքսորեցաւ... Բայց Պապայ յանձն առեալ հանդերձ ամենայն պատանդաւն[2], թափեաց Մակեդոն" (Խոր. Գ, Լ)։ Այս կեղծիքը հնարելով Խորենացին կամենում է Ներսէս Մեծի հաւատքի հաստատութիւնն, իսկ Պապի եւ այլոց հաւատափաճառութիւնը ցոյց տալ։ Նոյնպէս Խոր. (Գ, ԼԴ) պատմում է, որ Վաղէսի մահից[3] յետոյ

---

[1] Ի՞նչ են նշանակում այս անակնկալ խօսքերը, որոնց մասին Խորենացին ոչ մի բացատրութիւն չէ տալիս։ — Այս խօսքերը մի ակնարկութիւն են ներկայացնում Վաղէսի մանկան մահուան առասպելի մասին, (վերեւ, եր. 100.) որ Խոր. գիտէր Փ.ի պատմութիւնից։

[2] Խորենացին մոռանում է, որ (Գ, ԻԹ) Վաղէսը բոլոր Հայոց պատանդներին սրի է մատնել։

[3] Վաղէս կայսեր մահուան աւանդութիւնը, թէ "հրկէզ եղեալ յԱդրիանուպոլիս" եւայլն, ինչպէս եւ Թէոդոսի մասին պատմածը, թէ "սա քակեաց զմեհեանս կռոցն" եւայլն Խորենացին վերցրել է Մաղաղասի պատմութիւնից ("Հանդէս", 1894. Փետրուար, եր. 61–62)։

Թէոդոս Մեծը (379—395) Ներսիսին աքսորանքից վերադարձնելով, "պահէ մեծաւ պատուով, մինչեւ ճշմարտութեանն ստուգեցաւ հաւատ, որ յաղագս ամբարշտին Մակեդոնի հայհոյութեանցն", այսինքն մինչեւ 381 թուականը, երբ տեղի ունեցաւ երկրորդ "տիեզերական" ժողովը: Բայց այս բոլորը մեր Խորենացու երեւակայութեան ծնունդն է: Ներսէս Մեծը, ինչպէս տեսանք, 374 թուին արդէն գերեզմանումն էր եւ նորա անունը երկրորդ "տիեզերական" ժողովի հարց ցուցակում չկայ էլ: Իսկ Սոկրատէսի եկեղեցական պատմութեան հայերէն թարգմանութեան մէջ գտնուած տեղեկութիւնը, թէ "գայ ի ժողով ի կոստանդնուպոլիս... եւ Ներսէս պարթեւ Հայոց Մեծաց, զոր Վաղէսի էր արտասահմանեալ, եւ Թէոդոսի ածեալ՝ ունի մեծարանօք, մինչեւ հաւատն ստուգեցի ի ժողովն", մի ընդմիջարկութիւն (interpolation) է հայ թարգմանչի կողմից, ինչպէս արդէն նկատած է Չամչեան[1]: Ճշմարիտն այս է, որ Հայերը երկրորդ "տիեզերական" ժողովին չեն մասնակցել:

Հետեւեալ գլխում (Գ, լա) Խորենացին պատմում է հայ նախարարների կոտորածը Արշակ թագաւորի ձեռքով եւ Խադ եպիսկոպոսի մասին: Այս բոլորը Խորենացին վերցրել է Փաւստոսի պատմութիւնից (Դ, ժթ եւ ժբ)[2]: Յաճախ

[1] Պատմութիւն Հայոց, Ա, 706:

[2] Պէտք է այստեղ եւս նկատել, որ Խորենացին ընթանում է Փաւստոսի հետ զուգընթացաբար: Այսպէս

երկու պատմագիրների մէջ բառացի նմանու-
թիւնն ակն յայտնի է։

Փաւստոս Դ, ԺԲ։

Այս ահա է ժամանակն՝ յորում Պերճեցաւ յարքունական բանակէն սուրբ եպիսկոպոսն Ներսէս... բառ կամաց չարութեանն իւրոյ գնացեալ լինէր նա (Արշակ)՝ եւ զբռնաւոր ի նախարարացն խորտեաց... Բայց զամէն կամաւորականացն՝ որ էին գաւառաց տեարք, Շիրակայ եւ Արշարունեաց, ոչ էր ..., եւ զգաւառն ունէր յորդան։ Բայց յաղթէն յայնմանէ մանկիկ մի փոքրիկ, անուն Սպանդարատ, թագուցեալ ապրեցուցանէր սպարապետ զօրավարն Հայոց Վասակ, որ յետոյ լինէր ժառանգ աշխարհին։ Թագաւորն Արշակ հրաման տայր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր ... մի ..., Արտաքեր անուն։

Խոր. Գ, ԻԷ։

Ի հեռանալ մեծին Ներսեսի՝ ատեաց Արշակ ամենայն ուխտին, զոր եդ ընդ նախարարսն, եւ խնդրեաց զքէն ձեռակերտին իւրոյ Արշակաւանու։ Եւ ... ի նախարարացն, մանաւանդ ... է ..., չարակնելով ապաժեալ յամառն Արտաշէսի եւ ի քաղաք ... նոցա Երուանդաշատ... Եւ ոչ ոք ի նոցանէ ապրեցաւ, բայց Սպանդարատ որդի Արշաւրի։

Խորենացին այստեղ Փաւստոսի պատմու-
թիւնը կամայական փոփոխութեանց է ենթար-
կում, համեմատ իւր տենդենցիայի։ Ո՛չ Արշակը
նախարարներին երդում էր տուել, որ դրժէր
իւր երդմանն եւ ո՛չ էլ Արշակաւանի կործա-
նողը հայ նախարարներն էին, ինչպէս տեսանք

Փաւստոս (Դ, ԺԱ) պատմելով Ներսէս Մեծի արքունիքից հեռանալը եւ առանձնանալը, (Դ, ԺԹ) պատմում է նախարարների կոտորածը։ Իսկ Խոր. (Գ, ԻԹ–Լ) Ներսէսին փոխանակ առանձնութեան՝ աքսոր ուղարկելով, հետեւեալ գլխում (Գ, Լա) պատմում է նոյնպէս նախարարների կոտորածը։

(վերն էջ 93)։ Նոյնպէս սխալ է Խորենացու բացատրութիւնը. թէ Արշակն ագահութիւնից դրդուած սկսեց հայ նախարարներին կոտորել, որովհետեւ Արշակն իւր անզուսպ նախարարների դէմ կռիւ սկսելով, ցանկանում էր միապետութիւնն ի վնաս նախարարական իշխանութեան զօրեղացնել։ Նոյնպէս Սպանդարատի սպանութեան պատմութիւնը Խորենացին այլայլել է, չկամենալով նորա ազատարարի, Վասակ Մամիկոնեանի անունը յիշել։ Բայց զարմանալի է, որ Խորենացին Վասակի ազնիւ դերը լռութեան տալով, այնու ամենայնիւ յիշում է, որ Սպանդարատը կոտորածից ազատուեցաւ Տարօնում (այսինքն Մամիկոնեանների երկրում)։

Իսկ թէ Սպանդարատն Արշաւրի որդին էր, կամ իւր Շաւարշ եւ Գազաւոն որդիներով Յունաստան փախաւ, այս բոլորն՝ ըստ մեզ, մի ազատ յաւելուած է Խորենացու կողմից։ Վերջապէս նկատենք այն ժամանակագրական խոշոր սխալը, որ ժամանակի պատմութեան հետ անտեղեակ հեղինակը արել է։ Նա պատմում է, որ Ներսէսը ութ ամիս աքսորանքի մէջ մնալով (Գ. Լ), Վաղէսի մահից († 378) յետոյ Թէոդոս կայսեր հրամանով աքսորանքից վերադառնում է, որից հետեւում է, որ Ներսիսի աքսորուելը, ուրեմն եւ հայ նախարարների կոտորածը, եղել է 378 թուականին։ Բայց մենք տեսանք (վերն էջ 63), որ Արշակն 368 թ. այլ եւս չէր թագաւորում, իսկ Ներսէսը 374 թուին մեռած էր։

Նախարարների կոտորածից անմիջապէս յետոյ Խորենացին պատմում է Խադ եպիսկոպոսի մասին, մինչդեռ Փաւստոսն այդ շատ առաջ (Դ, ժբ) էր պատմել: Բայց այս տարբերութիւնն յառաջանում է նորանից, որ Խորենացին յայտնի տենդենցիայով Ներսէս Մեծի մի անգամ Կ. Պոլիս գնալուց երկուսն է շինել: Ուստի եւ Ներսէս Մեծի կարծեցեալ երկրորդ ճանապարհորդութիւնը եւ աքսոր գնալը պատմելով, անմիջապէս տալիս է մեզ Խադի պատմութիւնը:

Փաւստոս, Դ, ԺԲ:	Խոր. Գ, ԼԸ:
Այրս այս Խադ... յառաջադէմ եղեւ ի հաւատս, եւ հաւատարիմ յամենայն գործս գտաւ, խոկ իբրեւ յայնմ եւս առաւել ի պաշտօնն՝ զոր ունէր զսէրն ընդ եկեղեցին Աստուծոյ, ապա ձեռնադրեալ էր սարկաւագութեանն ի սրբոյն Ներսիսէ մեծ հայրապետէն: Ապա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեւորութեանն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս Խադ եպիսկոպոսութեանն Բագրեւանդայ եւ Արշարունեաց, եթող զնա իւր փոխանակ տեղապահ, եւ գնաց...:	Բայց ի գնալն Մեծին Ներսիսի ի Յոյնս՝ էր յետնորդեալ զսարկաւագն Խադ յեպիսկոպոսութեան Բագրեւանդայ եւ Արշարունեաց, եւ հաւատացեալ ի նշանակն գործ վերակացութեան աշխարհին մինչեւ ժամանակ իւրոյ դարձին: Այս Խադ յամենայնի նմանեալ մեծին Ներսիսի, եւ առաւել եւս ի ողորմութեան աղքատաց. որոյ շտեմարանացն ամբարացն նմանէին կճղեայ եւ սափորոյ Եղիայի եւ Եղիսէի. եւ ի յանդիմանել զարքայ՝ ահաւոր եւ սաստիկ էր եւ աներկիւղ:

Բազում անգամ ընդդիմանայր նմա (խմն՝ Արշակայ), եւ յանդիմանէր սուրբն Խադ եպիսկոպոսն... Բա-

[1] Տես Գ. Թագ. ԺԷ, 9–16: Այստեղ եւս ուրեմն Խորենացին արտագրում է Փաւստոսի պատմութիւնը բառացի կերպով: Տես քիչ վեր նորա նկարագրութիւնն Արշակի մահուան մասին եւ վերն՝ էջ 26 նորա նկարագրութիւնը սուրբ Վրթանիսի Տարօնում փախչելու մասին:

զուամ յոյժ առնէր ողորմելն։ Բայց իբրև պաշտէր զաղքատսն, և սպառէր թափէր զամենայն յուրանս և զնորամանս և զմառանս գինւոյն, և զկարասս ամենայն մառանացն տայր բաշխել աղքատացն, իշխոյր յայնժամ առաւել զուարճանայր ուրախ ինքնին լինէր ի հրամանն Աստուծոյ. և դարձեալ որ ըստ օրէ մատակարարէր աղքատացն, և այնմ ուրախ ուրախ լինէր։»

Աւելորդ է ասել, որ Խորենացին այստեղ արտագրում է Փաւստոսի պատմութիւնը։ Նա աւելացնում է նաև, որ Խադը "պճնող և ձիասէր" է եղել։ Երբ դորա համար ժողովուրդը նորան ծաղրում է, նա թողնում է իւր պերճագոյն զգեստներն և իշով է շրջում։

Հետևեալ գլխով (Գ. լբ) Խորենացին կամենում է ցոյց տալ Արշակ թագաւորի անագորոյնութիւնն և միևնոյն ժամանակ անկարողութիւնը՝ Խադին զսպելու։ Այս գլուխն օտար է Փաւստոսի պատմութիւնից, որը սակայն նոյնպէս պատմում է, որ Խադը երկու դուստր ունէր, որոնցից մինը ամուսնացած էր ոմն Աորիկի հետ։

Խոր. Գ, լգ-ի մասին՝ մասամբ արդէն խօսել ենք (վերև, էջ 108 ծանօթ. 3)։ Այս գլխում Խորենացին մի համառօտ տեղեկութիւն է տալիս երկրորդ "տիեզերական" ժողովի մասին, հիմնուելով յոյն պատմագիրների վերայ։ Բայց ինչպէս տեսանք, Խորենացու վկայութիւնն, ըստ որում Ներսէս Մեծը երկրորդ "տիեզերական" ժողովին մասնակցած պէտք է լինի, սուտ և հնարովի է։

Խոր. (Գ, լդ) նորից խօսում է հայ-պարսկական պատերազմի մասին։ Արդ, ինչպէս ար-

դէն նկատած ենք, Խորենացին լաւ տեղեակ չլինելով այս պատերազմի պատմութեանը, Փաւստոսի ազդեցութեան ներքոյ երբեմն ակնարկութիւններ է անում այս պատերազմի մասին, որոնք մեծ մասամբ սխալ եւ հակապատմական են: Նա (Գ, լա) ինչպէս տեսանք, համառօտելով Փաւստ.ը (Գ, ժթ) բաց է թողնում վերջինիս պատմութիւնից Գ, ի—ծը գլուխները, իսկ վերոյիշեալ լգ. գլխում փոփոխում եւ համառօտում է Փաւստոսի պատմութիւնն Արշակի անձնատուր լինելու մասին. (Փաւստ. Գ, ծգ:) — Ինչո՞ւ մեր ծերունի պատմաբանը Փաւստոսի պատմութեան այս խոշոր կտորը բոլորովին բաց է թողնում: Մեր կարծիքով նախ՝ Խորենացին արեղայական խցիկի անդորրութեանը ընտելացած լինելով, զուարճութիւն չէ զգացել առանձին ճառելու վերոյիշեալ գլուխների մասին, որոնք բացառապէս պատերազմների մասին են ճառում: Երկրորդ՝ Խորենացին անհաւանական է գտել Փաւստոսի պատմութեան վերոյիշեալ գլուխները, ըստ որոնց Հայերը 30 կամ 34 տարի շարունակ անարգել Պարսից 100 հազարաւոր զօրաբանակները խորտակելով, վերջն իրանք են քայքայուում, որոնք իսկապէս անհաւանական եւ սխալներով լի են. (վերն, էջ 107:) Եւ երրորդ՝ Խորենացին կամեցել է լռութեան մատնել այս բոլոր պատերազմների հերոսի՝ Վասակ Մամիկոնեանի՝ անունն եւ քաջագործութիւնները: Այս երեք կէտերը իբրեւ պատճառաբանութիւն վերոյիշեալ խնդրի հա-

մար բաւական համարելով, անցնինք Արշակի անձնատուր լինելու եւ ողբալի վախճանի պատմութեանը:

Արշակի անձնատուր լինելը Խորենացին պատմում է, ընդհանրապէս ասելով, համաձայն Փաւստոսի: Ըստ Փաւստոսի՝ հայ նախարարները եւ մեծամեծները ձանձրացած եւ լքած երկարամեայ քայքայիչ պատերազմներից, թողնում են իրանց Արշակ թագաւորին եւ հարկից ստիպուած ուզում են ծառայել Շապուհ Պարսից թագաւորին: Այն ժամանակ Արշակն անճարացած անձնատուր է լինում Շապուհին, “թէ կամաւ կամաւ՝ եւ թէ ոչ կամաւ:„ Ճիշտ նոյնը պատմում է եւ Խորենացին: Միայն նա որովհետեւ հայ-պարսկական պատերազմի քայքայիչ ընթացքի մասին ոչինչ չէ պատմում, միամտաբար նախարարների ապստամբութեան պատճառը նոցա անձնական անբաւականութիւն է համարում Արշակից:

Իսկ Ալանաոզան անունն, ինչպէս եւ Արշակի բանակցութիւնները Ալանաոզանի հետ՝ ծնունդ է մեր ծերունու երեւակայութեան: Այս կեղծիքը Խորենացին հնարելով, ուզում է ցոյց տալ Արշակի՝ Ներսէս Մեծի հայրական խրատներից շեղուողի՝ կատարեալ վհատութիւնն եւ ողորմելիութիւնը: Արշակն՝ ինչպէս մի վախկոտ նապաստակ՝ Ալանաոզանից փախչելով, պատգամաւոր է ուղարկում նորան եւ աղերսում է. “Թողացո՛ ինձ զօղել ուրեք վայրկեան մի ժամանակի, մինչեւ ոգի առեալ անցանել կարա-

ցից յերկիրն Յունաց:„ Ալանաոզանն Արշակին պատասխանում է, թէ չէ կարելի․ եւ “այնուհետեւ յոյժ նեղեալ Արշակ, յոչ կամաց երթայ առ Շապուհ:„ Ո՜րչափ պարզամիտ է մեր ծերուկը: Միթէ Յունաց երկիրն ապստամբուելու համար եւս Արշակը կարիք ունէր Պարսից սպարապետից թոյլտուութիւն խնդրել․ միթէ Արշակի ձեռքերն ու ոտքերը կապած էին, որ նա Ալանաոզանի բացասական պատասխանից յետոյ եւս չկարողացաւ Յունաց երկիրը փախչել: Սակայն միայն սորա համար չէ, որ մենք Արշակի եւ Ալանաոզանի բանակցութիւնները հակապատմական ենք համարում․ ըստ միաբերան վկայութեան Փաւստոսի եւ Ամմիանոսի՝ Արշակը մինչեւ վերջին րոպէին սուրը ձեռքին իւր գահն եւ հայրենիքը պաշտպանելով, ապա ստիպուած, հաւատալով Շուպուհի հրապուրանքներին, անձնատուր է լինում[1]:

Ապա Խորենացին Փաւստոսի հետեւեալ (Գ, ծդ) գլուխը բաց թողնելով, (Գ, լե) համառօտում է Փաւստոսի ծե—ծէ գլուխները: Բոլոր փոփոխութիւնները, որ մեր սահմանափակ պատմագիրը Փաւստոսի պատմութեան մէջ

---

1 Արշակ իւր նախարարներից բարձի թող մնացած, ստիպում է Շապուհից երդում խնդրել, “զի յայնմհետէ անկասկած երթիցէ առ նա„ եւ ապա անձնատուր է լինում (Փաւստոս, Դ․ ծգ): Համարեա թէ նոյնն է ասում եւ հռոմէական պատմագիրը: „Dein per exquisitas percuriisque mixtas inlecebras captum regem ipsum Arsacem adhibitumque in convivium iussit ad latentem trabi posticam“ etc. (Ammian, XXVII, 12, 3.)

մոցնում է, անպատուաբեր են Հայոց համար։ Այսպէս նա չէ յիշում Փառանձեմ տիկնոջ 14 ամսեայ[1] հերոսական պաշտպանութիւնն Արտագերից ամրոցում։ Սորա փոխանակ Խորենացին գրում է. «Նաեւ ոչ դշխոյն Փառանձեմ գնաց ի կոչ առն իւրոյ, այլ հանդերձ գանձիւք անկաւ յամուրս Արտագերից. լուր առնելով առ որդին իւր Պապ, յուսայր ապրել ի ձեռաց Շապհոյ... Բայց զօրագլխութիւնն Ատրպատայ էր ի վերայ Արշակայ[2]. մարդիկ ամրոցին ոչ անսացին միայն համբաւոյն Պապայ, այլ անձնատուր եղեն ի կամաց եւ ոչ ի բռնութենէ»։ Ըստ Փ.ի Արտագերսի անկման պատճառը ամրականների միջեւ ծագած սարսափելի ժանտախտն է լինում, որի համար նա ասում է. «Եւ եղեւ յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոց, որ յԱստուծոյ հասին ի վերայ ժողովելոցն բերդականացն. զի մահ անկաւ ի վերայ նոցա՝ որք ի բերդին էին, չէ ի տեսանէ հասին պատահառ։» Ահա Փ.ի այս պատճառաբանութիւնն է, որ Խոր. այնպէս յեղաշրջել է։ Իսկ Խոր. այն խօսքերը, թէ «գիտացին Նախարարք Հայոց, այնք՝ որ նախ քան զԱրշակ ձեռն տուեալ էին ի Շապուհ, թէ եւ զնոյն ջանայ խնդրէ, որպէս զայնոցիկ, որք առ Արշակայ

1 368 թ. հոկտ. մինչեւ 369 դեկտ.։

2 Որքան պէտք է կարմրէր մեր «Հայրենասէր» պատմագիրը, եթէ գիտենար այն ողբերգը, որ մի օտար գրիչ նուիրում է մեր քաջ եւ անձնուէր, բայց դժբախտ թագաւորին, որի մէջ նկարագրում է նորա հայրենասիրութիւնը, խորտակուած յոյսերն եւ հոգեկան դառն վշտերը («Հանդէս» 1887 Փետրուար, եր. 25)։

միամիտք էին… առեալ զկանայս եւ զորդիս ելեան յաշխարհն Յունաց„ յօրինուած են Փ.ի պատմութեան վրայ, ուր ասած է, թէ երբ Շապուհը Հայաստան եկաւ, "բազումք ի նախարարացն Հայոց թողուին զկանայս իւրեանց եւ զորդիս եւ զընտանիս, եւ փախեան ընդ այս ընդ այն գնացին: իսկ զամենայն կանայս նախարարացն Հայոց, զոր թողին եւ փախեանն, առաքեաց ածել. եւ ածին զնոսա առ Շապուհ արքայ Պարսից:„

Այնուհետեւ Խոր. ինչպէս Փ. նկարագրում է հայ հրէաբնակ քաղաքների աւերումն պարսիկների ձեռքով: Բայց չգիտեմ նորա համառօտամոլութեան թէ աններելի անհոգութեանը վերագրել այն յապաւումն, որ նա այստեղ անում է. նա Փ.ի յիշած եօթը քաղաքներից (Արտաշատ, Վաղարշապատ, Զարեհաւան, Զարիշատ, Վան որ է ի գաւառին Տոսպայ, Նախճաւան) միայն երեքի աւերումն է յիշում (Վան Տոսպայ, Արտաշատ, Վաղարշապատ): Նոյնպէս Արշակի ինքնասպանութեան պատմութիւնը Խոր. վերցրել է Փ.ից ("[illegible] արար ընդ անձին իւրում„ ասում է համառօտամոլ պատմագիրը: Տես Ա. Թղթ. լա, 4)[1]:

Խորենացին հետեւեալ գլխում (Գ, լզ) պատմում է Հայաստանին հասցրած չարիքները Մեհրուժան Արծրունու ձեռքով, որը ոչ այլ

---

[1] Սորանով միեւնոյն ժամանակ Խոր. հակասում է Փ.ին, ըստ որում Արշակ մեռաւ Պապի գահակալութիւնից յետոյ, մօտ. 370 թուին (Մարքվարտ, Zur Krit. et. p. 221):

ինչ է, եթէ ոչ մի կամայական քաղուածք Փ․ի պատմութեան հետեւեալ գլխից (Դ, ծթ)։

Փաւստոս։

Սկսան այնուհետեւ զօրքերն Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթից քրիստոնէից յամենայն կողմանս Հայոց... եւ նեղէին զբազում մարդիկ՝ զոր ի բուռն արկանէին, թողուլ զաստուածպաշտութիւն եւ ի դենն մտանել Մազդեզանցն։ Եւ յետ այսորիկ տային հրաման Վահան եւ Մերուժանն, զամենայն կանայս փախուցելոցն նախարարացն՝ որ թողլինն եւ գնացին, տային հրաման ի բերդսն, զի նեղեալն զնոսա՝ դարձուսցանել յօրէնս Մազդեզանց։

[“Եւ զազատ կանանցն անդէն ի բերդսանն բանտէր եւ թողոյր. զի եթէ ոչ որ նոցա եկեսցեն նմա ի ծառայութիւն, տանիցեն զկանայս նոցա բերդակալին։„ Փաւստ. Դ, ծը։]

Ընորէնն Վահան եւ Մերուժան հրաման տային բերդակալին, զի նեղեսցէ զկինն (sc. զտիկինն Արշակունեաց). եթէ ոչ առցէ յանձն զօրէնս Մազդեզանցն, տալ հրաման կախել զբարձր աշտարակէն եւ սպանանել... կախեցին զնա (sc. զտիկ. Արշակ.) ի բարձուէն կուսէ. եւ այն–

Մովսէս։

Եւ խոստացաւ (sc. Շապուհ) տալ նմա (sc. Մերուժանայ) զՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճեսցէ՝ ի դէն Մազդեզանց հաւատոց դարձուսցէ։ Որոյ յանձն առեալ եւ եկեալ, եւ զբազումս ի նախարարացն կանանց կալեալ՝ ի բերդս բերդատալը պահել, մինչ որոնցն յօժարեսցէ։

Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել։[1]

«Բայց Մերուժանն հրամայէ դահճացն՝ զերեքն դարաւոցն կախել զկանայս նախարարացն, մինչեւ մեռցին. եւ թողուլ նոյնպէս ի կախաղանէն զդեհկանսն, զի լուծեալ անկցին եւ կերակուր լինել թռչնոց։„

[1] Այստեղ հետեւում է Մեհրուժանի կարծեցեալ հրամանը յունարէն խօսելու եւ թարգմանելու մասին, որ յիշեցինք (տ. եջ 33)։

դեռ մանուկ է ի խանձարուրսն... կայր կախեալ... մինչեւ իջուցանելոյ ամենայն մարդկան տեղւոյն...:„

Պարզ է, որ Խոր. օգտւում է Փ.ի պատմութիւնից, մի քանի կամայական փոփոխութիւններ անելով: Այսպէս նա Ռշտունեաց բարեպաշտուհու եղերական մահն ընդհանրացնում է բոլոր հայ տիկնանց վրայ: Յետոյ պէտք է նկատել նաեւ այն փոփոխութիւնները, որ Խոր. Մեհրուժանի եւ Վահանի դերերի մէջ մտցնում է: Մինչդեռ ըստ Փ.ի (Դ, ծ) Շապուհն իր Որմիզդուխտ քրոջը՝ Վահանին է կնութեան տալիս, ըստ Խոր. այդ բախտին արժանացողը Մեհրուժանն է. մինչդեռ ըստ Փ.ի Շապուհը Վահանին բարձ եւ պատիւ տալով, “Խոստացաւ նմա կեանս մեծամեծս առնել„, ըստ Խոր. Շապուհը Մեհրուժանին Հայաստանին ուղարկելով, “Խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւն:„ Վերջապէս ըստ Փ.ի Մեհրուժանը Վահանի քեռորդին է, իսկ ըստ Խորենացու՝ նորա աներոջ որդին է:

Կասկած չկայ, որ մարդ սոցանից մէկի վկայութիւնն ընդունելով, ստիպուած՝ միւսինը պէտք է ժխտէ: Այժմ հարց է ծագում, թէ ինչ աղբիւրների վրայ հիմնուելով Խոր. այս տեսակ տարբեր տեղեկութիւններ տուած կարող է լինել, քանի որ ըստ իւր վկայութեան՝ նա ճշտութեան վրայ հիմնուելով է իւր գիրքը գրում. (տես վերը, էջ 15:) Նոյնպէս դժուար է ենթադրել, որ Խոր. ժողովրդական

աւանդութեան վերայ հիմնուելով, այսպիսի տարբեր տեղեկութիւններ լինէր տուած Վահանի եւ Մեհրուժանի ազգակցութեան կամ նոցա փեսայութեան մասին: Վերջապէս նոյն իսկ եթէ վերջին դէպքն ենթադրենք, ստիպուած պիտի լինինք հարցնելու, թէ Խորենացին, որը, ինչպէս բազմիցս ապացուցինք եւ դեռ պիտի ապացուցանենք, Փ.ի պատմութիւնն իւր առաջն ունէր, ի՞նչպէս կարող էր ժողովրդական աւանդութեանն այսպիսի գերակշռութիւն տալ: Մեր կարծիքով խնդրի միակ բացատրութիւնն հետեւեալն է. Խոր. փոխանակ Վահանի՝ Մեհրուժանին ամուսնացնելով Որմիզդուխտ արքայադստեր հետ, եւ փոխանակ բարձի եւ պատուի՝ նորան արքայական թագ խոստանալ տալով, նպատակ ունի իւր՝ Մեհրուժանի մահուան մասին հնարած կեղծիքին (Ներքեւ, էջ 126) առանձին կենդանութիւն եւ հանդիսաւորութիւն տալ: Այստեղ Մեհրուժան արքայափեսայ պիտի դառնայ, Շապուհ նորան Հայաստանի թագը պէտք է խոստանայ, որպէս զի կարծեցեալ Սմբատ ասպետը յետոյ նորան շիկացեալ շամփրէ թագով պսակէ:

Նոյնպէս սուտ եւ հակապատմական է Խոր. հետեւեալ վկայութիւնը. "Իբրեւ լուաւ մեծն Ներսէս զչարիսն ամենայն, որ հասին ի վերայ Հայոց, եւ զմահն Արշակայ, աղաչեաց զինքնակալն Թէոդոս, խնդրելով ի նմանէ օգնականութիւն: Եւ թագաւորեցուցանէ զՊապ որդի Արշակայ. եւ ընդ նմա գումարեաց զօր բազում ի

ձեռն քաջ սպարապետին Տէրէնտիանոսի։ Եւ մեծին Ներսիսի առեալ զամենայն նախարարսն, որք կամակից էին ընդ տէրութիւնն Պապայ եւ որք ոչ,.. ածէ զՊապ յաշխարհս Հայոց։„ Որովհետեւ, ինչպէս տեսանք (տ. վերն, էջ 62), Թէոդոսի եւ Ներսիսի ժամանակակցութիւնը մի անմիտ, հակապատմական զրոյց է, Խորենացին Պապին թագաւորեցնելու գործն եւս կամեցել է Ներսիսին վերագրել, որպէս զի այսպիսով նորան հայրենիքի ազատարար հանդիսացնէ։ Պապին թագաւորեցնողն եղել է Մուշեղ Մամիկոնեանը, Վասակ սպարապետի որդին (Փաւստոս, Ե, ա)։ Մեր անբարեխիղճ պատմագիրը Մամիկոնեան տան հերոսի պատմութիւնը վերագրելով Ներսէս մեծին, վերջինիս էլ բարեխօսել է տալիս ոչ թէ անօրէն Վաղէսի, այլ բարեպաշտ Թէոդոսի առաջ։ Մենք յետոյ կը տեսնենք, թէ այս բարեպաշտ Թէոդոսն որքան վնաս է հասցրել Հայոց ազգին եւ թագաւորութեանը։

Հետեւեալ գլխում (Գ, լէ) Խոր. պատմում է Պապ թագաւորի Հռոմայեցւոց զօրքով Հայաստան գալը, Ձիրաւ դաշտի ահեղ ճակատամարտը, հայ քաջ նախարարների մանկանց պատերազմի իրենց համար պարսիկ մանուկների հետ, Ներսէս Մեծի Նպատ լերան վերայ բարձրանալն եւ աղօթելը, Հայոց փառաւոր յաղթութիւնը Պարսիկների վերայ վերին զօրութեամբ եւ ամբարիշտ Մեհրուժանի շամփրապատ լինելը։

Արդ Խորենացու այս հնարողութիւնները

հասկանալու համար պէտք է բանալ Փ.ի պատմութիւնը (Ե, Գ-Ե եւ ԽԳ)։ Խոր. նախ Բագրեւանդի եւ Ատրպատականի պատերազմներն ի մի է ձուլում։[1] Եւ ապա գորան կցում է Մեհրուժանի սպանութեան պատմութիւնը։ Առաջ ենք բերում երկու պատմագիրների մէջ երեւեցող բառացի նմանութիւնները։

Փաւստոս։	Խորենացի։
...Թագաւորն Պարսից կրկներ լինէր զօրաժողով ամենայն ուժով իւր ամենայն զօրաբանակաւ իւրով... եւ զամենայն զօրացն զբազմամբ	...եկանէ հրաման ի Շապհոյ՝ ամենայն զօրացն Պարսից երթալ ընդ Մերուժանայ ի Հայս ի պատերազմ։[2]

1 Արգէն Գարագաշեան, Քննական պատմ. Գ. 132 նկատած է. "Պատերազմն այն, որ ինչպէս կը տեսնուի, եղաւ առ ստորոտով Նպատայ՝ եր Զիրաւի ճակատը, զոր Խոր. (Գ. լէ) կը թուի չփոթել ուրիշ երրորդ կռուոյ մը հետ, որ եղաւ Ատրպատականին սահմանին վերայ։"

2 Ընդմիջապէս Խոր. շարունակում է. "Նոյնպէս աղգէն ինքնակալին Թէոդոսի Պապ եւ Տերէնդ զՇապհոյ՝ թէ ամենայն զօրացն հրամայեաց եկանել ի վերայ մեր, բայց ի գրանկացն։ Ապա Ուգաստոս Թէոդոս հրամայեաց Ադդէի կոմսին մեծի երթալ յօգնականութիւն Պապայ. առնուլ զամենայն զօրս Յունաց, ոչ զոք թողուլ զոր ոչ առցէ. այլ եւ զհետեւակս պահապանս քաղաքացն, որք զմտաւորութեան ունէին զփիշապս։" Մի կողմ թողնելով արդէն, որ այդ ժամանակ Հռոմայեցւոց կայսրն էր Վաղէս եւ ոչ Թէոդոս, պէտք է նկատենք, որ Խոր. չարաչար սխալւում է կարծելով, որ Վաղէսը ամբողջ կայսրութեան զօրքով է Հայոց օգնութեան հասել։ Մենք արդէն տեսանք (վերն էջ 69), որ Վաղէսը նոյն իսկ ծածուկ է Հայերին օգնութիւն հասցրել։ Խոր. այսպիսի պարզամիտ մոլորութեան մէջ է ընկնում, ենթարկուելով Փ.ի առասպելախառն թուերին, ըստ որում Վաղէսը Տերենտիոս եւ Ադէ (= Արէ = Արինթէոս, Մարքուարտ, zur Krit. etc. 214) զօրավարներին "վեցհարիւր բիւրու" (6միլիոն) Հայաստան է ուղարկել։

[illegible] առաքէր ի վերայ Թագաւորին Պապայ է [illegible]... (Ն, Գ։)

...[illegible] [illegible] իբրեւ զՀոռ ամենայն զօրքն Հայոց ընդդէմ զօրացն Պարսից, իսկ գունդն Մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթային... (Ն, Գ։)

Եւ պատերազմի խմբեցաւ ի դաշտին՝ որ կոչի Ձիրաւ, եւ [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Եւ մանկունք քաջ նախարարացն Հայոց ինքնակամ նահատակեալք, մտին ի մէջ ճակատուցն, առաջնորդութեամբ սպարապետին իւրեանց Սմբատայ ասպետի, որդւոյ Բագարատայ որ յազգէն Բագրատունեաց։ Նոյին եւ ի զօրացն Պարսից համատիք նոցա, եւ խաղային ի մէջ ճակատուցն. եւ ցիր ընդ ցիր լինէր։

Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից։ Մանաւանդ գունդ [illegible] յարձակեալք մոլեգնեալք, քաջութեամբ զախոյեանսն է [illegible] [illegible] [illegible] յանդիման Թագաւորին Պարսից Շապհոյ....

Եւ ի գառնալ մանկանցն Պարսից, ընդ հուայ գարձեալ մերոցն զհետ նոցա. օրինակ իմն որպէս փոթորիկ յանտառէ տերեւաթափ։ այնպէս երագ [illegible] [illegible] առեալ [illegible], զի ցուրտ [illegible] [illegible], ոչ կարելով նոցա յիւրեանց ճակատն մնանել։

Ե[illegible] [illegible] [illegible] (ասում է Շապուհը) զնոսա (sc. զՀայս) առկաւ մի [illegible], [illegible] ի լեզէոն [illegible] [illegible]. եւ նոցա [illegible] բայեալ, զնոսա իբրեւ է [illegible] պարըսպաւոր [illegible] ընդունէին։

Իսկ [illegible] Պարսիկքն [illegible] (ասում է Խորենացին) [illegible], [illegible] է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]՝ առ ոչինչ փառակելոյ...։

Կարծում ենք, որ այսքանը բաւական է ցոյց տալու, որ Խոր. իւր պատմութիւնը գրե-

[1] Խոր. այս հատուածի մասին քիչ ներքեւ բացատրութիւն կը լինի։

լու ժամանակ Փաւստոսի պատմութիւնն աչքի առաջ ունէր: Բայց Խոր. պատմութեան մէջ մի բան մանաւանդ օտարոտի է թւում: Այն ինչ պատերազմ է, որ հայ քաջ նախարարներէ մանուկ-ներէը մնում են իրենց հօրաքէ պարուէց մանուկներէ հետ: Արդ իրականութեան մէջ այս տեսակ մանկական խաղեր կարող են տեղի ունենալ, բայց ոչ պատերազմներ: Գոռ պատերազմի դաշտի վերայ պատերազմողներն այսպէս չեն փափկում իրենց համատիների յետեւից, այլ փոքրն աշխատում է մեծին, մեծը՝ փոքրին պատահել եւ սրախողխող անել: Բունի ոյժն եւ հնարագիտութիւնն է, որ յաղթում է պատերազմի ժամանակ, եւ ոչ երեխայական խաղերը:

Բանալով Փ.ի պատմութիւնը, (Ե, խդ) տեսնում ենք հետեւեալը: Այստեղ Փաւստոսը պատմում է Մեհրուժան Արծրունու սպանութիւնը, որ տեղի ունեցաւ Բագրեւանդի ճակատամարտից շատ ուշ, Մանուէլ Մամիկոնեանի եւ իւր նիզակակից Բաբիկ Սիւնու ձեռքով: “Եւ մանուկն Արտաւազդ, ասում է Փ., որդի Վաչէի, ընդ կանանին (sc. Զարմանդուխտ թագուհու եւ այլոց հետ) տայր հրաման երթալ Մանուէլ. խէկնա ոչ հաւանէր, չառնոյր յանձն: Եւ էր նա ի տիոյ տղայ. եւ ըստ մանկաբէանն օրինի, ըստ կրօնից Հայոց՝ որպէս օրէն էր՝ զգլխոյ մանկտոյն, այնպէս ի ժամանակին գերծեալ էր զգլխոյ մանկանն Արտաւազդայ եւ ցցուն էր ճողեալ ե-գէս ոլորեալ:„ Ապա Փ. պատմելով Գիւղ աւանի կռիւը, ուր Մեհրուժանը սպանուեցաւ, ասում

է. «Այլ մանուկն Արտաւազդ ի Մանուէլէ գաղտ եկեալ ի Ճակատն. սակայն վառեցաւ կազմեցաւ եւ եմուտ, զանխուլ ի մանուէլեան գնդէն, առ ափն Եփրատ գետոյն. եհար սատակեաց ի Մերուժանեան գնդէն անտի, անթիւ բազում սպառազէնս կոտորեաց... առեալ զնիզակն զհետ մտեալ փախստէիցն... աւելի քան զամենեսեան Արտաւազդ որդի Վաչէին մանուկն կոտորէր։»
Ահա Փ.ի պատմութեան այս տեղի վերայ է յօրինել Խոր. իւր կարծեցեալ նախարարների մանկանց պատերազմը, որն եւ Յունաց գրքի զինավառութիւնն առասպելաբանելով, աւելացնում է։ «Եւ ի վերայ նոցա անխուլամ քետ նշանք ոսկէզօծեալք (փաւստ. նշանս ոսկէզօծեալք)՝ իբր զարզարթ ինչ հովանաւոր ծառոց։»

Բայց սորանով պարզուած է նաեւ մի շատ կարեւոր խնդիր, այն է որ Մեհրուժանին սպանողն ոչ թէ երեւակայական Սմբատ Բագրատունին էր, որի անունն անգամ Փ. չէ յիշում, այլ Մանուէլը, Մամիկոնեան տան դիւցազնը։ Բագրատունեաց տան ծառայամիտ եւ անբարեխիղճ պատմագիրը՝ Մանուէլի քաջագործութիւնը վերագրել է երեւակայական Բագրատունուն։ Մենք արդէն տեսանք վերն, որ Խոր. իւր այս կեղծիքն արդէն նա խապատրաստել էր եւ հիմա՝ դաւաճանի գլխին Սմբատ ասպետին տարաշէկ շամփրեայ պսակ է դնել տալիս։ Ըստ Փ.ի Մեհրուժանի սպանութիւնը տեղի ունեցաւ Կոգ գաւառում։ Խոր. Մանուէլ Մամիկոնեանի քաջագործութիւնը Սմբատ Բա-

գրատունուն յանձնելով, այնու ամենայնիւ համաձայն Փ.ի պատմում է, որ Մեհրուժանի մահը տեղի ունեցաւ “յեղերաշամբին Կոգայովիտ:„ Փ. Մեհրուժանի մահից յետոյ անմիջապէս աւելացնում է. “Եւ Հայոց երկրէն լինէր խողողուբէն թագում„, որով եւ վերջացնում է իւր գլուխը: Ճիշտ նոյնն է անում եւ Խորենացին Մեհրուժանի մահը պատմելուց յետոյ, ասելով. “Եւ յայնմ հետէ խողողբէղ երկիրն ընդ ձեռամբ Պապայ (!?) նուաճեալ„ եւ վերջակէտ դնելով:

Այժմ կրկին վերադառնանք Բագրեւանդի ճակատամարտի պատմութեանը: Ըստ Փ.ի այս պատերազմում Հայոց զօրքի սպարապետն էր Մուշեղ Մամիկոնեանը, Վասակ սպարապետի որդին եւ յաջորդը: Սորա մասին Փ.ի միջի այլոց պատմում է հետեւեալ միջնադէպը. պատերազմի ժամանակ Մուշեղը պատահում է Աղուանից Ուռնայր թագաւորին, որին թէպէտ կարող էր սպանել, բայց վեհանձնութեամբ նորա կեանքը խնայում է, ասելով. “այր թագաւոր ես եւ թագ ունիս, ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ կարի նեղ հասցէ ինձ:„ Որքան զզուելի է մեր ծերունի պատմագրի վարմունքը, երբ նա Մուշեղի դերը կարծեցեալ Բագրատունուն յանձնելով, միեւնոյն ժամանակ նորա վեհանձնութեան գործը այլանդակում է, ասելով. “զՈւռնայր Աղուանից արքայ, խոցոտեալ ի Մուշեղայ, որդւոյ Վասակայ Մամիկոնենի, հանին ի պատերազմէն:„

Ինչպէս ըստ Փ.ի, այնպէս էլ ըստ Խոր. պատերազմի ժամանակ Ներսէս հայրապետը

նպատ լերան վերայ աղօթում էր Հայոց փըրկութեան համար։ Բայց Խոր. Ներսէս Մեծի աղօթքին աւելի ոյժ տալու համար Հայոց յաղթութիւնը վերագրում է հրաշքի, ասելով. "ի բախելն զմիմեանս՝ եղեւ ի վերայ հովանի ամպոյ, եւ հողմ սաստիկ ի մերոցն կուսէ ընդդէմ պարսկականին փչեալ։" Մենք տեսանք (տ. վերն էջ 48) որ Խոր. Օշականի յաղթութիւնն եւս հրաշքի է վերագրում։ Վերջապէս յիշենք, որ Սպանդարատ Կամսարականի եւ Դեկաց Թագաւորի անհեդեդ մենամարտութիւնը՝ որ յիշում է Խոր., օտար է Փ.ի պատմութիւնից։ Վերջինս եւս մի նման մենամարտութեան մասին պատմում է, բայց այդ տեղի ունեցաւ Մանուէլ Մամիկոնեանի եւ Մեհրուժան Արծրունու մէջ։

Խոր. այնուհետեւ բաց թողնելով Փ.ի պատմութեան ը—ի գլուխները, որոնք պարունակում են Մամիկոնեան տան դիւցազնի՝ Մուշեղի քաջագործութիւնները, հետեւեալ գլխում (Խոր. Գ, լը) պատմում է Ներսէս Մեծի մահը Պապի ձեռքով, որը սակայն ոչ այլ ինչ է, եթէ ոչ Փ.ի պատմութեան (Ե, իա—իդ) համառօտութիւնը։ Դարձեալ Ներսէս Մեծի մահուան մասին պատմած տեսիլները, Յուսիկ Բ.ի կաթողիկոսութիւնն եւ Պապի ձեռքով եկեղեցուն հասցրած չարիքները բաց թողնելով (Փաւստ. Ե, իե-լա), հետեւեալ գլխում (Խոր. Գ, լթ) պատմում է Պապի մահը, որը Փ.ի հետեւեալ գլխի (Ե, լբ) այլայլածն է, ինչպէս շուտով պիտի տեսնենք։

Բայց շատ հետաքրքիր է նախ տեսնել, թէ Խոր. ինչից ստիպուած Փ.ի պատմութեան իթ-լա գլուխները լռութեան է մատնել: Մենք այստեղ կարեւորութիւն ենք զգում երկու խնդիր շօշափել, որոնցից մէկն է Հայոց կաթողիկոսների անուանացուցակն, իսկ միւսը Հայոց հայրապետական աթոռի յարաբերութիւնը Կեսարիոյ աթոռի հետ: Նախ տեսնենք ուրեմն անուանացուցակը:

Փաւստոս:	Խորենացի:
1. Գրիգոր Լուսաւորիչ (Գ. ա)	1. Գրիգոր Լուսաւորիչ (Բ, ղա եւյն.)
2. Արիստակէս (Գ, բ)	2. Ռըստակէս (Բ, ղա եւն.)
3. Վրթանէս (Գ, բ եւյն.)	3. Վրթանէս (Բ, ղա եւյն.)
4. Յուսիկ Ա. (Գ, ժբ եւյն.)	4. Յուսիկ (Գ, ժա եւյն.)
5. Փառէն (Գ, ժղ)	5. Փառներսեհ (Գ, ժղ)
6. Շահակ Ա. Աղբիանոսեան (Գ, ժէ)	
7. Ներսէս Մեծ (Գ, գ) [Զունակ, Գ, ժե]	6. Ներսէս Մեծ [ ]
8. Յուսիկ Բ. Աղբիանոսեան, (Ե, իթ)	
9. Զաւէն Աղբիանոսեան (Զ, բ)	7. Զաւէն Աղբիանոսեան (Գ, խ)
10. Շահակ Բ. Կորճեայ (Զ, գ)	8. Շահակ Աղբիանոսեան, (Գ, լթ)
11. Ասպուրակ Աղբիանոսեան (Զ, դ):	9. Ասպուրակէս (Գ, խա)

Արդ ինչպէս ընթերցողը տեսնում է, երկու տոհմային պատմագիրների մէջ արմատական, անհարթելի հակասութիւններ կան: Այս հակասութիւնները վաղուց արդէն նկատուած եւ քննութեան են առնուած: Մինչդեռ առաջ

գրեթէ բոլոր հայ մատենագիրները սխալ համարելով Փ.ի տուած անուանացուցակը, ընդունել են Խորենացունը[1], նորագոյն ժամանակներս շատ լուրջ հետազօտողներ ընդհակառակն են անում:[2]

Առանց բանաւոր պատճառի չէ կարելի Փ.ի տուած անուանացուցակը կեղծ համարել: Եւ իրաւ, ո՞րտեղից եւ ի՞նչ նպատակով Փ. պէտք է Շահակ Ա. եւ Յուսիկ Բ. հնարէր: Այդ ոչ մի կերպ ենթադրել չէ կարելի, բայց մենք յոյս ունինք ներքեւ հաւանական կացուցանելու, որ. Խոր. գիտմամբ վերոյիշեալ կաթողիկոսներին բաց է թողել: Պէտք է գիտենալ, որ Հայաստանում ինչպէս արքայական, այնպէս էլ հայրապետական գահը ժառանգական էր եւ վերջինիս վրայ յորդւոց յորդի նստում էին Լուսաւորչի զաւակները: Դորա համար եւ կաթողիկոսական գահի ժառանգներն ամուսնանում էին, որպէս զի իրենց մահից յետոյ իրենց զաւակը հայրենական գահը ժառանգել կարողանայ: Այսպէս Լուսաւորչի երկու որդկերանցից Արիստակէսը կուսակրօնութեան նուիրուելով,

1 Օր. Չամչեան, Պատմ. Հայոց, Ա. 730, որը Փ.ի մասին ասում է. "Նախ զպատմութիւն իւր ոչ ուղիղ կարգէ. քանզի փոխանակ միոյ Շահակայ՝ երիս անձինս ի մէջ բերէ. զմին կոչէ Շահակ. գ. 17. եւ դնէ յառաջ քան զՄեծն Ներսէս. որ է յայտնի սուտ. նոյնպէս եւ զերկրորդն կոչէ Շահակ. զ. 3. եւ դնէ զկնի Զաւենի. իսկ զերրորդն կոչէ Յուսիկ. է. 29. եւ դնէ յետ Մեծին Ներսիսի՝ ի տեղի Շահակայ, եւ ասէ՝ թէ նստաւ նա հրամանաւ Պապայ. եւ յաւելու այլս գրել զանձոտնիս:"

2 Gelzer, Anf. d. arm. Kirche, 121—122:

Վրթանէսը ամուսնանում է, որպէս զի հայրապետական գահի համար ժառանգ լինի ապագայում: "Եւ էր անորդի, ասում է Փ. (Գ, Ե,) եւ բազում ժամանակս խնդրէր յԱստուծոյ, զի մի զրկեսցի նա յօրհնութենէ զաւակի, այլ ի պտղոյ նորա կացցէ առաջի նորա ի պաշտօն Տեառն:„ Այսպէս էլ Վրթանիսի որդին Յուսիկը ամուսնանում է "ըստ Աստուծոյ շնորհացն, զի որք առ յառաջն եւ յառնելոց էին ի նմանէ հովիւք գլխաւորք որք յօժարութ աշխարհին եւ ի շահ մշակութեան եկեղեցեաց յառաջադրութեան հրամանացն սպասաւորել:„ Ղազար Փարպեցու պատմածը (Ա, ծէ՛) Լուսաւորչի վերջին ձեռի, աքանչելի Սահակի մասին՝ այլ եւս ոչ մի կասկած չէ թողնում այս նկատմամբ:„ "Յառաջ քան զամս բազումս, ասում է սուրբ Սահակը, խորհուրդք անմխիթարք նեղէին զիս, անդադար զմտաւ ածելով եւ աղաչելով զբարձրեալն՝ շնորհել ինձ արու որդի որպէս եւ նախնեացն իմոց, որք յառաջ քան զիս էին ամուսնացեալք յաղագս որդեծնութեան:„

Բայց պատահում էր, որ Լուսաւորչի տան մէջ կամ յարմար մարդ չէր գտնւում հայրապետական գահը ժառանգելու, եւ կամ Հայոց արքունիքը գժտուելով հայրապետական աթոռի հետ, ուրիշ մարդու էր բարձրացնում հայրապետական գահը: Այս նկատմամբ Լուսաւորչի տանը ախոյեան էր հանդիսանում Աղբիանոս երեւելի եպիսկոպոսի տունը: Սա Խոսրով Կոտակի եւ Վրթանիսի ժամանակ դեռեւս ապրում էր: Մանաւազեանց եւ Որդունեաց անհետ լինելուց

յետոյ Խոսրովն կամ Վրթանէսը Աղբիանոսին ընծայեցին "զՄանաւազկերտ ամենայն սահմանօքն եւ գաւառականաւն հանդերձ՝ որ շուրջ զնովաք էր"[1]: Աղբիանոսն ամուսնացած էր եւ որդիք ունէր, որոնք այնուհետեւ ժառանգաբար իշխում էին Մանաւազկերտում:

Վերոյիշեալ 11 կաթողիկոսներից 4ը Լուսաւորչի տնից են, իսկ 4ը Աղբիանոսի տնից: Մինչդեռ Լուսաւորչի տան կաթողիկոսները Հայոց արքունիքի վերաբերմամբ ինքնուրոյն եւ իշխանական դիրք են բռնում, Աղբիանոսի տան կաթողիկոսները յայտնի են իրենց ծառայամտութեամբ եւ քծնէութեամբ: Բայց որ Աղբիանոսի տոհմը հետզհետէ մի տեսակ ժառանգական իրաւունք էր ձեռք բերել Հայոց հայրապետական գահի վերայ, այդ մենք տեսնում ենք նաեւ Ղազար Փարպեցու պատմութիւնից: Սա պատմում է, որ երբ Սահակ Մեծի մահով Լուսաւորչի տան իշխանութիւնը բարձած էր, Յովսէփ տեղակալի նահատակութիւնից յետոյ միմեանց յետեւից հայրապետական գահ բարձրացան Մելիտէ եւ Մովսէս, որոնք Աղբիանոսի տոհմից էին:[2] Սը նշանակէ, որ Լուսաւորչի կաթողիկոսական տան բարձումից յետոյ Հայերը յարգեցին երկրորդ կաթողիկոսական տան իրաւունքը, նորանից ընտրելով կաթողիկոսներ:

Արդ խոր. իբրեւ ջերմեռանդ պաշտպան Լուսաւորչի տան կաթողիկոսութեան, չէ կամե-

1 Փաւստոս, Գ, դ:

2 Ղազար Փարպեցի. Գ, կբ:

ցել յիշել Աղբիանոսի տան բոլոր կաթողիկոսներին, որպէս զի Աղբիանոսի տունը ընթերցողի աչքում ախոյեան չհանդիսանայ Լուսաւորչի տանը։ Ըստ մեզ այսպէս պէտք է բացատրել այն հանգամանքը, որ Խոր. Շահակ Ա. եւ Յուսիկ Բ. անունները բաց է թողել։ Սորանից յետոյ Խոր. կարծես կամենալով Փ.ից տարբերուիլ, Շահակ կորճեային անուանում է Աղբիանոսեան։

Այժմ անցնինք երկրորդ գլխաւոր տարբերութեանը, որ նկատուում է Խոր. եւ Փ.ի մէջ։ Փ. պատմում է, որ Յուսիկ Ա., փառէն, Շահակ Ա. եւ Ներսէս Մեծ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու համար Գամիրաց Կեսարիա քաղաքն գնացին եւ այնտեղի մետրապոլտից ձեռնադրուեցան։ Խոր. այն տկարամիտ մարդկանց նախահայրն է, որոնք այս հանգամանքի մէջ, այսինքն որ Լուսաւորչի յաջորդներից մի քանիսը[1] Կեսարիայում եպիսկոպոսական ձեռ-

1 Սուրբ Արիստակէսը հայրապետական ձեռնադրութեան համար կարեւոր չհամարեց Կեսարիա գնալ։ Ըստ Ագաթանգեղոսի՝ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն էր, որ նորան "ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր։" Նոյնն արաւ եւ Վրթանէսը. որովհետեւ Փ., որ առանց ծածկելու յիշում է միւսների ձեռնադրութիւնը Կեսարիայում, Վրթանէսի մասին միայն այս է ասում. "Ելեալ եւ եղեւ քահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ եւ եղբօրն իւրոյ երէց որդին Գրիգորի Վրթանէս։" Ահա այս հանգամանքն է, որ մեզ ստիպում է միւս կաթողիկոսների Կեսարիայում ձեռնադրութեան վերայ նայել իբրեւ նախնական սովորութեան վերայ։ Բայց որ գործով Կեսարիոյ մետրապոլիտը հետզհետէ սկսեց իրեն մի տեսակ իշխանութիւն վերագրել Հայոց հայրապետական աթոռի վերայ, այդ եւս անկասկածելի է Փ.ի պատմութիւնից։

նադրութիւն ստացան, մի տեսակ նուաստութիւն են նկատում հայրապետական աթոռի համար։ Դորա համար եւ խոր. վերյիշեալ 4 կաթողիկոսների կեսարիայում ձեռնադրութիւն ստանալը լռութեան է մատնել։

Այսպիսի շարժառիթներով ղեկավարուելով խոր. բնականաբար լռութեան պէտք է մատնէր եւ Փ.ի Ն. գպր. իթ գլուխը։ Այստեղ պատմուում է, որ Պապը Ներսէսին թունաւորելով, ինքնակամ Յուսիկ Աղբիանոսեանին կաթողիկոս է նշանակում։ "Բայց լուաւ, (շարունակում է Փ.) եպիսկոպոսապետն կեսարու"[1] թէ սպանին զմեծ հայրապետն Ներսէս, եւ փոխանակ նորա տեղի նորուն զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ, զի ոչ որպէս սովոր էին առ հայրապետն տանել ի կեսարիա ի ձեռնադրութիւնն։ Եւ իբրեւ այս մեծ զարմանալով ցասման եղեալ հայրապետին կեսարու վասն բանիս այսորիկ, եւ եղեւ ժողով եպիսկոպոսացն սիւնհոդոսին նահանգին կեսարու առանց հայրապետին. եւ գրեցին թուղթ ցասմամբ մեծապէս։ Եւ նոյնպէս եւ գրեցին թուղթ առ թագաւորն Պապ, եւ լուծին զիշխանութիւնն կաթողիկոսութեանն. զի որ լիցի հայրապետ Հայոց նա դրանն արքունի իշխեսցէ զհացն օրհնել. եւ մի՛ իշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց, որպէս սովորութիւն էր ի բնէ։ Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց զեպիսկոպոսն

1 Այսինքն Բարսեղ Մեծ (370—379)։

ձեռնադրել. այլ որ լինէին եպիսկոպոսք ամենայն գաւառաց գաւառաց Հայոց եւ կողմանց կողմանց, յայնմ հետէ որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հայոց, երթային ի քաղաքն Կեսարացւոց, եւ անդ լինէին եպիսկոպոսք:»

Ի՞նչպէս պէտք է հասկանալ Փ.ի այս խօսքերը: Միթէ յիրաւի՞ Կեսարիոյ աթոռը այսպիսի անսահման իշխանութիւն է ունեցել Հայոց հայրապետական աթոռի վերայ: Մենք այս խնդրի պարզաբանութեան համար առաջ ենք բերում Գէլցէրի մեկնութիւնը[1], որը մենք ուղիղ եւ հանճարեղ ենք համարում: «Մարդ հարցնում է իրան՝ ասում է գերմանացի գիտնականը, թէ ինչ պատճառով արդեօք Հայերը, չնայելով, որ Կեսարիայի հետ իրենց յարաբերութիւնը կատարելապէս խզել էին, այնու ամենայնիւ այնտեղի մետրոպոլիտին այդչափ իշխանութիւն էին վերապահում, որ նա կարող էր իրենց հոգեւոր պետին մի հասարակ պալատական եպիսկոպոսի աստիճանին իջեցնել եւ նորանից խլել ամենակարեւոր, ձեռնադրութեան իրաւունքը: Գործն ինքն ըստ ինքեան պարզւում է, երբ մենք աչքի ենք առնում այս կարծեցեալ եւ կասկածելի իրաւանց տէր կաթողիկոսների անձնաւորութիւնները: Սոքա են. Յուսիկ, Զաւէն, Շահակ եւ Ասպուրակ: Նոցանից երեքը պատկանում են երկրորդ կաթողիկոսական տանը,

---

1 Die Anfänge der arm. Kirche. p. 158—161.

Աղբիանոսի տոհմին, որն արքունիքի հետ լաւ յարաբերութեան մէջ էր գտնուում: Խիստ ուղղութեան հետեւող անձինք նորա մասին չէին ուզում ոչինչ լսել: Ուրեմն այն ինչ որ Փաւստոսը աւանդում է, ոչ թէ ամբողջ Հայաստանում տիրող հայեացքն է, այլ կաթողիկոսական տան կողմնակիցների կարծիքն է, որ տիրում էր հայ կղերական շրջանում: Սորա հաւատարիմ մնացին սուրբ Գրիգորի տանն եւ կեսարական ձեռնադրութեան սովորութեանը: Ով որ առանց այս յարմարութիւններն ունենալու բարձրանում էր քահանայապետական գահը, բարեպաշտների աչքում սպրդող էր երեւում: Դորանից չէ հետեւում, որ մի այդպիսի կաթողիկոս առ հասարակ եպիսկոպոսներն չէր ձեռնադրում, այլ որ կղերական կուսակցութիւնը այսպիսի ձեռնադրութիւններն անվաւեր էր համարում, որովհետեւ նոքա կատարուում էին պարականոն կերպով ձեռնադրուածի ձեռքով: Դորա համար պէտք է որ այն եպիսկոպոսները, որոնք այս ուղղութեանն էին պատկանում, ուղղակի իրենց ձեռնադրութիւնը ընդունած լինէին կեսարիայից...„ Ահա այս հայեացքի տէր էին Փաւստոս եւ իւր ժամանակակիցները, ինչպէս բացատրում է գերմանացի հռչակաւոր գիտնականը: Խոր. ի հարկէ անկարող լինելով թափանցել Փ. ի պատմութեան միտքը, այս ամբողջ գլուխը կատարեալ անարգանք եւ նախատինք է համարել Հայոց հայրապետական աթոռի համար, ուստի եւ բաց է թողել: Չգիտեմ մեր ծերունի պատ-

մագրի բարձրամտութեա՞նը թէ պարզամտութեանն է վերագրելի այն՝ որ նա այս բոլորը ծածկելով, յանկարծ Շահակ Կորձնայի (որին նա Աղբիանոսեան է անուանում) մասին ասում է, թէ Պապը նորան նշանակեց «[illegible]»։ Արդ որովհետեւ Խոր. ամենեւին չէ յիշել, որ կեսարիոյ մետրապոլիտները Հայոց հայրապետի ընտրութեան մէջ մի եւ է դեր լինին խաղացած, նորա այս վերջին նախադասութիւնը բոլորովին օտարոտի է երեւում, եւ կասկած չէ կարող լինել, որ Խոր. այդ անում է Փ.ի պատմութեան ազդեցութեան ներքոյ։

Նման շարժառիթներից դրդուած Խոր. բոլորովին բաց է թողել Փ.ի պատմութեան հետեւեալ գլուխն (Ե, լա), որը պատմական եւ ստոյգ է։

Սորանից յետոյ Խոր. անցնում է Պապի սպանութեան պատմութեանը, որ Փ.ի հետեւեալ գլխի (Ե, լբ) յեղաշրջումն է, ինչպէս պէտք է շուտով տեսնենք։ Պէտք է ասել, որ մենք Պապի սպանութեան մասին ունինք ամենամանրամասն եւ ամենաստոյգ տեղեկութիւններ, որ մեզ տալիս են երկու միմեանցից անկախ պատմագիրներ, մինը տոհմային, իսկ միւսը այլազգի[1]։ Շնորհիւ

1 Փաւստոս եւ Ամմիանոս (XXX, 1). որոնց տուած տեղեկութիւնները սակայն այնպիսի նմանութիւններ են ցոյց տալիս միմեանց հետ, որ Չամչեան, Պատմ. Հայոց, Ա. 734 ստիպուած է ասել. «Պատմութիւն Ամմիանոսի երեւի առեալ ի Բուզանդայ, որ ժամանակակից համարի նմա. եւ կամ Բուզանդայն ի նմանէ։»

այս հանգամանքի՝ մեզ միջոց է տրւում ճշտութեամբ քննադատելու Խոր. տուած տեղեկութիւնները, որով եւ ծանօթանում ենք մեր ծերունի պատմագրի տենդենցիայի եւ պատմագրութեան եղանակին հետ։

Պապի սպանութիւնն ըստ Փ.ի եւ ըստ Ամմիանոսի եղաւ հետեւեալ կերպով: Պապը Ներսէս Մեծին թունաւորելով եւ եկեղեցուն եւ եկեղեցականութեանն սարսափելի հարուածներ հասցնելով, բնականաբար իր դէմ գրգռեց հայ հոգեւորականութեանն եւ Լուսաւորչի տանը հաւատարիմ մնացած բարեպաշտներին, որոնք ազգի մեծամասնութիւնն էին կազմում։ Այս յայտնապէս ասում է Փ. Պապի յաջորդակութիւններից յետոյ աւելացնելով, որ թագաւորը "զայն ոչ ածէր զմտաւ՝ թէ զանձն կորուսանէ:„ Հայ ժողովրդի այս ներքին անբաւականութիւնը քաջ յայտնի է Ամմիանոսին եւս, որը սխալմամբ նորան շարժառիթ է համարում Cylaces եւ Artabanes[1] ներքինիների սպանութիւնը նոյն

[1] Աւելորդ չենք համարում առաջ բերել Մարքուարտի տուած պարզաբանութիւնն այս երկու անձանց մասին Zur Gesch. d. Faust., p. 213)։ Նախ Մարքուարտ յիշեցնելով որ "ըստ Vaticanes, 29, 12, 14, 30, 1, 3„ փոխանակ Cylacesի պէտք է Gylaces կարդալ, իսկ Փ.ի մօտ փոխ. Դղակի՝ Գղակ պէտք է կարդալ, եզրակացնում է որ Ամմիանոսի Cylaces = Փ.ի Դղակին։ Ապա այս Դղակին միեւնոյն անձնաւորութիւնն է համարում, որի սպանութիւնն Փաւստոսը երկու անգամ է պատմում, կրկնակի պատճառաբանութեամբ (Ե, գ եւ զ)։

Խիստ ենթադրական է նորա տուած բացատրութիւնը Artabanes անուան մասին, որին նա մի անյայտ Մամիկոնեան է համարում, որը "Պարսից կողմն անցնելով,

Պապի ձեռքով, եւ այսպիսի մի սխալ քաջ հասկանալի է օտարազգի հեթանոս պատմագրի կողմից։

Այդ ժամանակ Պապ երիտասարդ թագաւորը, որ սիրում էր ինքնագլուխ վարել իւր տէրութեան գործերը, ինչպէս երեւում է, սաստիկ ձանձրացել էր Հռոմայեցւոց միջամտութիւնից։ Վեցերորդ տարին էր, որ նա թագաւորում էր (369—374), բայց "իշխանքն Յունաց եւ զօրքն նոցին տակաւին էին յերկրին Հայոց„, որոնք ի հարկէ երբեմն Հայոց թագաւորութեան գործերին միջամտում էին։ Պապը ցանկացաւ հռոմէական այս ճնշող ազդեցութիւնից ազատուել, որ ի հարկէ կարող էր լինել Շապուհի օգնութեամբ, որի հետ եւ նա բանակցութեան մէջ մտաւ, միեւնոյն ժամանակ Հռոմայեցւոց դէմ սպառնական դիրք բռնելով։[1]

յետոյ պարսկական կուսակցութիւնը փոխելով հռոմէականի հետ, քիչ ժամանակից յետոյ սպանուեցաւ Պարսիկներից։„ Ապա Մորքարտ ընդունում է, որ Ամմիանոսը շփոթմամբ այս անյայտ Մամիկոնեանի գործերը վերագրելով Մուշեղ Մամիկոնեանին, յանձին վերջինիս երկու անձանց գծերը է միացրել։

1 Փաւստոս, Ե, ԼԲ. "Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ եւ խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց եւ կամեցաւ խառնել զսէր իւր եւ առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից։ Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից. եւ արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան։ Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ Կեսարու հեռ՝ եւ տասն քաղաք մեր լեալ է, արդ ի սոց տուր. եւ զՈւռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց..., տուր ի բաց. ապա թէ ոչ, կռուիք մեծաւ պատերազմաւ։„ Որ Կեսարիան, Ուռհան եւ այլ երկիրներ, որոնք այժմ Հռոմայեցւոց էին պատկանում.

Այն ժամանակ Տերենտիոս Հռոմայեցւոց զօրավարը վճռեց օգուտ քաղել Հայոց ժողովրդի ներքին անբաւականութիւնից եւ տապալել Պապ թագաւորին: Ըստ Ամմիանոսի, երբ Վաղէս կայսրն Անտիոքումն էր գտնւում, Տերենտիոսը նորան մի առանձին գրութեամբ յայտնեց Պապի ամբարտաւանութիւնն եւ անագորոյն վարմունքն իւր հպատակների դէմ: Վաղէսը նենգութեամբ Պապին Կիլիկիա է հրաւիրում, նորան բանտարկելու դիտաւորութեամբ, բայց վերջինս Տարսոն հասնելով եւ այնտեղ իմանալով կայսեր չար դիտաւորութիւնը, յաջողութեամբ Հայաստան է փախչում:[1]

Այս տեսնելով Վաղէսը, հրամայում է իւր Տրայանոս զօրավարին, որը այդ ժամանակ փոխանակ Տերենտիոսի Հայաստանումն էր գըտնւում (եւ որին Փաւստոսը սխալմամբ Տերեն-

երբեմն Հայոց հզօր թագաւորի գերիշխանութեան տակ էին եղել (Mommsen, Röm. Gesch. III, 48—49), այդ Պապը գիտէր ազգային պատմութիւնից: Եւ որ Հայոց փառասէր երիտասարդ թագաւորը կարող էր երազել Շապուհի օգնութեամբ վերայիշեալ երկիրները կրկին նւաճելու, այդ եւս հաւանական է, որովհետեւ Հայոց Ցուլիանոսն այս կողմից եւս շատ նմանութիւն ունի Հռոմայեցւոց Ցուլիանոսի հետ, որը երազում էր ամբողջ երկիրը նւաճելու: Ամմիանոսին եւս քաջ յայտնի է Պապի բարեկամական բանակցութիւնը Շապուհի հետ: „Sapor, ասում է նա, interitu Papae, quem sociare sibi impendio conabatur, moerore gravi perculsus (est).“ Գաթրըճեան, Տիեզ. պատմ. Բ. 506. Պապի սպանութեան գործում Ներսէս Մեծի կորըստեանը վերջինիս ձեռքով՝ շատ մեծ նշանակութիւն է տալիս, մինչդեռ Պապի սպանութեան բուն պատճառը քաղաքական էր:

[1] Ամմիանոս, XXX, 1. 4—17:

տիօս է անուանում), որ նա Պապին ինչ ճանապարհով էլ որ լինի ոչնչացնէ: Եւ Տրայանոսն իւր կայսեր հրամանը կատարում է, բայց մի այնպիսի գարշելի ճանապարհով, որը վիրաւորում է մարդկային սրտի ամէն բարի եւ ազնիւ զգացմունք: Աւելորդ ենք համարում այստեղ առաջ բերել այն տմարդի հացկերոյթի պատմութիւնը, որի ժամանակ Հայոց երիտասարդ թագաւորն իւր անարգ եւ պիղծ հիւրընկալի սրին զոհ գնաց, որը նկարագրելով Ամմիանոսը, խօսք չէ գտնում արտայայտելու իւր զզուանքն ու արհամարհանքը դէպ ի իւր հայրենակիցների նողկալի վարմունքը[1]: Գնէլ Անձեւացեաց տէրը, տեսնելով իւր թագաւորի արիւնաթաթաւ դիակը "հանեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի ի լեգէոնաց անտի սպանանէր, յայնցանէ, որ հարին զթագաւորն: Ապա Տէրէնդ զօրավարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր տարակաց ի գլխոյն Գնելոյ, զսկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց ընդենոյր:„

Ահա Պապի սպանութեան ստոյգ պատմութիւնն՝ ըստ տոհմային եւ ըստ արտաքին պատմագրութեանն՝ որ տեղի ունեցաւ 374 թուին:

Այժմ տեսնենք, թէ Խոր. ինչ է պատմում այս դէպքի մասին: Արդ Խոր. գաղտնի նպատակ ունենալով, Ներսէս Մեծ Հայրապետի պիղծ դահճին, այսինքն Պապ թագաւորին, արդարացի հատուցում տալ Թէոդոս մեծ եւ բա-

1 Ամմիանոս, XXX, 1, 22—23:

բարեպաշտ կայսեր ձեռքով, խարդախել է Փ. Բ. պատմութիւնը։ Այս պատճառաւ Խոր. յեղաշրջում է նախ Պապի սպանութեան շարժառիթը, որ, ինչպէս տեսանք, լուրջ քաղաքական էր։ «Պապայ լուեալ, ասում է Խոր., եթէ Մեծն Թէոդոս եղ ի Բիւզանդիոյ ի Հռոմ կոյս, եւ մտեալ ի Թեսաղոնիկէ հանդերձ սպայիւն, եւ յաղագս իջեւանին եղեւ խռովութիւն ընդ նա եւ ընդ քաղաքացիսն, եւ մարտ խռովութեան, եւ յաղթեալ ինքնակալին՝ սատակեաց ի քաղաքացեացն արս հնգետասան հազար։»[1] Այս խռովութիւնը լսելով Պապը, ապստամբում է Թէոդոսի դէմ եւ հալածում է «զՏերենտիանոս հանդերձ զօրուն։» Բայց բարեպաշտ Թէոդոսի լոկ հրամանը յաղթուած ու ջարդուած Տերենտիանոսին կախարդական ոյժ եւ զօրութիւն է տալիս, եւ նա յանկարծ յետ վազելով, «ըստ իւրում պատահման բախտին» ընկնում է Պապի բանակի վերայ, ոմանց կոտորում, ոմանց փախցնում, գ.նէլ Անձ–ացեաց նահապետին էլ «է–[illegible] արարեալ [illegible] նորա, ըմբռնեաց զթագաւորն Պապ։»

Բայց Խոր., «անզգամ» Պապին դեռ սպանել չէ տալիս. դեռ նորան ցանկանում է կանգնեցնել Թէոդոս բարեպաշտ կայսեր արդար դատաստանի առաջ, ուստի եւ շարունակում է. «Եւ Պապայ յաղերս աղաչանաց անկեալ, զի մի

---

1 Այս բոլորը մի անվաւերական աւանդութիւն է որ Խոր. վերցրել է բառացի կերպով Մաղաղասից («Հանդէս» 1894, Փետրուար, եր. 63—64)։

մեոցի, այլ յանդիման լինել արքայի. եւ քաջին Տերենտիանոսի գթացեալ՝ շնորհեաց նմա զմաղթանսն։ Եւ երկամեղէն կապանօք երթեալ առաջի մեծին Թէոդոսի, ըստ իւրում անզգամութեանն սակրով վճարի։„

Ո՛րքան կեղծիքներ, ո՛րքան անբարեխղճութիւն է թոյլ տալիս իրան Խորենացին, որպէս զի Պապը, Ներսէսի դահիճը, դատուի եւ սպանուի Թէոդոս կայսեր հրամանով։ Նա յեղաշրջում է Պապի սպանութեան շրջանակը, տեղը, որ էր Բագրաւանդ գաւառը, եղանակը. Տերենտիոսի (իմա Տրայանոսի) նողկալի անգործութիւնն անուանում է յաղթութիւն եւ քաջութիւն, եւ Վաղէսի տեղ կայսերական գահ է բարձրացնում Թէոդոսին։

Այս բոլորը շատ բնորոշ է Խոր. համար։

Գ.

Արդէն տեսանք (վերն եր. 62), որ ըստ Խորենացու ժամանակագրութեան Ներսէս Մեծը կաթողիկոսում էր 368—402 թ., իսկ Պապը թագաւորում էր 395—402 թ.։ Այժմ անցնելով Ներսէս Մեծի եւ Պապի յաջորդների պատմութեանը, նախ խօսենք Խորենացու ժամանակագրութեան մասին։ Խոր. (Գ, խ) ասում է. “Աւգոստոս բարեպաշտոն Թէոդոս, որ եւ Մեծ, ի քսաներորդ ամին իւրում (= 399 թ.) թագաւորեցոյց փոխանակ Պապայ զՎարազդատ.„ ապա պատմում է, թէ Վարազդատը եկել է “թագաւորու-

թեամբ յաշխարհս մեր ի յիսուն եւ հինգ ամին Շապհոյ (= 364 թ.)„ եւ վերջն աւելացնում է, որ նա թագաւորեաց ամս չորս„ (= 399—403)։ Արդ այս բոլորն ոչ այլ ինչ են, եթէ ոչ անմիտ թուական խաղեր, որոնք միայն պատմագրի խորին ագիտութիւնն են ցոյց տալիս ժամանակի պատմութեան մէջ։ Եւ իրաւ, ինչպէս կարող էր ընդ ամէնը 16 տարի թագաւորող Թէոդոսը (379—395) Վարազդատին թագաւորեցնել իւր կայսրութեան 20րդ տարին, 399 թուականին. ինչպէս 399 թուականին գահ բարձրացող Վարազդատը կարող էր 364 թ. Հայաստան գալ եւ նորան տիրել, քանի որ այդ ժամանակ Հայաստանում թագաւորում էր Արշակը, Պապի հայրը։ Վերջապէս Խորենացին մոռանում է, որ առաջ նա Պապին տուել է 395—402 ժամանակամիջոցն, եւ հետեւաբար ինքն իրան հակասում է, ասելով թէ Վարազդատը թագաւորել է 399ին։ Բայց ներենք մեր ծերունի պատմագրի մոռացկոտութեանն եւ ընդունինք, որ Վարազդատը թագաւորում էր 399—403 թ.։ Խորենացին հետեւեալ գլխում (Գ, խա) պատմում է. “Ապա փոխանակ Վարազդատայ թագաւորեցոյց Հայոց Թէոդոս զերկու որդիսն Պապայ՝ զԱրշակ եւ Վաղարշակ„, (Գ, խբ) պատմում է, որ Շապուհ (309—379 թ.) եւ Արկադ կայսրը (395—408) միմեանց հետ համաձայնութիւն կայացնելով, “կամաւ յանձն առին բաժանել զՄիջագետս եւ զՀայոց աշխարհն, կրկին սահմա-

նադրութեամբ„, իսկ յետոյ (Գ., խէ) ասում է, որ Արշակը թագաւորել է “ամենայն Հայոց ամս հինգ, եւ կիսոցն ամս երկուս եւ կէս:„ Ուղղակի մարդ զարմանում է այս տգէտ պատմագրի յանդուգն խաղերի վրայ: Ի՞նչպէս Թէոդոսը կարող էր 403 թ. Վարազդատի փոխանակ թագաւորեցնել Պապի երկու որդկերանցը, ինչպէս Շապուհ Երկայնակեացը կարող էր Արկադիոս կայսեր հետ հաշտութիւն կայացնել 408 թուին Հայաստանի բաժանման մասին: Դարձեալ այս բոլորը մի կողմ թողնելով, ընդունինք, որ Արշակը թագաւորել է 403—410½ թիւը եւ Հայաստանի բաժանումն Պարսից եւ Հռոմայեցւոց մէջ տեղի է ունեցել 408 թուին Արկադ կայսեր ժամանակ, եւ գանք կաթողիկոսների ժամանակագրութեանը:

Խոր. (Գ., լթ) պատմում է, որ Պապը Շահակ Աղբիանոսեանին “կացոյց փոխանակ Ներսիսի..., որ կալաւ զաթոռն ամս չորս„, ուրեմն 402—406 թուականը: Իսկ հետեւեալ գլխում (Գ., խ) պատմում է. “բայց յերկրորդ ամի Վարազդատայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն ի նոյն ազգականութենէ Աղբիանու ամս չորս„, ուրեմն 401—405 թ.: Սակայն սորանով Խորենացին ինքն իրան հակասում է, որովհետեւ առաջ պատմել է, որ Շահակը, Զաւէնի նախորդը, կաթողիկոսել է 402—406 թ.: Խոր. (Գ., խա) ասում է. “բայց յերկրորդ ամին Արշակայ եկաց յեպիսկոպոսապետութիւն Հայոց Ասպուրակէս ամս

հինգ», ուրեմն Ասպուրակէսն էլ կաթողիկոսել է 405—410 թ.։

Այս բոլորից հետեւում է, որ Խորենացու՝ ներքին հակասութիւններով եւ անպատեհութիւններով լի ժամանակագրութիւնը Պապի եւ Ներսէս Մեծի յաջորդների մասին հետեւեալն է. Վարազդատ՝ 399—403 թ., Արշակ՝ 403—410½ թ. եւ Շահակ՝ 397—401 թ. [402—406], Զաւէն՝ 401—405 թ., Ասպուրակէս՝ 405—410 թ.։

Իսկապէս այստեղ մենք կանգ պէտք է առնէինք, որովհետեւ Արշակը վերջին թագաւորն է եւ Ասպուրակէսը վերջին կաթողիկոսն է, որ յիշւում են Փաւստոսի պատմութեան մէջ։ Սակայն մենք կարեւոր համարեցինք մեր խօսքը Խորենացու ժամանակագրութեան մասին երկարացնել, որպէս զի ընթերցողը համոզուի նորա անկարելիութեան։ Խորենացին (գ, ծ) պատմում է, որ Խոսրովը, որին ըստ նորա վկայութեան՝ Շապուհը (!) 408 թուին գահ էր բարձրացրել, 5ամեայ թագաւորութիւնից յետոյ, ուրեմն 413 թուին, գահընկէց եղաւ նոյն Շապուհի հրամանով, որովհետեւ սա «էր ցասմամբ ընդ Խոսրովայ՝ ի բարեկամանալն Արկադեայ անձամբ եւ յանհրաման կարգել յեպիսկոպոսութիւն զՄեծն Սահակ։» Շապուհի որդին (!) Արտաշիր Խոսրովի փոխանակ՝ թագաւորեցնում է նորա եղբօրը Վռամշապուհին, որը «թագաւորեաց ամս քսան եւ մի՝ մեռանի.» (Խոր. գ, ծե)։ Ուրեմն Վռամշապուհն ըստ Խորենացու՝

թագաւորել է 413—434 թ.: Վռամշապուհի մահից յետոյ վերյիշեալ Խոսրովը նորից գահ բարձրանալով, մի տարի եւս թագաւորում է, “յետ որոյ Յազկերտ ոչ եւս ի նոցանէ, այլ զՇապուհ զորդի իւր թագաւորեցուցեալ Հայոց„, որը “զքառեամ անարգաբար թագաւորեալ, հասանէ նմա համբաւ հիւանդութեան հօրն եւ գնայ փութանակի:„ [1] Ուրեմն Շապուհը ըստ Խոր. թագաւորել է 435—439 թ.: Շապուհի գնալուց յետոյ Հայոց աշխարհն 3 տարի անիշխան մնալով, աւերւում է, [2] ապա թագաւորում է Արտաշիրը “ամս վեց„, [3] որով եւ վերջանում է Արշակունեաց հարստութիւնը: Ուրեմն անիշխանութեան ժամանակը կը լինի 439—442, իսկ Արտաշէս վերջինը թագաւորած պէտք է լինի 442—448 թ.:

Խոր. (Գ, իթ) ասում է. “Վախճանեալ եպիսկոպոսապետն Ասպուրակէս, ի տեղի նորա յաջորդէ Խոսրով զՍահակ որդի Մեծին Ներսեսի„. ապա (Գ, կէ) աւելացնելով: “կեցեալ (Սահակայ) եպիսկոպոսապետութեամբն ամս յիսուն եւ մի. սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ Խոսրովայ Հայոց արքայի մինչեւ ցսկիզբն ամին երկրորդ Յազկերտի եղելոյ Պարսից թագաւորի:„ Ինչպէս վերեւ տեսանք, ըստ Խոր.՝ Ասպուրակէսը մեռաւ 410 թուին, որը միեւնոյն ժամանակ յիրաւի Խոսրովի թագաւորութեան երկրորդ

1 Խորենացի, Գ, ծե—ծզ:

2 Խորենացի, Գ, ծզ:

3 Խորենացի, Գ, ծը:

կամ երրորդ տարին է։ Սորանից հետեւում է, որ ըստ Խորենացու՝ սուրբ Սահակը կաթողիկոսել է 410—461 թ.։

Այս բոլորը միայն պատմագրի տգիտութիւնն եւ յանդգնութիւնն են ցոյց տալիս եւ ոչ մի պատմական արժէք չունին։ Դիցուք թէ Խոսրովը թագաւորում էր 408—413 թ.։ Ի՞նչպէս կարող էր նա այնքան բանակցութիւններ ունենալ[1] Արկադիոս կայսեր (395—408) եւ Շապուհ Բ-ի (309—379) հետ. ո՞րտեղից իմացաւ Խորենացին,[2] որ Արտաշիրը Շապուհի որդին էր, մինչդեռ Արտաշիր Բ. (380—384) Շապուհի եղբայրն էր[3]։ 410 թ. գահ բարձրացող սուրբ Սահակն ի՞նչպէս կարող էր վերյիշեալ Արտաշիրին ներկայանալ եւ նորա առաջ բարեխօսութիւններ անել[4]. ի՞նչպէս կարող էր այս նոյն Արտաշիրը Վռամշապուհին, որ ըստ Խորենացու թագաւորում էր 413—434 թ., թուղթ գրել[5]. ո՞րտեղից իմացաւ Խորենացին. որ Արտաշիր Բին յաջորդեց "Վռամ, որ Կրմանն կոչեցաւ, ամս տասն„, քանի որ Արտաշիր Բին յաջորդել է Շապուհ Գ. (384—389) եւ ապա սորան Վռամ Դ. Կրման

---

1 Խորենացի, Գ, խը—ծ,

2 Խորենացի, Գ, ծ,

3 Տես օր. Նէօլդէկէ, Պատմութիւն Սասանեան տէ-րութեան. (Հայերէն թարգմանութիւնն "Արարատում„ 1895, հոկտ. եր. 385)։

4 Խորենացի, Գ, ծա,

5 Խորենացի, Գ, ծա,

(389—399)[1]. ի՞նչպէս կարող էր Յազկերտ Ա. (399—421) խոսրովին 434 թուին երկրորդ անգամ թագաւորեցնել[2]. ո՞րտեղից իմացաւ Խորենացին[3], որ Յազկերտ Ա. 11 տարի է թագաւորել. ո՞րտեղից նա իմացաւ, որ Յազկերտ Աից յետոյ "լինէր թագաւորեալ Պարսից Վռամ [illegible]„,[4] քանի որ Յազկերտին յաջորդեց Վռամ [illegible] (420—439), որի մականունն է Ցիռ,[5] ի՞նչպէս կարող էր այս Վռամը թագաւորեցնել եւ կամ գահընկէց անել Վռամշապուհի որդի Արտաշիսին,[6] որն ըստ Խորենացու՝ թագաւորում էր 442—448 թուականը: Վերջապէս ի՞նչպէս կարող էր ըստ Խորենացու 410—461 թ. կաթողիկոսող Սահակը մեռնել Յազկերտ Բի թագաւորութեան (439—457) առաջին տարին[7]:

Արդ այս բոլորից պարզ երեւում է, որ մենք Խորենացու կազմած ժամանակագրութիւնը բոլորովին առանց ուշադրութեան պէտք է թողնենք եւ ուրիշ աղբիւրներ պէտք է որոնենք՝ Ներսէս Մեծի եւ Պապ թագաւորի յաջորդների ժամանակագրութիւնը որոշելու համար: Ինչպէս նկատած ենք (վերն երես 47) պա-

1 Նէօլդէկէ, Պատմ. Սասանեան Տէրութեան ("Արարատ„ 1895, Հոկտ. եր. 385):

2 Խորենացի, Գ. ծե:

3 Խորենացի, Գ. ծզ:

4 Խորենացի, Գ. ծզ:

5 Նէօլդէկէ, անդ:

6 Խորենացի, Գ. ծը. կգ—կե:

7 Խորենացի, Գ. կէ:

տուէրով պատմութիւն յերիւրող վարձկան հեղինակը, շտապելով մի կերպ իւր սկսած գործը վերջացնել, անբաւարար աղբիւրներով եւ իւր երեւակայութեամբ է առաջնորդւում, ուստի եւ այսպիսի անկարելիութեանց եւ անպատեհութեանց մէջ է ընկնում: Ուրիշ բացատրութիւն անկարելի է տալ խորենացու մոլորութեանցը:

Կորիւնն իւր գրած Սուրբ Մեսրոպի կենսագրութեան վերջը տալիս է հետեւեալ ժամանակագրական տեղեկութիւնը. “Եւ արդ լինի համար հաւատոց երանելւոյն [Մեսրոպայ] ամս քառասուն եւ հինգ եւ ի դպրութենէն Հայոց մինչեւ ցվախճան սրբոյն՝ ամք երեսուն եւ հինգ, որ համարքն այսպէս. Թագաւորեալ Դիխմնայ Պարսից արքայի ամս վեց, եւ Յազկերտի ամս քսան եւ մի. եւ յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին: Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրմանայ արքայի մինչեւ ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, եւ դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն:„ Նախ նկատենք, որ Կորեան յիշած “Դիխմնը„ Վռամ Կրմանն է, որը ոչ թէ վեց (Զ) այլ տասը (Ժ) տարի (389—399) թագաւորեց, ուստի եւ պէտք է ընդունել, որ անփոյթ արտագրողների շնորհիւ Կորեան Ժ դարձել է Զ: Իսկ սորա յաջորդը Յազկերտ Ա. յիրաւի թագաւորել է 21 տարի (399—420): Միւս հաշիւները եւս բոլորովին ստոյգ են եւ համաձայն արտաքին

պատմագրութեան: «Համար հաւատոց» կամ «Համար ամաց սրբոց հաւատոց» նշանակում է «գործունէութեան շրջան:» Ընդունելով, որ սուրբ Մեսրոպը ունեցել է 45ամեայ գործունէութեան շրջան եւ մեռել է Յազկերտ Բ-ի առաջին տարին, ուրեմն 439 թուին, նորա գործունէութեան ժամանակը կը լինի 394—439 թ.: Յիրաւի 393 կամ 394 թ. Վռամ Կրմանի թագաւորութեան չորրորդ տարին է: Հանելով սուրբ Մեսրոպի մահուան թուականից 35, կը ստանանք 404 թ., որը Հայոց գրութեան սկիզբն է: Սակայն լաւ պէտք է նկատել, որ այս թուականը Դանիէլեան նշանագրերի սկիզբն է եւ ոչ թէ Մեսրոպեան, որը դորանից մօտ երկու տարի[1] ուշ եղաւ: Սորանով հասկանալի են

1 Կորիւնը (Վենետիկ, 1894 եր. 17) պատմելով, որ Հաբէլը Դանիէլեան նշանագրերը Հայաստան բերեց «ի հինգերորդի ամի թագաւորութեանն [Վռամշապհոյ]», աւելացնում է, որ Սուրբ Մեսրոպը Վռամշապուհի հրամանով դպրոց բացանելով եւ հայ մանուկներ ժողովելով, «երկամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, եւ նովին նշանագրովք տանէր:» Ապա (եր. 18) պատմում է, որ սուրբ Մեսրոպ Դանիէլեան նշանագրերը անբաւարար գտնելով, ինքն անձամբ իջնում է Միջագետք, որտեղ եւ իւր նշանագրերը հնարելով եւ Առակաց գիրքը հայերէն թարգմանելով, վերադառնում է Հայաստան «ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց Մեծաց:» Սորանից հետեւում է, որ Կորեան վերոյիշեալ երկու մակբայը ընդարձակ մտքով պէտք է հասկանալ: Ուրիշ հակասութիւն չկայ: Իսկ այն, որ Կորիւնը պատմում է, թէ Մեսրոպը Վռամշապուհի թագաւորութեան 5րդ տարին դպրոց բացանելով մօտ երկու տարի Դանիէլեան նշանագրերով կրթում է հայ մանուկներին, եւ ապա աւելացնում է, թէ նոյն տարին ինքն Մեսրոպ իջաւ Ասորիք, հակասութիւն չէ: Սուրբ

դառնում եւ Կորիւնի հետեւեալ խօսքերը. "Եւ դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Յազկերտի (= 406) առեալ սկիզբն:„ Եւ որովհետեւ սուրբ Սահակն եւս իւր մահկանացուն կնքեց "յառաջնումն ամի Յազկերտի որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին„, վեց ամիս սուրբ Մեսրոպից առաջ (եր. 44), դորանից հետեւում է, որ սուրբ Սահակն եւս մեռել է 439 թ.. Բայց թէ ո՛ր թուականին նա գահ բարձրացաւ, այդ բոլորովին հաստատ չէ: Միայն ստոյգ է, որ նա 393 թուականից առաջ կաթողիկոս էր, որովհետեւ այս թուականին սուրբ Մեսրոպը Վաղարշապատ գալով, նորան ներկայացաւ իբրեւ Հայոց կաթողիկոսի: Եթէ Խորենացին իւր տեղեկութիւնը, թէ սուրբ Սահակը կաթողիկոսել է 51 տարի, վստահելի աղբիւրից է վերցրել, վերջինս գահ բարձրացած պէտք է լինի 388 թուին: Հաստատ է նոյնպէս եւ Արշակունեաց հարստութեան բարձման թուականը, որ է 426 թ., որովհետեւ Ղազար Փարպեցին պատմում է,[1] որ Վռամ Ե. հայ նախարարների խնդրանօք, երբ Շապուհը, լսելով իւր հօր Յազկերտի մահը, Հայաստանը թողնելով գնացել էր Պարսկաստան եւ սպանուել, Հայոց վերայ թագաւորեցրեց Վռամշապուհի որդուն Արտա-

---

Մեսրոպը հէնց առաջին ամիսներում հասկացաւ Դանիէլեան նշանագրերի անօգտակարութիւնն, ուստի եւ դպրոցն իւր գործակիցներին յանձնելով, ինքն իջաւ Ասորիք:

[1] Ղազար. Պատմ. Ա. ժգ:

չէսին, որուն եւ գահընկէց արաւ նոյն հայ նախարարների խնդրանօք իւր թագաւորութեան վեցերորդ տարին։ Յայտնի է, որ Յազկերտ Ա. սպանուեցաւ 420 թուականին ամառը, որը լսելով Շապուհը, Հայաստանից շտապեցաւ Պարսկաստան։[1] Ուստի Արտաշէս վերջինը գահ է բարձրացել 420 թուից յետոյ, հաւանաբար 421 թ.։

Այժմ անցնենք Վռամշապուհի թագաւորութեանը։ Արդ ըստ մեզ ամենահաստատ կռուանն այստեղ Կորեան վկայութիւնն է, ըստ որում՝ Դանիէլեան նշանագրերը Հայաստան բերուեցան Վռամշապուհի թագաւորութեան 5րդ տարին։ Կորեան այս վկայութիւնը կրկնել է եւ Ղազար Փարպեցի։[2] Որովհետեւ, ինչպէս տեսանք, Դանիէլեան նշանագրերը Հայաստան բերուեցան 404 թուին, ուրեմն Վռամշապուհի թագաւորութեան սկիզբն եղել է 399ին։ Եւ որովհետեւ Ղազարը Վռամշապուհին տալիս է 21ամեայ թագաւորութիւն, ուրեմն նա թագաւորել է 399—419 թ.։ Սորանից հետեւում է, որ Խոսրովին, որ Վռամշապուհի մահից յետոյ 8 ամիս թագաւորեց, եւ Յազկերտ Ա. որդի Շապուհին, որ այս Խոսրովի մահից յետոյ Հայաստանի վերայ թագաւոր կարգուեցաւ, պէտք է տալ 419—420 ժամանակամիջոցը։ Եւ իրաւ Ղազարի հետեւեալ խօսքերը ցոյց են տալիս, որ վերոյիշեալ Շապուհի թագաւորու-

1 Ղազար, Պատմ. Ա, ժբ, “Արարատ„ 1895, եր. 386։
2 Ղազար, Պատմ. Վենետ. 1793 եր. 25։

թիւնը Հայոց վերայ ո՛չ թէ տարիներ է տեւել, ինչպէս Խորենացին է պատմում, այլ ամիսներ միայն: “Եւ սորա խորհելով զայս այսպէս„, ասում է Ղազարը,[1] “չգիտէր զբան սուրբ Հոգւոյն՝ որ ասէր, թէ Տէր ճանաչէ զխորհուրդ մարդկան, զի են ընդունայն: Որ փութանակի եւ արդեամբք վճիռ ետուն գրեալքն՝ իւրացն եղելոցն. քանզի ոչ եւս յերկարեցաւ ի թագաւորութեանն, մեռանէր Յազկերտ, ի նմին աւուր եւ զօրդի նորին Շապուհ, զոր ի տեղի Արշակունւոյն թագաւորեցոյց ի վերայ աշխարհիս, ի դրանն մարդկանէ ցաւով յարքունիքն սատակեցին:„ Եթէ Շապուհի թագաւորութիւնը տարիներ կամ նոյն իսկ շատ ամիսներ լինէր տեւած, Ղազարն անպատճառ պէտք է նշանակած լինէր այդ: Բայց հիմայ գանք խնդրի միւս կողմին: Ղազար Փարպեցին պատմում է, թէ Խոսրովը, Վռամշապուհի եղբայրն եւ նախորդը, գահ է բարձրացել եւ ապա գահընկէց է եղել Շապուհ Գ.-ի (384—389) հրամանով,[2] որից յետոյ եւ թագաւոր է կարգուել Վռամշապուհը:[3] Սորանից պէտք է եզրակացնել, որ Վռամշապուհը թագաւորած պէտք է լինի ո՛չ ուշ քան 389 թուականը: Բայց մենք վերեւ տեսանք, որ Վռամշապուհը համաձայն Կորեան եւ Ղազարի վկայութեան՝ գահ է բարձրացել 399 թուին, որովհետեւ նորա թագաւորութեան 5րդ տարին

---

1 Ղազ. Փարպեցի, Պատմ. Վենետ. 1793, եր. 35:
2 Ղազ. Փարպեցի, Պատմ. Ա. Զ:
3 Ղազար Փարպեցի, Պատմ. Ա. Թ:

համապատասխանում էր Դանիէլեան նշանագրերի գիւտին, որ է 404 թուականը: Ի՞նչպէս բացատրել այս. հակասո՞ւմ է արդեօք Ղազարն ինքն իրան եւ Կորեանը, թէ ոչ: Այդ խնդրի պարզաբանութեան համար մենք առաջ ենք բերում Ղազարի ուրիշ խորհրդաւոր եւ միանգամայն բացատրութեան կարօտ խօսքերը, որոնցից, չգիտեմ ինչ պատճառաւ, մինչեւ օրս բոլոր բանասէրները խուսափել են: Ղազարը պատմելով Հայոց նշանագրերի գիւտն եւ սուրբ Գրքի թարգմանութիւնը,[1] որ եղաւ Վռամշապուհի թագաւորութեան ժամանակ 406 թուին, աւելացնում է. "Եկաց յետ այսորիկ (ուրեմն 406 թուից յետոյ) Վռամշապուհ ամս քսան եւ մի:„ Արդ Ղազարի այս վկայութիւնը, թէ Վռամշապուհը Հայոց տառերի գիւտից յետոյ 21 տարի՝ ուրեմն 406—427 թ. թագաւորել է, պէտք է մերժել, որովհետեւ մենք վերեւ տեսանք, որ հէնց Ղազարի վկայութեան համաձայն Արտաշէս վերջերը գահընկէց եղաւ 426 թուին, որով եւ բարձաւ Արշակունեաց հարստութիւնը: Բայց ի՞նչ իմաստ ունին յետ այսորիկ բառերը, որի բացատրութիւնից, ինչպէս ասացինք, բոլոր բանասէրները խուսափել են: Մեր կարծիքով այս խօսքերը ցոյց են տալիս, որ Վռամշապուհն երկու անգամ գահակալել է, առաջին անգամ Շապուհ Գ.ի օրով իւր եղբօր գահընկէցութիւնից յետոյ, լոկ իբրեւ տեղակալ Հայոց թագաւորութեան, իսկ երկրորդ անգամ

1 Ղազար Փարպեցի. Պատմ. Ա, ժա:

Յազկերտ Ա.ի օրով, իբրեւ Ռուփուֆէր Արշակունեաց տոհմի, եւ Ղազարն Վռամշապուհի կառավարութեան այս էջերուն հաշուի հետ ծանօթ էր։ Ահա այսպէս ենք բացատրում մենք Ղազարի վերոյիշեալ խորհրդաւոր խօսքերը, որով վերանում են բոլոր ժամանակագրական անտեղութիւնները։ Թող իրենց աւելի ձեռնհաս զգացող անձինք աւելի յաջող բացատրութիւն տան։

Այս բոլոր խորհրդածութիւններից յետոյ պէտք է ընդունել՝ Վռամշապուհն իբրեւ տեղակալ Հայոց թագաւորութեան թագաւորում էր 389—399 թ., իբրեւ թագակիր արքայ՝ 399—419 թ., Խոսրովը (կրկին անգամ) եւ Շապուհը թագաւորեցին 319—420 թ., Արտաշէս վերջինը 421—426 թ.։

Ուստի եւ մեզ բոլորովին անհասկանալի է, թէ ինչ հիման վրայ Գաթըրճեան ասում է. "ի միաբանութենէ Խորենացւոյն ընդ Կորեան առանց տարակուսանաց (?!) գիտեմք զսկիզբն թագաւորութեան Վռամշապհոյ (391 կամ 392—414)։"[1] Գարագաշեանն իր "Քննական" պատմութեան մէջ[2] կրկնում է Գաթըրճեանի սխալները, տալով Վռամշապուհին 391—414 թ., Շապուհին 416—419/20 թ., անիշխանութեանը՝ 419—421 թ. եւ Արտաշիրին 422—428 թ.։ Զարմանալի՜ պատմագրութիւն։ Խորենացու վրայ հիմնուել եւ միեւնոյն

1 Տիեզերական Պատմ. Բ. 520, 522։

2 Մասն Գ., եր. 207, 213—215։

ժամանակ նորա վկայութիւններն այսպիսի կամայական փոփոխութեանց ենթարկել։

Մնում է մեզ խօսել 374—388 ժամանակամիջոցի մասին։ Ամենակարեւոր խնդիրն է որոշել, թէ Հայաստանն երբ բաժանուեցաւ Պարսից եւ Հռովմայեցւոց մէջ, որը Փաւստոս (Դ, ա) պատմում է։ Հայր Գաթըրճեան հաստատապէս ցոյց է տուել,[1] որ Հայաստանի բաժանման գործը կատարուել է 384 թուին, ուրեմն Թէոդոս Մեծի կայսրութեան ժամանակ, որին Մովսէս Խորենացին բարեացապարտ է անուանում եւ մեծ ոգեւորութեամբ եւ եռանդով այնքան գրուատում է։ Փաւստոսի պատմութեան վերոյիշեալ տեղից երեւում է, որ Արշակն եւ Վաղարշակը ինչպէս եւ Խոսրովը, Վռամշապուհի եղբայրը, թագաւորել են Հայաստանի բաժանումից (ուրեմն 384 թուից) առաջ։

Այժմ դառնանք Վարազդատի թագաւորութեանը։ Պապի տմարդի սպանութիւնը սաստիկ գրգռեց հայ իշխաններին Հռոմայեցւոց դէմ։ Նոքա այդ պատճառով Մուշեղ Մամիկոնեանի ձեռներիցութեամբ մի ծածուկ ժողով կազմեցին եւ խորհուրդ արին, թէ արդեօք իրենց թագաւորի մահուան համար Հռովմայեցիներից վրէժ առնեն թէ ոչ։ "Եւ ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, եւ ասեն. Ոչ կարեմք հեթանոսացի Պարսկացի ծառայու-

[1] Տիեզերական Պատմ. Բ. 519—320.

թիւն մտանել, եւ թշնամի առնել զթագաւորն Յունաց. եւ ոչ զերկոսեան թշնամի առնել, եւ ոչ առանց միոյ թիկանց կարեմք կեալ: Ապա եկաց այս բան ի խորհրդին, թէ զինչ եղեւ՝ ահա եղեւ, թող ծառայեսցուք թագաւորին Յունաց:„[1] Սորանից յետոյ շուտով Վարազդատը Վաղէս կայսեր հրամանով հէնց Պապի սպանութեան տարին (374 թ.) Հայաստան գալով, թագաւորեց Պապի տեղ: Որ նա Վաղէս կայսեր ձեռքում գործի եւ հլու հրամանակատար հանդիսացաւ, այդ շատ հասկանալի է: Ո՛չ պակաս հռոմէասէր հանդիսացաւ նաեւ նոր թագաւորի առաջին խորհրդականը, Մուշեղ Մամիկոնեանը, Հայոց սպարապետը, որը հռոմէական սպանների միջոցաւ բանակցելով Վաղէս կայսեր հետ, աշխատում էր նորան համոզել, որ նա Հայաստանի բոլոր գաւառներում նոր ամրոցներ կառուցանել տայ, հայ ազատներին կայսերական թոշակով զինուորէ, եւ այսպիսով Հայաստանը Շապուհի յարձակումների համար անմատչելի դարձնէ. եւ կայսրը խոստանում էր այս բոլորն էլ կատարել:[2]

Որ Շապուհ երկայնակեացը չէր կարող դէպ ի այս բոլորն անտարբեր գտնուիլ, այդ շատ հասկանալի է: Եւ ահա հէնց Պապի սպանութեան տարին Վաղէս կայսեր մօտ պատգամաւորներ ուղարկելով, նոր պայմաններ էր առաջարկում նորան, որոնցով ուզում էր իւր

---

1 Փաւստոս, Ե. լգ:

2 Փաւստոս, լդ:

իշխանութիւնը Հայաստանում վերականգնել: "Իսկ Սապորը, գրում է Ամմիանոսը,[1] իւր զօրքի առաջուայ պարտութիւնից յետոյ լսելով Պարայի (Պապի) մահը, որին չափազանց աշխատում էր իւր դաշնակիցը դարձնել, խորը խոցուեցաւ, բայց մեր զօրքի քաջութիւնից ակնածելով, մեծ նախապատրաստութիւններ էր տեսնում. Արրային իբրեւ պատգամաւոր կայսեր մօտ ուղարկելով, յորդորում էր՝ Հայաստանն իբրեւ պատճառ անընդհատ աղէտների՝ կատարելապէս ոչնչացնել: Իսկ եթէ այս անհաճոյ երեւայ, ուրիշ բան էր պահանջում, որ Իվերիայի [Վրաստանի] բաժանումը վերանայ, այստեղից հանուին հռոմէական պահապան զօրքերը եւ թոյլ տրուի Ասպակուրէսին միահեծան թագաւորելու, որին ինքը [Վրաց] ազգի վերայ իշխանաւոր էր կարգել:" Բայց Վաղէս կայսրն իրեն զօրեղ զգալով, բացէ ի բաց մերժեց Շապուհի այս պահանջները: "Այս բոլորին, շարունակում է Ամմիանոսը,[2] Վաղէսը պատասխանեց այն մտքով, որ ինքը չէ կարող ոչինչ նուազեցնել այն պայմաններից, որ փոխադարձական համաձայնութեամբ հաստատուեցան, այլ կը պաշտպանէ նոցա մեծ եռանդով:"

Բայց Շապուհը սորանով չբաւականացաւ: Նա նորից Վաղէսի մօտ թուղթ եւ պատգամաւորներ ուղարկելով, սպառնական ոճով յայտնում էր, որ Յովիանոսի ժամանակ կռած

1 Ammianus Marc., Rerum gestarum, l. XXX, 2.
2 Ammianus Marc., ibid.

դաշինքը (տես վերն երես 12) խախտուած է, եւ երկու տէրութեանց մէջ տիրող տարաձայնութեանց վերջ տալու համար հարկ է որ այդ դաշինքի վկաներից նոքա՝ որոնք դեռ եւս կենդանի են, Պարսկաստան գնան եւ իւր արքունիքի հետ բանակցին, “որովհետեւ գիտէր„, աւելացնում է Ամմիանոսը, “որ ոմանք արդէն վախճանուել են։„ Գաթըրճեան ուղիղ է նկատել,[1] որ Շապուհն այս բոլորն անելով ուզում էր ժամանակ շահել եւ պատերազմի պատրաստուել։ Վաղէս կայսրը Շապուհի պահանջը կատարելով, Պարսկաստան ուղարկեց Վիկտոր հեծելազօրքի հրամանատարին (magister equitum) եւ Ուրբիկիոս Միջագետքի զօրավարին (dux Mesopotamiae), որոնց պատուիրել էր Շապուհին չափաւորութեան հրաւիրել եւ ասել, որ նա խոստանալով չափաւոր լինել, այնուամենայնիւ հակառակ իւր խոստման՝ ուզում է Հայաստանը նուաճել անիրաւ կերպով եւ Հայերին թոյլ չէ տալիս, որ իրենց օրէնքներով եւ սահմանադրութեամբ կառավարուին։ Միեւնոյն ժամանակ կայսրն աւելացնում էր, որ ինքը չէ կարող Սաւրոմակէսին, այն ժամանակուայ Վրաստանի թագաւորին, որ Հռոմայեցւոց կողմնակիցն էր, առանց պաշտպանութեան թողնել, եթէ այդ հարկը պահանջէ։[2] Բայց կայսեր պատգամաւորներն անարժան գտնուեցան։ Նոքա, թերեւս Շապուհից կաշառուած, նորա բոլոր

---

1 Տիեզերական Պատմ. Բ. 513։

2 Ammianus Marc., Rerum gestarum l. RXX, 2,

պահանջներին ստրկաբար հնազանդուեցան, մինչեւ անգամ յաւակնութիւն ունեցան առանց կայսերը հարցնելու Հայաստանի բաժանման համար Շապուհի հետ բանակցել, եւ Շապուհը ճարպկութեամբ կարողացաւ նոցա համոզել, որ Հայաստանի մի քանի գաւառները անցնի Հռոմայեցւոց իշխանութեան ներքոյ այն պայմանով, որ կայսրը Հայաստանի միւս մասի եւ Վրաստանի գործերում այլեւս չխառնուի: Վաղէս կայսեր պատգամաւորները հէնց նոր էին վերադարձել, երբ նոցա յետեւից եկաւ եւ կայսերը ներկայացաւ Շապուհի պատգամաւորը Սուրէն, որ Պարսից տէրութեան մէջ երկրորդ անձն էր համարւում (Surena potestatis secundae post regem), «մատուցանելով կայսերը [Հայաստանի] այն գաւառները, որ մեր պատգամաւորները յաւակնել էին ստանալու:»[1]

Սակայն Վաղէսը Սուրէնին սիրով եւ առատաձեռնութեամբ ընդունելով, միեւնոյն ժամանակ յայտնեց որ իւր պատգամաւորները սխալուել են, եւ ինքը երբեք տրամադիր չէ Հայաստանն եւ Վրաստանը Պարսից տէրութեանը թողնելու, այլ զէնքով կը պաշտպանէ իւր իրաւունքները: Այս պատգամաւորութիւնն եղաւ ձմեռը 375 թուին, եւ Վաղէսն արդէն պատրաստութիւններ էր տեսնում՝ գարնանը բացուելուն պէս երեք զօրագնդերով Պարսից վերայ արշաւելու:[2] Այս բոլորը լսելով Շա-

[1] Ammianus Marc, ibid. XXX, 2,*.

[2] Ammianus Marc., Rerum gestarum, l. XXX, 2.

պուհը, "սրտմտեցաւ, պատուէր տուեց Սուրէնին, որպէս զի այն ամէնը, ինչ որ յանձն էին առել Վիկտոր դուքսն եւ Ուրբիցիոսը, սրով հետ նուաճէր, եթէ մէկը համարձակուէր ընդդիմանալ, եւ Սաւրոմակէսի պաշտպանութեան համար նշանակուած զօրքին խստութեամբ հալածէր։ Եւ այս ամէնը, ինչ որ վճռել էր, իրագործեց շուտով, առանց ընդդիմադրութեան կամ վրէժխնդրութեան հանդիպելու, որովհետեւ Հռոմայեցւոց տէրութեանը ուրիշ վտանգ էր սպառնում. Գոթերի վտանգը, որոնք անզուսպ յարձակումներով հեղեղում էին Թրակիան։"[1] Այս նոյն պատմագիրը պատմում է,[2] որ Վաղէսը Գոթերի յառաջացրած ծանր ճգնաժամի պատճառով ստիպուած լինելով իր լեգէոնները Հայաստանից հանել, շտապով վերյիշեալ Վիկտորին նորից Շապուհի մօտ ուղարկեց, „ut super Armeniae statu pro captu rerum componeret inpendentium," եւ աւելացնում է, որ 376 թուին Տրայանոս կայսեր հրամանով Հայաստանից հռոմէական լեգէոնները հանելով, արշաւեց Թրակիա Գոթերի դէմ։

Արդ թէպէտ Ամմիանոս այլեւս չէ ասում, թէ Վիկտորի բանակցութիւնները Շապուհի հետ ինչ հետեւանքներ ունեցան, բայց շատ հեշտ է հասկանալ, որ այս 376 թուին կռած դաշն Հռոմայեցւոց համար ոչ պակաս անպատուաբեր էր քան այն խայտառակ դաշն, որ կռուեցաւ

---

1 Ammianus Marc., ibid, XXX, 2,[2]–[8].

2 Ammianus Marc., ibid, XXXI, 7,[1]–[3].

363 թուին։ Այս անգամ եւս բախտն արքայից արքային օգնութեան հասաւ, եւ նա Վաղէսի նեղ վիճակից օգուտ քաղելով, Հայաստանը, որ 7 տարի (369—376) շարունակ Հռոմայեցւոց գերիշխանութեան տակ էր եղել, նորից առաւ իւր գերիշխանութեան տակ։

Դառնալով Փաւստոս Բիւզանդացուն, տեսնում ենք, որ նա կէտ առ կէտ հաստատում է Ամմիանոսի պատմածը։ Բացի սորանից մենք այստեղ ծանօթանում ենք պատմագրի ճաշակի եւ պատմութիւն գրելու եղանակի հետ. այն ինչոր արդիւնք է եղել Հռոմայեցւոց եւ Պարսից քաղաքականութեան եւ միջամտութեանց, Փաւստոսը վերագրում է Հայերին. իբր թէ ամէն բան Հայերն լինէին կատարած առանց արտաքին միջամտութեան։ Փաւստոսը Ամմիանոսին համաձայն պատմում է, ինչպէս տեսանք, որ Պապի մահից յետոյ եւս Հայաստանը մնաց Հռոմայեցւոց գերիշխանութեան տակ։ Բայց մինչդեռ ըստ Ամմիանոսի Գոթական պատերազմն էր, որ Վաղէսին ստիպեց 376 թուին Հայաստանն Պարսից ձեռքը տալ, ըստ Փաւստոսի անհեդեդ հսկան Մանուէլ Մամիկոնեանն է որ Մուշեղ սպարապետի մահուան վրէժխնդրութեամբ լցուած՝ Պարսկաստանից Հայաստան է գալիս, "նախ առանց հրամանի թագաւորին Վարազդատայ, յինքն յափշտակեաց զզօրավարութեան սպարապետութիւն„, ապա հալածում է հէնց իրան Վարազդատին, "եւ զկինն Պապայ արքայի զԶարմանդուխտ տիկին, հանդերձ որդւովք

Արշակունովք [Արշակաւ եւ Վաղարշակաւ] առեալ զնոսա ի տեղի թագաւորի կալեալ ի պատիւ շրջեցուցանէր, մեծաւ իմաստութեամբ եւ բազում յաջողութեամբ աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդէր:"[1] Եւ երբ որ Մանուէլը տեսնում է, որ "զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց թագաւորին Յունաց", Զարմանդուխտ թագուհու հետ հպատակութեան թուղթ է գրում եւ պատգամաւորներ է ուղարկում "առ թագաւորն Պարսից" եւ "զՍուրէն պարսիկ մի ի ձոխ նախարարացն [Պարսից թագաւորի]" Հայաստան բերելով, Հայաստանը նորա ձեռքն է տալիս:[2] Մարդ զարմանում է, թէ ի՞նչպէս կարող էր մի Մանուէլ, որչափ անհեղեդ եւ նա լինէր, Վարազդատ թագաւորին, որ թագաւորում էր Հայաստանում Վաղէս կայսեր հրամանով, հալածել, Հայաստանին այնպէս հեշտութեամբ տիրել եւ այլն: Արդ Ամմիանոսի պատմութեան ընթացքից երեւում է, որ Մանուէլն այս բոլորն արել է ոչ թէ ինքնագլուխ, այլ Շապուհ հզօր թագաւորի գաղտնի եւ յայտնի օգնութեամբ: Իսկ ազգային սնապարծութեամբ տոգորուած Փաւստոսն այս բոլորը վերագրել է Մամիկոնեան տան հերոսին:

Այս բոլորից հետեւում է, որ Վարազդատը թագաւորում էր 374—376 թ., հազիւ 3 տարի, եւ ոչ թէ 390—403 թ., ինչպէս ասում է Խորենացին: Մնում է բաց 377—383

1 Փաւստոս, Ե, լէ:

2 Փաւստոս, Ե, լը:

ժամանակամիջոցը, որը Սուրէն պարսկի մարզպանութեան եւ Մանուէլ Մամիկոնեանի ազգապետութեան ժամանակամիջոցն է, որոնց մասին Փաւստոսը պատմում է Դպր. Ե, գլ. լը—խդ: Եւ որովհետեւ Հայաստանի բաժանման թուականը միեւնոյն ժամանակ եւ Խոսրովի, Վռամշապուհի եղբօր, թագաւորութեան առաջին տարին է, ուրեմն Խոսրովը թագաւորում էր 384—389 թուականը, ուրեմն մօտ 5 տարի, ինչպէս ունի Խորենացին (միայն ոչ թէ 408—413 թուականը):

Կաթողիկոսների ժամանակագրութեանը գալով, պէտք է նկատել հետեւեալը: Բարսեղ Մեծը, Կեսարիոյ հայրապետը 372 թուին մի թուղթ է գրել արեւմտեան եպիսկոպոսներին, որի մէջ արեւելեան եպիսկոպոսների հետ յիշում է նաեւ մի Յուսիկի (Ἰωσάκης):[1] Հաւանական է, որ այս Յուսիկը այն Յուսիկ Աղբիանոսեանն է, որին Պապը Ներսէսի տեղ նշանակեց: Միեւնոյն ժամանակ Ներսէս Մեծը "յանուանէ„ յիշատակւում է այն 32 եպիսկոպոսների թւում, որոնք Բարսեղի ժամանակ 371 կամ 372 թուին Կեսարիայում ժողովուեցան:[2] Սորանից հետեւում է, որ Ներսէս Մեծի մահն եւ Յուսիկի գահակալութիւնը տեղի ունեցաւ 372 թուին. բայց Փաւստոսն այլ եւս չէ պատմում, թէ այս Յուսիկը քանի տարի կաթողիկոսեց: Այնուհետեւ Փաւստոսից (Դպր.

---

1 Marquart, Zur Kritik des Faustus, p. 224.

2 Գաթըրճեան, Տիեզերական Պատմ. Բ. 511:

Զ, բ) տեղեկանում ենք, որ Յուսիկի յաջորդը Զաւէն կաթողիկոսել է 3 տարի, եւ (Գպր. Զ, գ) Շահակ Կորճեան կաթողիկոսել է 2 տարի։ Ուրեմն 16ամեայ ժամանակամիջոցից, որ անցաւ Ներսէս Մեծի մահից մինչեւ Նորա որդու գահակալութիւնը (372—388), հանելով 5 տարի, կը մնայ 11 տարի, որ պէտք է բաժանել Յուսիկ Բ.ի եւ Ասպուրակիսի մէջ։

Այսպէս ուրեմն Խորենացու ժամանակագրութիւնը կեղծ եւ հակապատմական է, եւ Խորենացին ոչ միայն հակասում է Ամմիանոսին, այլեւ Կորեան, Ղազար Փարպեցուն եւ Եղիշէին, մի խօսքով բոլոր հաւատարիմ պատմագիրներին։ Այժմ անցնինք Խորենացու պատմութեան բովանդակութեանը։ Ինչպէս Փաւստոսը, այնպէս էլ Խորենացին Պապի մահից յետոյ պատմում է Վարազդատի թագաւորութիւնը, միայն թէ Խորենացին բաց է թողել հայ նախարարների ծածուկ խորհրդակցութիւնը՝ Մուշեղ Մամիկոնեանի նախաձեռնութեամբ՝ Պապի սպանութեան վերաբերմամբ, որովհետեւ նա Պապի սպանութեան պատմութիւնն այնպիսի փոփոխութեանց էր ենթարկել, որ այս խորհրդակցութիւնն աւելորդ եւ անտեղի պէտք է երեւար եթէ յիշէր։ Բայց որ Խորենացին Վարազդատի պատմութիւնը Փաւստոսից է առել, այդ երեւում էնաեւ բառացի նմանութիւններից։

Փաւստոս, Ե, ԻԴ—ԻԵ։	Խորենացի, Գ, Խ։
Յաղագս Թագաւորելոյն Վարազդատայ։ . . "Եւ եղեւ	Յաղագս Թագաւորելոյն Վարազդատայ։ . . "Բայց

յետ մահուն Պապայ թագաւորին Հայոց, թագաւորեցոյց թագաւորն Յունաց զՎարազդատ ոմն ի նորին տոհմէն Արշակունեաց, ի վերայ աշխարհին Հայոց։

Իսկ էր նա մանուկ յանդուգն, լի արութեամբ, կորովի ձեռօք, քաջ ասպետ, եւ ի մտաց թեթեւ, մանկաբարոյ տղայահանճար, մանկամիտ... Առաւել ունկն դնէր մանկոյն՝ որ ի տիոց հասակակից էին նորա, առաւել քան զծերոցն իմաստնոց՝ որք կարող էին զօգտակար խրատն մատուցանել նմա։„

Աւգոստոս բարեպաշտապարտն Թէոդոս... թագաւորեցոյց Հայոց փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն ի նորին տոհմէ Արշակունեաց։

Այս Վարազդատ էր տիով մանուկ, արտեայ, անձնեայ, ուժեղ, չէ միայն գործովք արութեան եւ յոյժ կորովի նետաձգութեամբ...,[1] Յաղագս որոյ արբեալ ի մանկութեանն արութիւնս, առ այսոքիւք եւ ի թագաւորութեանն, ոչ հնազանդէր խրատու վերակացութեան զօրացն Յունաց։„

Սակայն երկու պատմագիրների մէջ երեւացող տարբերութիւններն էլ մեծ են։ Ըստ Փաւստոսի Վարազդատի անկումն լինում է հետեւեալ կերպով. Վարազդատը շուտով խաղալիք է դառնում իր նախարարների ձեռքում եւ լսելով իր դայեակ Բատ Սահառունու,

1 Այստեղ առասպելասէր Խորենացին Փաւստոսի պատմածը Վարազդատի քաջութեան մասին՝ անտեղի առասպելներով ծանրաբեռնում է։ Վարազդատը օր ցերեկով առիւծներ է կոտորում. Ղանկուարտայ ազգից նորա վերայ 5 քաջեր են յարձակւում, բայց նա նոցա միմեանց յետեւից, հաւերի նման սուսերահար է անում. մի ինչոր բերդի վերայ յարձակուելով, նորա պարսպի վերայ կանգնած 17 մարդկանց նետահար անելով. “ի վայր հոսեաց միմեանց զկնի. իբր ի սաստիկ իմն մրրկէ վաղահասուկ թզենեաց„. աւազակների յետեւից այնպէս է վազում, որ նոցա զէնքընկէց լինելով, գալիս եւ անձնատուր են լինում Վարազդատին եւ այլն։ “Ընդ էր տեսանել նոր զոմն Աքիլլէս ընդ Սկամանդրոս գետ վազելով„ Խորենացին ընդօրինակել է կեղծ Կալիսթենէսից. տես “Հանդէս„ 1891 ապրիլ, եր. 104։

Մուշեղ Մամիկոնեանի, Հայոց սպարապետի, անձնական թշնամուն, սպանել է տալիս սպարապետին այն եղանակով, ինչ եղանակով Հռոմայեցիք սպանեցին Պապ թագաւորին։[1] Այն ժամանակ Մանուէլ եւ կոմս՝ Մամիկոնեան եղբայրները, որոնք երկար տարիներ Շապուհ արքայից արքայի զօրաբանակում ծառայել էին եւ մեծ քաջագործութիւններ էին արել, գալիս են Հայաստան, Մուշեղի մահուան համար Վարազդատից վրէժ առնելու։ Եւ այս՝ Մանուէլին յաջողւում է հեշտութեամբ։ Նա նախ առանց Վարազդատին հարցնելու դառնում է Մամիկոնեան տան նահապետը, ապա յափշտակում է սպարապետութիւնն եւ Կարնոյ դաշտում յաղթելով Վարազդատին, վռնդում է Հայաստանից եւ կառավարութեան ղեկն իր ձեռքն է առնում։[2] Արդէն վերեւ տեսանք, որ այս բոլորն եղել է Շապուհ արքայից արքայի օգնութեամբ եւ ցանկութեամբ, որ Փաւստոսը վերագրում է միայն Մանուէլին։ Իսկ Խորենացին, Մամիկոնեան տան երդուեալ թշնամին, Մանուէլի անունն եւ գործունէութիւնը բոլորովին լռութեան մատնելով, Վարազդատի անկումն վերագրում է Թէոդոս կայսերը։ Մենք արդէն տեսանք, որ Վարազդատի եւ Թէոդոս Մեծի ժամանակակցութիւնը մի անմիտ զրոյց է։ Իրաւ է, որ Վարազդատը "չոգաւ գնաց ի յերկիրն Յունաց. անդ եկաց որչափ եւ եկեաց,

1 Փաւստոս, Ե. լէ։
2 Փաւստոս, Ե. լէ։

եւ անդէն մեռաւ„,[1] բայց նա գնաց ոչ թէ իւր ազատ կամքով Թէոդոսի մօտ, այլ Շապուհից եւ Մանուէլից հալածուելով՝ իրեն թագաւորեցնող Վաղէսի մօտ։ Խորենացու պատմութեան այս գլխում բաց ի միւս ժամանակագրական մոլորութիւններից, որոնց մասին արդէն խօսել ենք, ուրիշ բան չէ պարունակւում։ Միայն նկատենք, որ այն ինչ որ Փաւստոսը (Ե, ԼԶ.) սպանուած Մուշեղ Մամիկոնեանի դիակի համար պատմում է, Խորենացին գողացել եւ յարմարեցրել է երեւակայական Արա գեղեցկի դիակի վերայ (Խոր. Ա, ԺԵ)։ Ահա այդ երկու պատմութեանց բառացի նմանութիւնները։

Փաւստոս։

"[Ընտանիք Մուշեղի] ասէին. Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, եւ վէր երբեք չէր առեալ... Իսկ կէսք յաւանելոյ այն ասէին նմա..., հանին եդին ի վերնատուն աշտարակի միոյ, ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, Առլեզք իջանեն եւ յարուցանեն զդա։ Պահապան կային եւ ակնունէին յարուցանելոյ մինչեւ նեխեցաւ մարմինն։ Ապա իջուցին յաշտարակէ անտի եւ լացին թաղեցին զնա որպէս օրէն էր։

Խորենացի։

"[Շամիրամ] հրամայէ տանել զնա (sc. զԱրա) ի վերնատուն ապարանիցն... ասէ. Հրամայեցի աստուածոցն իմոց լիզուլ զվէրս նորա, եւ կենդանասցի։ Միանգամայն եւ ակնունէր դիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրա։ Իսկ եփերեալ ընդ նորա, հրամայեաց ընկենուլ ի վիհ մի եւ ծածկել... համբաւէ զնմանէ այսպէս. լիզեալ աստուածոցն զԱրա եւ կենդանացուցեալ...։„

Այնուհետեւ Խորենացին Մամիկոնեան տան դիւցազն Մանուէլի սխրագործութիւնները,

---

1 Փաւստոս, անդ։

ինչպէս Սուրէն պարսիկ զօրավարին հալածելը, միւս պարսիկ զօրավարներին յաղթելը, նորա փառաւոր ազգապետութիւնը եւ Դամեայ խաղաղութիւնը, որ պատմում է Փաւստոս, (Դպր. Ե, լը—խբ) լռութեան տալով եւ Մեհրուժան Արծրունու սպանութիւնն էլ կեղծելով („Հանդէս„ 1898. եր. . . .), հետեւեալ գլխում (Գ, խա) այլայլում է Արշակի եւ Վաղարշակի թագաւորութեան պատմութիւնը: Փաւստոս, (Ե, խդ) պատմում է, որ Մանուէլ Մամիկոնեան սպարապետը քաջութեամբ պարսիկ յարձակումները յետ մղելով եւ Մեհրուժանին էլ սպանելով, „Տայր զդուստր իւր Վարդանդուխտ կին Արշակայ մանկանն Արշակունւոյ եւ փեսայ իւր առնէր զնա: Առնէր հարսանիս եւ եղբօր նորին Վաղարշակայ, եւ տայր նմա զդուստր ազատին Բագրատունւոյ ի Սպեր գաւառէ, որ թագաւորին թագակապքն լեալ էին ի բնէ ազգին թագաւորութեան Արշակունւոյ. եւ մեծապէս արարեալ հարսանիսն ամենայն երկիրն Հայոց, ցնծացեալք խնդացեալք էին ընդ մեծ խնդութիւն ուրախութեան: Ապա յետ այսորիկ դարձեալ ի մի վայր ժողովեալ զաշխարհ ամենայն զմարդիկ երկրին Հայոց, եւ թագաւորեցոյց զմանուկն զԱրշակ երկրին Հայոց եւ զՎաղարշակ երկրորդ նմին: Եւ ընդ այն եւս ցնծացեալ առնէին մեծապէս ուրախութիւն եւ ցնծութիւն ամենայն երկիրն Հայոց: Ապա յետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ զախտ հիւանդութեան մա-

հուան,» եւ պատմում է Մանուէլի մահը: Մամիկոնեան տան աննման հերոսը մահուան անկողնում ողբում է, որ իրեն չվիճակուեցաւ մեռնել գոռ պատերազմի դաշտում հայրենիքի եւ եկեղեցու փառքի համար, այլ «զօրէն անասնոյ» մեռնում է «զվատթար մահ մահճաց:» Արդ հարկաւո՞ր է ասել, որ Բագրատունեաց տան սարկամիտ պատմագիրը ոչ մի կերպ չէր կարող յիշել Մամիկոնեան տան այս փառքը: Եւ ահա՛ նա Մանուէլի դերը խլելով, բաժանում է Թէոդոս Մեծի, երեւակայական Սահակ ասպետի եւ Բարկէն Սիւնեաց նահապետի մէջ, Թէոդոսի յատկացնելով Պապի որդկերաց թագաւորեցնելու, Բարկէն Սիւնուն, որը Մանուէլի նիզակակիցն էր.[1] Արշակի աներութեան, իսկ Սահակ ասպետին՝ Մանուէլի մահուան դերը: «Ապա փոխանակ Վարազդատայ», ասում է Խորենացին, «թագաւորեցոյց Հայոց Թէոդոս Մեծ զերկուս որդիսն Պապայ՝ զԱրշակ եւ զՎաղարշակ... Որ եկին կալան զաշխարհս, եւ տիրեցին սմա արիաբար մարտիւք ընդ Պարսս: Եւ առին իւրեանց կանայս՝ Արշակ զդուստր Բարկան Սիւնեաց նահապետի, եւ Վաղարշակ՝ զդուստր Սահակայ ասպետի, որ ի նմին ամի վախճանեցաւ:» Որպիսի՜ ճշդապահութիւն: Ծերունի պատմագիրը չէ մոռանում նորա մահն եւս յիշելու: Իսկ այն որ Խորենացին պատմում է Թէոդոսի մասին, թէ. «Մեծն Թէոդոս ելեալ ի

---

1 Փաւստոս, Ե. խդ:

պատերազմ, ի Մեդուլանն հիւանդացեալ մեռաւ», եւ այլն Խորենացին բառ առ բառ ընդօրինակել է Մաղաղասի պատմութիւնից։[1]

Հետեւեալ գլխում (Գ, խբ) Խորենացին աղաւաղում է Փաւստոսի պատմութեան հետեւեալ գլուխը (Դպր. Զ, ա)։ Մենք արդէն ցոյց տուինք, (վերեւ, եր. 144,) որ Խորենացու պատմածը Հայաստանի բաժանման մասին անվարկ է։

Այսպիսով մենք վերջացրինք այն ինչ որ ծրագրել էինք մեր շարադրութեան յառաջաբանում, որ էր Փաւստոս Դպր. Գ, բ — Դպր. Զ, ժզ. եւ Խորենացի Գիրք Գ, բ—խբ համեմատութիւնը։ Նկատենք նաեւ, որ Խորենացին այնուհետեւ ըստ իւր ճաշակի փոփոխութեանց է ենթարկում Կորիւն Աքանչելու եւ Ղազար Փարպեցու պատմութիւնը։ Բայց դորա մասին թերեւս յետոյ կարողանանք խօսել։

---

1 «Հանդէս» 1894. փետր. եր. 64։



ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ա. Գալէմքեարեան Հ. Գրիգորիս Վ., Ուսումնասիրութիւնք Լեհահայոց դատաստանագրոյն. 1. Պիշոֆ, Լեհահայոց հին իրաւունքը: 2. Գուլէր. Իրաւունք Հայոց: 1890: 8° Երես՝ 85+59: Ֆր. 1.25

Բ. Մենեվիշեան Հ. Գաբրիէլ. Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիւզեանց: 1890: 8° Երես 50 (պատկերազարդ:) Ֆր. 1.—

Գ. Տաշեան Հ. Յակովբոս, Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ գրոց: 1891: 8° Երես՝ ԺԱ+159: Ֆր. 1.25

Դ. Դեմետրիոս Տանի Արեւելեան Հայք ի Պուքովինա: Թրգմ. Հ. Գ. Վ. Գալէմքեարեան: 1891: 8° Երես՝ 79: Ֆր. —.85

Ե. Տաշեան Հ. Յակովբոս Վ., Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի: 1892: 8° Երես՝ Դ+272: Ֆր. 3.—

Զ. Ալպերդ Տրմէլ եւ Գ. Փիսոն, Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1892: 8° Երես՝ 82: Ֆր. 1.—

Է. Մառ Նիկ., Ամառնային ուղեւորութիւնից դէպ ի Հայս: Թրգմ. Ռուփինոս Անտիեան: 1892: 8° Երես՝ 89: Ֆր. 1.25

Ը. Գարիէր Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ: Հտ. Ա.: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1893: 8° Երես՝ Ժ+51: Ֆր. 1.—

Թ. Գալէմքեարեան Հ. Գրիգորիս Վ., Պատմութիւն հայ լրագրութեան: Հտ. Ա. 1794–1860: 1893: 8° Երես՝ 232 (Լուսանկարով): Ֆր. 2.50

Ժ. Կոնիբիր Փր. Կ., Քննութիւնք զրոց Դաւթի Անյաղթի: Թրգմ. եւ յաւ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1893: 8° Երես Է+92: Ֆր. 1.25

ԺԱ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ 1680—1779: 1893: 8° Երես Ժ+533 (1 գնկատիպ.): Ֆր. 4.50

ԺԲ. Խաչաթեան Գր., Զենոբ Գլակ, համեմատական ուսումնասիրութիւն: 1893: 8° Երես 78: Ֆր. 1.—

ԺԳ. Տէր-Մովսիսեան Փարսադան, Հայ գիւղական տունը: Թրգմ. Հ. Բ. Վ. Պիլէզիկճեան: 1894: 8° Երես 103 (6 տախտակ՝ 55 պատկ.): Ֆր. 2.—

ԺԴ. Գարիթէր Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ. Հտ. Բ. կամ Յաւելուած: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1894: 8° Երես ԺԱ+43: Ֆր. 1.—

ԺԵ. Տաշեան Հ. Յ. Վ., Ուսումնասիրութիւնք հայերէն փոխառեալ բառից: Ա. Հ. Հիւպշման, Սեմական փոխառեալ բառեր հին հայերէնի մէջ: Բ. Փրոբէլման Կ., Յունական փոխառեալ բառեր հայերէնի մէջ: Գ. Հ. Հիւպշման, Հայկական Յատուկ անուանք: 1894: 8° Երես 9+145: Ֆր. 2.—

ԺԶ. Տաշեան Հ. Յակովբոս Վ., Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք: Հտ. Ա. Ա—Զ: 1895: 8° Երես ԺԲ+294: Ֆր. 3.60

ԺԷ. Տաշեան Հ. Յակովբոս Վ., Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ Գ. Փէթթէրի, ի մի ամփոփուած եւ թարգմանուած հանդերձ ծանօթութեամբք: 1895: 8° Երես 202: Ֆր. 2.50

ԺԸ. Տիգրեան Կ., Սեւ ծովու ռուսական եզերքը: 1895: 8° Երես 192: Ֆր. 2.—

ԺԹ. Գովրիկեան Հ. Գրիգոր Վ., Դրանսիլուանիոյ Հայոց Մետրապոլիսը կամ Նկարագիր Կերլա Հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս: 1896: 8° Երես Թ+352: Ֆր. 3.60

Ի. Տաշեան Հ. Յակովբոս Վ., Վարդապետութիւն առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը, Թուղթ Յակոբայ առ Կոդրատոս եւ Կանոնք Թադդէի: 1896: 8° Երես Թ+442: Ֆր. 6.—

ԻԱ. Տոմաշէկ Վ., Սասուն եւ Տիգրիսի աղբերաց սահմանները: Պատմական եւ տեղագրական հետազօտութիւն: Մասն Առաջին՝ Պատմական տեղեկութիւնք Սասնոյ վրայ: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկճեան: 1896: 8° Է+62: Փր. 1.—

ԻԲ. Կարրիէր Ա., Երգարու զրոյցը Մովսէս Խորենացւոյ Պատմութեան մէջ. Թրգմ. Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիշեան: 1897. 8° էջ ԺԶ+107: Փր. 1.50

ԻԳ. Յովնանեան Հ. Ղ., Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ: Ուսումնասիրութիւնք եւ քաղուածներ. Մասն Ա. Ռամկօրէն մատենագրութիւնք: Տետր Ա: 1897, 8° էջ Ը+272: Փր. 4.—

ԻԴ. Յովնանեան Հ. Ղ., Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի եւն: Տետր Բ: 1897: 8° էջ Ա—Ը+273—522: Փր. 3.—

ԻԵ. Գէլցէր Հ., Համառօտ պատմութիւն Հայոց: Թրգմ. Հ. Գր. Վ. Գալէմքեարեան: Յաւելուածք թարգմանչին՝ 1. Ցանկ 1895—1897 Հայոց կոտորածներու առթիւ լոյս տեսած գրքերու: 2. Գաւազանագիրք Կաթողիկոսաց եւ Պատրիարքաց Հայոց: 1897 8° էջ Ը+130: Փր. 1.50

ԻԶ. Մէնէվիշեան Հ. Գաբրիէլ Վ., Գիրք (կամ յօղուած) գրելու արուեստը: Նորուս հեղինակներուն ուղղեալ քանի մը կարեւոր ակնարկութիւններ: Յաւելուած՝ Գիրք կարդալու արուեստը: 1898: 8° էջ Է+123: Փր. 1.25

ԻԷ. Խալաթեան Գր., Մ. Խորենացու նորագոյն աղբիւրների մասին քննադատական ուսումնասիրութիւնք: 1898: 8°, 56 էջ: Փր. 1.—

ԻԸ. Տաշեան Հ. Յ., Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ: Ուսումնասիրութիւն Հայոց գրչութեան արուեստին: (10 գունատիպ պատկերով): 1898: 8° ԺԱ+202 էջ: Փր. 2.50

ԻԹ. Դաղբաշեան Յ., Փաւստոս Բիւզանդացի եւ իւր պատմութեան խարդախողը: Մ. Խորենացու աղբիւրների ուսումնասիրութիւն: 1898, 8° 175 էջ: Փր. 2.50
